Էջմիածին

1981

Բ

ԱՄԱԳ



ԼԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրվար

1981

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ ժողովրդի համար ազգային-եկեղեցական մեծագույն տոներից մեկն է 451 թվականին «Վասն Յիսուսի և վասն հայրենեաց» մղված Ավարայրի հերոսամարտի պանծալի հիշատակի ոգեկոչմանը նվիրված Վարդանանց տոնը:

Այդ դյուցազնամարտը շուրջ մեկ ու կես հազարամյակ ոգեկան մեծ ուժ և ավյուն է ներշնչել մեր ժողովրդի զավակներին տարբեր ժամանակներում, օրհասական ամեն մի պահի:

Եվ այսօր Վարդանանց հայրենասիրական ոգու կենդանության իրավ վկայություն է ավանդաբար ամեն տարի առանձնակի ոգևորությամբ նշվող Վարդանանց ազգային-հայրենասիրական ու եկեղեցական մեծ տոնը:

Այդ օրը միաժամանակ նշվում է նաև Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Սույն թվականի փետրվարի 26-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Հայաստանյայց եկեղեցիների աղոթաբույր կամարների ներքո հնչում են «Նորահրաշ» և «Արիացեալք» հոգեղից շարականները:

Մայր տաճարում առավոտյան հանդիսավոր ժամերգությունից հետո, ժամը 10.30-ին, Ավագ խորանի վրա սկսվում է հանդիսավոր ս. պատարագի մատուցումը: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Պատարագի դպրաց բաժնի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի ուսանողների երգչախումբը:

Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատավոր բազմությամբ, որոնք եկել են կրկին նորոգելու ազգային-հայրենասիրական իրենց ուխտը՝ հավատարիմ մնալու համար մեր ժողովրդական ու ազգային հարուստ ավանդներին:

Ժամը 11.30-ին Մայր տաճարի զանգակների ղողանջի ներքո, եկեղեցական թափորով Մայր տաճար է առաջնորդվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Լուռ է Մայր տաճարը: Օրվա խորհուրդը համակել է բոլորին: Եվ ահա սրբազան պատարագի ավարտից հետո պատարագիչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը Իջման Ս. Սեղանից խոսում է հայրենաշունչ մի քարոզ՝ «Արիանն մարտիրոսաց հիմն Եկեղեցւոյ» բնաբանով՝ վեր հանելով Վարդանանց հերոսամարտի կատարած մեծ դերը մեր ժողովրդի պատմության ընթացքում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ կատարվում է Հայրապետական մաղթանքի արարողություն, որով և ավարտվում է եկեղեցուց ներս կատարվող արարողությունը:

Ս. պատարագից հետո, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագա-

հությամբ, սկսվում է Վարդանանց տոնին նվիրված հանդիսությունը, որը կազմակերպել էր հոգևոր ճեմարանի տեսչությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մտավորականության ներկայացուցիչներ, ուխտավորներ և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունն սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով, որից հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը:

Ապա հանդիսության բացման հետևյալ գեղեցիկ խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը.

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ Տ. ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ է մարտնչել իր գոյության պահպանության համար, կանգնել անդունդի եզրին, մահվան դեմ առ դեմ, իր հոգևոր-մշակութային արժեքները ձեռքին, երբեմն էլ ոտաբոբիկ և լքված բոլորի կողմից, սակայն միշտ իր ներքին ոգեկան ուժով փյունիկի պես հարություն է առել և հրաշքներ գործել:

Ավարայրից առաջ և Ավարայրից հետո մենք ունեցել ենք քաջ թագավորներ, բանակներ զինավառ, որոնք կանգնել են օտար փոթորիկների դեմ և կուրծք տվել ահեղ հեղեղներին:

Սակայն այս ամենի միջից, իբրև խորհուրդը այս ամենի, իբրև հուշարձանը հայ ժողովրդի հայրենասիրության և իր հոգեկան արժեքների գնահատման, իբրև լուսե խորան, դեպի երկինք է ձգվում Ավարայրի հերոսամարտը: Հայոց պատմության մեջ առաջին անգամ ժողովրդի բոլոր դասերը՝ հոգևորականներ, նախարարներ, շինականներ, միասիրտ ու միանամ, գնացին մահվան ընդառաջ, դեպի հերոսացում, դեպի սրբացում:

Հաճախ կարծվում է, թե քրիստոնեությունը ստրկության, լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ հայ ժողովուրդը Ավարայրով ապացուցեց, որ քրիստոնեությունը սխրանքի և հավերժության ուսմունք է:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերևս առաջին ու միակ ռազմական բախումն էր օտար ուժերի դեմ, ուր բախվեցին լույսի և խավարի, կյանքի և մահվան, հավատի և հավատուրացության, հայրենասիրության և ստրկացման իրարամերժ գաղափարները, ուր ճշտվում էր մեկ անգամ ևս Հիսուսի՝ մեռնելով ապրելու պատգամը:

Մաշտոցը Աստծուն խոսեցրեց հայերենով:

Ղևոնդը Հիսուսին պաշտպանեց իր կյանքի կենդանի պատարագով:

Վարդանը հայրենիքը և քրիստոնեությունը սրբագործեց իր կարմիր արյունով:

Ավարայրը մեր հոգու վիթխարի ընդվզումն էր: Այնտեղ ոչ միայն մեր ռազմական ուժն էր մարտնչում: Այնտեղ զինվորյալ էին բոլորը՝ մտքի և հոգու, լույսի և Ավետարանի, հողի և հայրենիքի մշակներն էին կռվի դաշտ իջել, նրանք, որ իրենց ամբողջ կյանքում լույս էին երազել, գրքեր գրել, մագաղաթներ ծաղկել, տաճարներ կառուցել, Ավարայր էին իջել իրենց էությունը, լույսի իրենց պաշտամունքը խավարի ճանկերից փրկելու համար:

Եվ դարեր անցան:
Ամեն դար բերեց իր Ավարայրը:
Ամեն դար իր Վարդանը ունեցավ:
Ամեն դար ունեցավ իր Ղևոնդը:
Մեր կյանքի իմաստը Ավարայրի խորհրդի հաստատումը եղավ:

*
* *

Այսօր, երբ ոգեկոչում ենք հիշատակը Ս. Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց հայ մարտիկների, ունենք նաև սրտագին մի պարտականություն՝ շնորհավորելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Իր անվանակոչության տոնի առթիվ:

Եվ այս զուգադիպությունը պատահականություն չէ, որովհետև ինչպես անցյալի մեր բոլոր Հայրապետները, այսօր էլ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Ս. Ղևոնդյանց նախանձախնդրությամբ և Վարդանանց արիությամբ աշխատում է կենդանի և վառ պահել մեր անցյալի ուխտապահ հոգևորականության՝ Ղևոնդյանց քահանաների սուրբ ավանդությունը և հայ հավատի կրակը, ինչպես ի հայրենիս, այնպես էլ աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի հոգում՝ Վարդանանց հերոսամարտի ոգին և անսակաղնեղի հայրենասիրությունը:

Թող երկա՜ր, շատ երկա՜ր բազմի Հայոց Հայրապետը Լուսավորչի գահի վրա՝ ի պայծառություն Ղևոնդյանց արյունով ամրացած ու ծաղկած Հայ Եկեղեցու և ի բարօրություն հայրենյաց:

Վեհափառ Տեր, թույլ տվեք այս հանդիսության բոլոր մասնակիցների անունից կրկին անգամ շնորհավորել Ձեզ անկեղծ, ջերմ և նվիրված սրտով:

Իսկ այժմ, սիրելի հանդիսականներ, թույլ տվեք Ս. Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսությունը հայտարարել բացված:

Հրավիրում ենք օրվա բանախոս, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Բաբգեն Ներսիսյանին՝ կարդալու իր բանախոսությունը:

Այնուհետև Վարդանանց հերոսամարտին նվիրված հետևյալ բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Բաբգեն Ներսիսյանը:

ԲԱԲԳԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վարդան և Վարդանանք անունները հայ ժողովրդի շուրթերին դարեր ի վեր հնչում է որպես նվիրական սրբություն, հայրենասիրություն, հերոսություն, որպես հայրենիքի ու մեր սուրբ հավատի համար ընկած մարտիկների սուրբ նահատակություն:

Վարդանի և Վարդանանց կատարած անմահ գործը, նրանց մղած հերոսական պայքարը պարսից բռնապետության դեմ՝ քրիստոնեական հավատի պահպանման համար ու նրանց նահատակությունը Ավարայրի դաշտում՝ հանուն սուրբ հավատի և հայրենիքի, ճիշտ հասկանալու համար անհրաժեշտաբար պետք է ետադարձ մի հայացք ձգել հայ ժողովրդի հազարամյակներից եկող պատմության խորքերը, առավելապես Հայաստանում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանին:

Երբ Տրդատ Մեծի և Սուրբ Գրիգոր Լուսավորչի անմիջական նախաձեռնությամբ ու ջանքերով քրիստոնեությունը Դ դարի առաջին տասնամյակում Հայաստանում համընդհանուր և պետական կրոն դարձավ, փոխվեց հայ ժողովրդի, հայ պետության քաղաքական դրությունը իրար հետ մրցող և աշխարհակալ ձգտումներ ունեցող ժամանակի երկու հսկա պետությունների միջև: Դրանցից մեկը Բյուզանդական կայսրությունն էր, մյուսը՝ Պարսից Սասանյան պետությունը: Սրանցից յուրաքանչյուրը միտում էր Հայաստանի լիակատար տերը դառնալ:

Իրար հաջորդող պարսից արքաները և պետական գործիչները մեծ մտավախություն էին ապրում Հայաստանը կորցնելուց՝ քաջ գիտակցելով, որ եթե հայերը դավանանքով հունական կայսրությանն են հարում, վաղ թե ուշ, անշուշտ, ձգտելու են նաև քաղաքականապես մոտենալ նրանց:

Հենց այս մտավախությունն էլ ստիպում էր պարսիկներին ոչ մի խոչընդոտի առջև կանգ չառնել հայերին կրոնափոխ անելու և ըստ ամենայնի կրոնով և ազգային սովորություններով ու պետական կյանքով միացնել Պարսկաստանին և առմիշտ զրկել նրանց ազատ ու ինքնուրույն ազգային կյանքից: Հենց սրան էր ձգտում Շապուհը, այս նպատակն իրականացնելուն էր միտում Հազկերտ Բ-ը:

Նախանձելի չէր, իհարկե, նաև Բյուզանդական կայսրության տիրապետության տակ գտնվող Հայաստանի վիճակը: Այստեղ էլ հայերին ազգային և ինքնուրույն ազատ կյանքի նույն սարսափելի կորուստն էր սպառնում: Դեռ ավելին, սեփական դպրություն, գիր ու գրականություն չունենալու պատճառով հայերը ենթակա էին ազգային ինքնապահպանման ամենակարևոր պատվարը՝ սեփական լեզուն կորցնելու անհավոր վտանգին:

Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել, ումի՞ց փրկություն հայցել, ինչպե՞ս փրկել հայրենին ու ժողովուրդը կորստից: Ահա այս տանջող հարցն էր կապարի ծանրությամբ ճնշում ու մտահոգում ժամանակի հայ ժողովրդի ազգային վշտով տառապող նրա արժանավոր զավակներին, պետական գործիչներին և Մայր Եկեղեցու հոգևոր առաջնորդներին: Իսկ փրկության միջոցը, փրկության ելքը չէր երևում:

Միակ հույսը մնում էր ամենակարող Արարիչը, հայի նեղ օրերին նրան օգնության հասնող հայի Աստվածը: Եվ հույսը Աստծո վրա դրած հայ ժողովուրդը շարունակում էր ապրել: Եվ հույսը ապրեցնում էր:

Եվ քանի որ հույսն Աստված էր, Աստված չլքեց հային, կյանքի ու մահվան այդ օրհասական պահին Տիրոջ ամենակարող աջը զորավիգ եղավ հային, նրա բարերար ու փրկարար շունչը անցավ հայ ժողովրդի արժանավոր զավակ Սուրբ Մաշտոցին, և նա հայկական նշանագրերը ձեռքին լուսատու աստղի նման փայլեց հայոց երկնակամարում:

Հայ ժողովրդի արժանավոր զավակներ Սուրբ Սահակ Պարթևի ու Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անմիջական ջանքերով և հայոց Վռամշապուհ թագավորի աջակցությամբ Հայաստանում հաստատվեցին հայ մանուկների համար ազգային լեզվով կրթական

օջախներ, որոնք երկնեցին Ե դարի պատմիչ հսկաներին ու փիլիսոփաներին՝ Կորյուն Երանելուն, Եզնիկ փիլիսոփային, պատմահայր Խորենացուն, Հովսեփ Վայոցձորեցուն և քաղցրազրուցիկ Եղիշեին, որը Մամիկոնյան Դավիթ Երեցի խնդրանքով ձեռնամուխ եղավ Վարդանանց պատմությունը գրի առնելու գործին: Եվ նա իր գրիչը, իր ողջ ուժն ու եռանդը ի սպաս դրեց հայ ժողովրդի գոյության և հավատքի համար Վարդանանց մղած իրավացի և արդար պատերազմն ու ժամանակաշրջանը գրի առնելուն, որը ոչ թե պատմություն, այլ բանաստեղծություն է՝ լի քնարական սրտաբուխ զեղումներով, որի նպատակն է «նեղ օրերում սիրելիների համար միսիթարություն, հուսացողների համար հույս և քաջերին քաջալերություն լինելը»: Այն գրված է ցույց տալու համար ինչպես ժամանակակիցներին, այնպես էլ գալիք սերունդներին, որ մարդու և ժողովրդի համար ամենից արժեքավոր բարիքը, ամենանվիրական զգացմունքն ու ամենաբարձր պարգևը վերուստ տրված ազատությունն է, իսկ ամենից սիրելին՝ հայրենիքը, որի պաշտպանության համար պետք չէ խնայել ոչ մեկ բան, զոհաբերել ամեն ինչ, ինչպես զոհաբերեց Վարդանը, նույնիսկ իր կյանքը:

Անմահացնելով Վարդանի ու Վարդանանց մղած սուրբ պատերազմը և այդ պատերազմում նահատակվածներին, անմահացավ և ինքը՝ Եղիշեն, որպես դեպքերի անմիջական մասնակցի, և սերունդներին հասավ որպես Ավարայրը երգող պլպուլի, որպես քաղցրազրուցիկ Եղիշե՝ քաջ գիտակցելով, որ «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»: Հետևաբար ավելի լավ է, որ մարդ «Աչոք լինի կույր, քան՝ մտոք»:

Եվ որովհետև Եղիշեն պայծառ միտք ուներ և քաջ գիտակցում էր հայ ժողովրդի համար Հազկերտի անավոր ու կորստաբեր նենգ միտումները, ուստի ցասումով գրում է.

«Մերթ շանթում, գալարվում էր ինչպես մի թունավոր օձ, մերթ ձգվում, մունչում էր ինչպես զայրացած առյուծ, ճմլվում ու թապլլկտվում էր խարդախ մտադրությամբ»:

Հազկերտը իր հավատարիմ ծառա Դենշապուհին հայոց երկիր ուղարկեց: Սա հայոց ողջ երկիրը աշխարհագիր արեց, իբր թե հարկերը և այրուձիի ծանրությունը թեթևացնելու նպատակով:

Իսկ հայկական այրուձին տարել էր Պարսկաստան նույնպես նենգ միտումով, նախ Հայաստանի ռազմական հզորությունը թուլացնելու և իր թշնամիների դեմ պատերազմելու այն դիվային մտածումով, որ եթե կոտորեն՝ թշնամիներ կկոտորեն, իսկ եթե կոտորվեն՝ թշնամիներ կկոտորվեն:

Այնինչ աշխարհագրից հետո երկրի հարկը և հայկական այրուձիի ծախքը ոչ միայն չթեթևացրեց, այլև ավելի ծանրացրեց:

Այնուհետև բռնացավ Եկեղեցու ազատության վրա և հարկի տակ դրեց անգամ վանքերում բնակվող միայնակյացներին:

Նախարարներին բանաարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց: Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե քանդի միաբանությունը հայոց աշխարհի և Եկեղեցու ուխտը ցրի:

Չնայած այս բոլոր դժնդակ ու դիվային գործերին և հարկերի անասելի ծանրությանը, որը առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբարո հարիշտակելով այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին՝ թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը:

Եվ երբ տեսան, որ այս ամենով չկարողացան ոչ միայն հայերին ետ կանգնեցնել և նույնիսկ շեղել իրենց հավատից, այլ ընդհակառակը, նրանք էլ առավել են միաբանվում և երդվում աներեր ու հաստատուն մնալ իրենց հավատին և, հանուն Քրիստոսի սիրո, մեծ համբերությամբ տանում են բոլոր կարգի նեղությունները ու չարչարանքները, այդ ամենից առավել գրգռված ու մոլեգնած Հազկերտը իր զաղտնի փայփայած միտումները կենսագործելու համար անցավ բացահայտ բռնության և հրաման տվեց մոգերին ու մոգպետներին՝ գրել և հայոց աշխարհ ուղարկել դավանափոխության չարագուշակ ու դժնդակ սպառնալից թուղթը:

Իսկ երբ ստացավ «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված» հաստատուն ու վճռական մերժողական պատասխանը, այնժամ մոլեգնած ու փրփրած շահը սպառնալից հրամայական հրովարտակով հայ նախարարներին արքունի դուռը կանչեց՝ մերժողական պատասխանի համար խստագույնս պատժելու միտումով:

Ու հայ մեծամեծերից լսեց. «Այն, որ ապանդ ենք ստացել մեր նախնիներից՝ մեր հայրենիքը, մեր ազատությունը, մեր իշխանությունը, դա չենք տա ոչ ոքի և ետ չենք կանգնի մեր քրիստոնեական հավատից»:

«Եթե թագավորը իմաստությունն իրեն աթոռակից չունի, չի կարող իր վիճակի մեջ

վայելուչ լինել»—գրում է Եղիշեն դառնացած հոգով:

Եվ որովհետև Հազկերտի աթոռակիցը ոչ թե իմաստությունն էր, այլ դիվային չարությունը, հետևաբար հայ նախարարները որոշում են առերես ուրանալ իրենց հավատը, մինչև հայրենի հող, հայոց աշխարհ վերադառնալը:

Հայ նախարարների դավանափոխության լուրը Հայաստան աշխարհ է հասնում: Հայոց աշխարհի բոլոր կողմերից հավաքվեցին մեծ բազմությամբ այր ու կին, շինական և ազատ, քահանա և միայնակյաց և զինվորագրվեցին հանուն Քրիստոսի հավատի և վճիռ կայացրին.

«Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել Աստծու պատվիրանի ուխտից: Հայրը չխնայի որդուն և որդին չակնածի հոր պատվից: Կինը կռվի իր ամուսնու հետ և ծառան դիմադրի իր տիրոջը: Աստվածային օրենքը թագավորի ամեն բանում և նույն օրենքից հանցավորներն ստանան իրենց դատապարտությունն ու արժանի պատիժը»:

Իսկ մոգպետը, իր շուրջը կատարվածից սարսափած, ասում էր.

«Թողեք գրեմ և ցույց տամ մեծ թագավորին, որ ձեռք վերցնի այսպիսի առաջարկություններից, որովհետև եթե աստվածներն իրենք էլ օգնության գան, հնարավոր չէ, որ Հայաստանում հաստատություն գտնի մոգական կրոնը: Մարդիկ, որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկյուղ են կրում, ո՛չ հարստությունը բանի տեղ են դնում: Եվ վերջապես, բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կյանքից, ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել»:

Միակ ելքը՝ Հայ Եկեղեցու շուրջ համախմբվելն էր: Եվ ողջ հայ ժողովուրդը, Քրիստոսի հավատքին հավատարիմ, համախմբվեց սպարապետ Վարդան Մամիկոնյանի և Եկեղեցու շուրջ:

Հայաստան ուղարկված Հազկերտի բանակն ու մոգերը ջախջախվեցին և դուրս շպրտվեցին Հայաստանից:

Իսկ գալիքը՝ անսպասելին, Ավարայրը դեռ առջևում էր:

Թագավորի հրամանը մերժելու և Անգղի դեպքերի վրեժը լուծելու համար պարսից զորաբանակը, փղերի երամակներով ու Մատյան գնդով, մոգերի ու մոգպետների և ամբողջ հեթանոս բազմության հետ առաջ խաղաց և սև ամպի նման եկավ ու հայոց աշխարհի վրա կախվեց:

Իսկ հայոց բանակը, ձիավոր ու հետևակ, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, Տղմուտ գետի ափ Արտազ գավառի Ավարայրի դաշտ հասավ:

Նշանավոր զորավարի ու հայրենասերի համար ռամիկը հայրենի աշխարհը և զորքը էր: Փորձության ժամին հայրենիքի փրկությունը տեսնում էր ժողովրդի իմաստության ու սխրագործության մեջ:

Պարսիկ բռնակալները իրենց բարբարոսական քաղաքականության միջոցով ձգտում էին ծունկի բերել, հնազանդեցնել ժողովրդին, ստիպել ուրանալու քրիստոնեական հավատը:

Սակայն նրանց արյունարբու քաղաքականությունը ոչ թե ընկճում, այլ ավելի ու ավելի է բորբոքում և ուժեղացնում ցասումն ու բողոքը ինչպես օտարերկրյա բռնակալների, այնպես էլ հայ դավաճան նախարարների դեմ:

Ծանր էր փոքրաթիվ հայերի համար կռվել իրենցից թվով մի քանի անգամ գերազանց թշնամու դեմ: Ցավալի ու ծանր էր մանավանդ այն հանգամանքը, որ թշնամուն միացել էին նաև Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցին և նրա համախոհ մի քանի իշխաններն իրենց զորքերով:

Թշնամին հարափոփոխ, դավադրորեն դասավորում էր իր զորագունդը:

Զանգված առ զանգված մթնում էր նա, լցվում, թանձրանում, տարածվում:

Ծավալվում և տեղավորվում էր նաև հայոց զորաբանակը, որը տարածվեց և պատնեշի նման փակեց թշնամու ճանապարհը:

Վերջապես երկու կողմերի շեփորները ազդարարեցին ճակատամարտի սկիզբը:

Սանձակոծ ձիանք, ամեհի փղեր
Հողն էին դոփում ոտով անհամբեր...
Հանկարծ բանակից դուրս եկավ Վարդան
Ու ահեղ կռվին տվեց նա նշան...
Նա քաջ էր մարմնով, հոգով էլ վեհանձ:

Եվ վեհանձնաբար էլ հայոց զորագնդերը առաջնորդեց ի մարտ:

Մեծ տագնապ և անչափ իրարանցման աղետ կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում:

Հայոց այրուձին անցավ գետը և մեծ զորությամբ հարձակվեց: Նրան հետևեցին և հետիոտն գնդերը:

Ասես երկրաշարժ եղավ, գետինը շարժվեց, ցնցահարվեցին զորաբանակները: Բազմահազար զինվորներ և զենքեր գործի անցան:

Լսվեցին զենքերի շառաչյունները, նվաղցին, սուլեցին նետերը գլուխների վրա, շարքերի մեջ և ամենուր:

Բարձրացան առաջին ճիչերը, նետաձիգ-

ների մոմոցներն ու նետալարերի ճայթյունները:

Պարսից զորքի աջ թևը ընկրկեց, տագնապ ու իրարանցում ընկավ նրանց մեջ, և ջարդվելով խուճապահար սառանց սկսեց, սինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց, ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած փախուստ տվեց:

Կռվի ամենաթեժ ու ծանր պահն էր: Ընկնում էին և հայ քաջերը:

Կռվում էին նիզակով, սրով:

Կռիվը հետզհետե դժոխային էր դառնում:

Վարդանը շրջապատվում էր անհույս, բայց հարատևում էր:

Նա խախտում է ընդունված ռազմակարգը, ճահճով գրոհում է թշնամու վրա, թույլ չտալով, որ թշնամու աջ ու ձախ թևերը շրջապատեն իրեն:

Նա փոքրաթիվ ջոկատով գնում է մեռնելու, բայց գիտակցված ու նպատակային մահով, գազանին խոցելու և արյունաքամ անելու միտումով:

Եվ մեծ հայրենասերն ու հմուտ զորավարն ընկավ անհավասար մարտում: Նա հերոսաբար նահատակվեց՝ իր քաջությամբ ու հայրենասիրությամբ վառ օրինակ հանդիսանալով գալիք ապագա սերունդներին:

Իսկ Ավարայրի պլպուլը՝ Եղիշեն, արձանագրում է.

«Որովհետև ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով երկու կողմերն էլ պարտություն կրեցին»:

Վարդանի՝ հայրենիքի նկատմամբ ունեցած անսահման սերը փոխանցվեց գալիք սերունդներին դարեր ու հազարամյակներ:

Ավարայրից հետո շատ անգամ չար ամպեր կուտակվեցին զարկված ու զրկված հայոց աշխարհի գլխին, մեկը մյուսից ավելի մահասարսուռ, մեկը մյուսից ավելի դժնդակ ու կորստաբեր:

Հետագայում ավելի վատթարը եկավ, 15 թվի Եղեռնը, բայց և Մուսա լեռը, Վանա այրվող այգեստանները, հերոսական Սարդարապատը, Կարաբեքիր փաշան՝ իր զազրելի չար ու դիվային սև միտումներով: Բայց Վարդանի և Վարդանանց հայրենանվեր ոգին միշտ անբաժան մնաց հայ ժողովրդից, նա ապրեց հայ ժողովրդի գալիք սերունդների մեջ:

Վարդանանց ոգին և ամենակարող Արարչի շունչը միշտ էլ զորավիգ և նեցուկ եղան հայ ժողովրդին:

Հայոց աշխարհում նոր Վարդաններ ծնվեցին, Սասունցի Դավիթներ հրեղեն թրերով, Իսրայել Օրիներ խորունկ ու հեռատես, իմաստուն խոհերով, քաջ Դավիթ-Բեկեր, պողպատյա կամքով հայրենիքի ազատության համար մարտնչող ազնիվ ֆիդայիներ, անհոգելի Անդրանիկներ, անկոտրում կամք ունեցող Դանիել Բեկ Փիրումյաններ և վերջապես ցարիզմի լուծը հայոց աշխարհից դեն շպրտելու կոչնակ հնչեցնող բոցաշունչ հեղափոխականներ՝ Ստեփան Շահումյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Հայկ Բժշկյան (Գայ) և շատ ու շատ այլ հայրենանվեր քաջազուններ, որոնք պատմության տարբեր ժամանակամիջոցներում հայոց աշխարհի օրհասական պահերին Վարդանի նման պողպատյա բռունցք դարձրին հային, և հայրենի հողն ու աշխարհը իր դյուցազուն և հայրենանվեր զավակների ու ամենակարող Արարչի օգնությամբ փրկվեց հրդեհների ճարակից և առասպելական փյունիկ թռչունի նման կրակի բոցերից ելավ, ելավ նոր գեղեցկությամբ ու փառքով, վառ և լուսավոր:

Բոլոր կարգի նենգ ու ստոր թշնամիների չար միտումները ի դերև ելան, հօդս ցնդեցին, իսկ հայոց աշխարհը կանգուն մնաց և այսօր էլ Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված շարունակում է բարգավաճել: Եվ աշխարհով մեկ ապրված հայության համար Հայաստանը այսօր դարձել է ոչ թե բույսի շող, երազ, այլ հսկա ուժ ու ապավեն և պարծանք համայն հայության համար:

Այսօրվա ծաղկող Հայաստանի քաղաքամայր Երևանում շատ հայրենանվեր անվանի դեմքերի արձանների հետ վեր է խոյանում նաև Վարդան Մամիկոնյանի արձանը՝ սուրը ձեռքին, Ավարայրի դաշտում թշնամու վրա խոյանալու պահին, որպես ծաղկող Հայաստանի հարատևության և անպարտելիության խորհրդանշան:

Փառք ու պատիվ նրան, մեր վերածնված Մայր Հայաստանին, որպես հայ ժողովրդի միասնական հավատի ներշնչողի:

Հավերժ փա՛ռք անցյալի օրհասական օրերին հայրենիքի ու հայոց հավատի պահպանության համար Ավարայրում և այլ հերոսամարտերում ընկած հայրենասեր բոլոր նահատակներին:

Բանախոսությունից անմիջապես հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը: Հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը օրվա խորհրդով ներշնչված մեծ ապրումով կատարում է ճեմարանի գրաբար լեզվի դասախոս պրն. Երվանդ Մելքոնյանի՝ Եղիշե պատմիչի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» պատմական երկի հի-

ման վրա խմբագրած ու կազմած գրական-երաժշտական ասքը (կոմպոզիցիա):

Ասքի կատարման ժամանակ, Եղիշեի հեղինակային խոսքի ընթերցմանը զուգահեռ, կարդացվում են Հազկերտ արքայի կատաղի զայրույթն արտահայտող խոսքերն ու Սիհրներսեհի սպառնացող հրովարտակը, որով թելադրվում է հայերին «կա՛մ ուրանալ իրենց կրոնը և դրական պատասխան տալ նամակին և կա՛մ էլ ներկայանալ Մեծ Դուռն արքայի»:

Ի պատասխան այս ամենի, հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը միախորհուրդ ընթերցում է հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտող մերժողական հետևյալ գիրը.

«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ հարված: Ձեր կողմից տանջանք, իսկ մեր կողմից հանձնառություն, ձեր սուրը և մեր պարանոցը»:

Ապա առանձին-առանձին ընթերցվում են Հովսեփ կաթողիկոսի, քաջարի Ղևոնդ երեցի և կաղնեբազուկ Վարդան զորավարի հորդորանքի ու քաջալերանքի հուժկու և ոգևորիչ խոսքերը, որոնք մղում են ողջ հայությանը՝ արյան գնով առաջնորդվել ի մարտ՝ հարազատ հայրենիքի ու ցանկալի կրոնի ազատության համար:

Ասքը համեմված էր նաև երաժշտական տարբեր հատվածներով: Այսպես, մեջ ընդ մեջ կատարվում են «Նորահարշ» շարականը և «Բամ փորոտան» ու «Լռեց...» հայրենաշունչ երգերը:

Գեղարվեստական բաժնի ավարտից հետո ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը հրավիրում է հանդիսությունը նախագահող Վեհափառ Հայրապետին տալու Իր օրհնության խոսքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
(26 փետրվարի 1981 թ.)

Նաև այս տարի Մեզ համար հոգեկան բացառիկ մխիթարություն եղավ՝ Սրբոց Վարդանանց հիշատակության օրին, ներկա գտնվելու նախ Մայր տաճարում արբազան արարողությանց և գոհաբանական մաղթանքին, և այստեղ հիմա այս հանդիսության՝ կազմակերպված մեր հոգևոր ճեմարանի տեսչության կողմից:

Կարծում ենք, այս զգացմունքը դուք ևս բաժանում եք, սիրելի ներկաներ, և գոհ եք, որ մասնակցում եք Մեզ հետ միասին այս հանդիսության:

Մենք գոհունակությամբ լսեցինք անշուշտ նաև եկեղեցում արտասանված քարոզը՝ տեսուչ տեր հոր կողմից, ինչպես նաև այստեղ արտասանված ճառը մեր դասախոսներից պրն. Բաբգեն Ներսիսյանի կողմից պատրաստված, որը Մեր վրա բացառիկ տպավորություն գործեց իր պատմական դեպքերը հարազատ և ճշգրիտ կերպով ներկայացնելու հանգամանքով, իր գեղարվեստական ճաշակով և մանավանդ բոցաշունչ, ջերմ հայրենասիրական ոգով:

Մաղթում ենք, որ ինչպես անցյալում և ինչպես հիմա, նաև հետագային մեր հոգևոր ճեմարանի դասախոսները նույն ոգեշնչումով և տեսիլքներով, գաղափարական ներշնչանքներով դաստիարակեն մեր նոր սերունդները, իբրև հավատավոր հոգիներ, իբրև հարազատ զավակները մեր ժողովրդին և իբրև անկաշառ հայրենասերներ:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, մոտ 3000-ամյա պատմության, ինչպես պատմաբանները մոտավորապես ճշտում են, կան երեք իրադարձություններ, որոնք մասնավոր կերպով բնորոշում են մեր ժողովրդի ազգային նկարագիրը, դիմագծությունը, բնորոշում են և բյուրեղացնում այնպես ամբողջական և կատարյալ կերպով, որ մնում են խորհրդանիշ և ուղեցույց մեր ժողովրդի համար բոլոր ժամանակներին ի զորու:

Այդ պատմական երեք իրադարձություններն են. առաջինը՝ չորրորդ դարու սկզբին քրիստոնեության ընդունումը համայն մեր ժողովրդի կողմից և պետական կրոն հռչակումը, Ս. Գրիգոր Լուսավորչի օրով: Երկրորդ իրադարձությունը՝ տառերի գյուտը, Ե դարու առաջին կեսին. տառերի գյուտը, Ս. Գրքի թարգմանությունը հայերեն լեզվի, և հետևաբար՝ սկզբնավորությունը հայ գրականության և նույնիսկ, Մենք մոռացում ենք ասել, սկզբնավորումը ընդհանրապես հայ մշակույթի: Որովհետև Մենք հավատում ենք, որ Ս. Մեսրոպ ոչ միայն հայ այբուբենը կազմավորեց և մյուս թարգմանիչների հետ հայերեն լեզվով թարգմանեց Աստվածաշունչը, այլ նաև այդ պահից ծնունդ առավ հայ մշակույթի զգացողությունը՝ ինքնուրույն հայկականի, և տարածվեց նաև ստեղծագործության մյուս բնագավառների վրա: Այդ իմաստով է, կարծում ենք, որ Ս. Մեսրոպը կարելի է նկատել նաև ընդհանրապես հայ մշակույթի սկզբնավորող: Վերջապես, երրորդ պատմական մեծ դեպքը, երկույթը՝ այդ հենց Վարդանանց հերոսամարտն է, որի մասին դուք լսեցիք արդեն և դասախոսության բովանդակությունից և քիչ առաջ՝ գեղարվես-

տական ներկայացումից, որ մեր ուսանողները ներկայացրին այնքան հաջող և հուզիչ կերպով, որի համար պետք է շնորհավորել կազմակերպիչներին:

Վարդանանց պատերազմը, որ ինչպես ինքը Եղիշեն էլ բնորոշում է, տարվեց հանուն հավատի և հանուն հայրենիքի, «Վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:

Այս երեք պատմական իրադարձությունները, որոնք շատ հեռու չեն իրարից, ընդամենը մի 150 տարվա պատմության տարածքի վրա գտնվելով, սխալ պիտի լիներ իրարից անջատ նկատել և անջատ հասկանալ: Նույնիսկ Մեր կարծիքով անջատ կարելի չէ հասկանալ: Երեքն էլ մեկ ամբողջություն են կազմում: Այդ երեք իրադարձություններն էլ խորհրդանշում են, ներկայացնում են, կատարելագույն ձևով և չափով, հայ ժողովրդի ոգեկանությունը, գաղափարականությունը: Հայ ժողովուրդը, հիշտ է, պատմականորեն ծնունդ է առել հավանաբար շուրջ 3000 և ավելի տարիներ մեզանից առաջ, բայց իսկապես, բառին ճշմարիտ իմաստով, ազգային իմաստով, ազգային գիտակցությամբ կազմավորման իմաստով, հայ ժողովուրդը իբրև այդպիսին ծնունդ առավ հենց Դ և Ե դարերի այդ ժամանակահատվածում, որի մասին խոսում ենք:

Եթե այդ իրադարձությունները տեղի չունենային այն ժամանակ, դժվար թե հայ ժողովուրդը իբրև այդպիսին հետագա դարերին կարողանար իր ինքնության պահպանիչ, իբրև ուրույն ստեղծագործ ոգեկան արժեք ներկայացնող վավերական ազգ լինել այս աշխարհի վրա:

Արդեն պետք է հավատանք պատմաբանների այն ուղիղ դատողության, թե «աշխարհի վրա չկան ազգություններ, այլ կան մշակույթներ»: Այսինքն՝ որ առանց ազգային ուրույն, ինքնադեմ մշակույթի ազգություն գոյություն չունի այս աշխարհի վրա: Այլ խոսքով՝ նրանք են վավերական ազգությունները և վավերական ժողովուրդները, որոնք վավերական սեփական, ինքնատիպ մշակույթ ունեն: Ահա այդ պրոցեսը կատարվեց մեր ժողովրդի կյանքում հիմնապես և վերջնականապես Դ դարու ընթացքին, մինչև Ե դարու կեսերը: Եվ այս Վարդանանց պատերազմը ևս անբաժանելի մասը կկազմե հայ ժողովրդի ոգեկանության, ավելին կարող ենք նույնիսկ ասել, թե նա հանդիսացավ գերագույն ապացույցը մահով իսկ այդ ոգեկանության, իրենք պաշտպանեցին և արյամբ կնքեցին ազգային իդեալները քրիստոնեության, մշակույթի և հայրենիքի:

Եվ պատմության ընթացքում հայտնի է մեզ բոլորիս, թե հայ ժողովուրդը հավատարիմ մնաց այդ երեք իրադարձությունների խորհուրդին և պատգամին: Նույնիսկ վատթարագույն պայմանների մեջ, հրաշքի համազոր իրադարձության մեջ մահացավ և հարություն առավ, վերածնվեց մեր ժողովուրդը նույն ոգեշնչումով և այսօր էլ նա շարունակում է ապրել և՛ մայր հայրենիքից ներս, և՛ արտասահմանում, բայց մանավանդ մայր երկրում՝ կերտելով իր նոր հայրենիքը, վերաշինելով այն և ծաղկեցնելով, կերտելով իր առավել պայծառ ապագան:

Եվ մենք այսօր փառք պետք է տանք Աստուծո, որ մեր երկրում խաղաղության պայմաններում, արդեն իբրև ազգություն, ինքնավստահ և ինքնահաստատ կարողանում ենք ոգեկոչել մեր անցյալը, մեր հերոսներին, և ոգեշնչվելով նրանցից, շարունակելու մեր աշխատանքը առավել եռանդով, առավել նպատակասլացությամբ և առավել հավատքով դեպի մեր սեփական ուժերը, առավել հավատքով դեպի մեր գալիքը:

Վարդանանք մեզ հետ են, մեզ հետ քայլում են, մեզ ներշնչում են, մեզ առաջնորդում և ապահովում մեր բոլոր արդար իղձերի ապագա իրականացումը:

Լույս և հավերժական փառք Վարդանանց սուրբ հիշատակին:

Վարդանանց նվիրված հանդիսությունը ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 15-ին, օրվա տոնի առթիվ, Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և այլ հյուրեր:

Իսկ ժամը 16-ին հոգևոր ճեմարանի բոլոր ուսանողները, ղեկավարությամբ ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանի, այցելում են Երևան և թարմ ծաղիկներ զետեղում ազգային մեծ հերոսի՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի հուշարձանին:

Խո՜ւնկ և օրհնությո՜ւն, հավերժ փա՜ռք հիշատակին հայրենիքի համար զոհված Վարդանանց հերոսամարտիկներին:

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 8-ին, առավոտյան ժամը 11-ին, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի ընտրության առթիվ, քաղաքամայր Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում, բազմահազար հավատացյալների ներկայությամբ, սկսվում է հանդիսավոր ս. պատարագը: Պատարագիչն է նորընտիր առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա են Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Արարատյան թեմի եկեղեցիների եկեղեցական խորհրդի նախագահները, վարչության անդամները և այլ հրավիրյալներ:

Ս. պատարագին ներկա է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 12-ին, եկեղեցու զանգակների ուրախ ղողանջի ներքո, «Հրաշափառ»-ով, տաճար է մուտք գործում և Իր գահին բազմում Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը:

Վեհին այս առթիվ ուղեկցում էին Մայր Աթոռի միաբաններ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը:

Տաճարում լռություն է: Եկեղեցու քառաձայն երկսեռ երգչախումբը հանդիսավորապես կատարում է Մ. Եկմալյանի Ս. Պատարագի երգեցողությունը:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը ընթերցում է Վեհափառ Հայրապետի 30 հունվար 1981 թվակիր սրբատառ կոնդակը՝ Տ. Արսեն եպս. Բերբերյանին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ նշանակելու վերաբերյալ (Հայրապետական սույն կոնդակը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1981 թվականի հունվար համարում, էջ 6):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո շնորհակալական ջերմ խոսքով հանդես է գալիս պատարագիչ սրբազանը:

Տ. ԱՐՍԵՆ ԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Երախտագիտական խոր զգացումներով ունկնդրեցինք հայրապետական Ձեր սրբատառ կոնդակը և նրա բովանդակության մեջ եղած ջերմ խոսքերը, որոնք իբրև պատգամ լուսավորելու են իմ հոգևոր կյանքի առաքելության ճանապարհը:

Սիրելի ներկաներ, այս սրբազան պատարագի ընթացքում ես վերհիշում եմ Հայոց Հայրապետին տված իմ խոստումը եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ, 1973 թվականի հոկտեմբերին, որի բովանդակությունը հետևյալն էր. խոստանում եմ և ուխտում՝ երբեք օրինազանց չլինել, Եկեղեցու կարգը չարհամարհել, այլ շարունակել խրատել իմ խնամքին հանձնված ժողովրդին, սովորեցնել և հորդորել նրանց պահպանելու աստվածատուր և եկեղեցական օրենքները և հնազանդվել հոգևոր իշխանությանը ու ընդհանրապես՝ իմ կոչումից ու աստիճանից բխող պարտականությունների համաձայն իմ կամքն ու խորհուրդները, իմ մտքի զորությունն ու իմ ջանքերը ուղղել հօգուտ իմ ժողովրդի և

նրանց հոգիների փրկությանը: Ուստի, այս ուխտի իմաստը խորապես գիտակցելով, այս սրբազան պահին հայցում եմ Ամենաբարձրյալին, որ առավել հոգևոր իմաստություն շնորհի ինձ՝ ամենայն սրբությամբ գործադրելու վերոհիշյալ սկզբունքները ինձ հանձնված ժողովրդի կյանքում՝ համագործակցությամբ իմ հոգևոր եղբայրների»:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, Քեզ կրկին հավաստիացնում եմ, որ Քեզ կյանքի օրինակով աշխատելու եմ միշտ վառ պահել մեր հավատացյալների հոգում սուրբ հավատքը, եկեղեցական ավանդությունները ու հայրենասիրական զգացումները, որոնք կոչված են մեր ժողովրդի կյանքը լուսավորելու:

Թույլ տվեք այս առթիվ մաղթել Քեզդ Սրբության կենաց երկար տարիներ՝ հովվելու մեր ժողովրդին, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, այն աստվածահաճո շնչով, որ հատուկ է Քեզ: Մեր մեծ և երանելի Հայրապետների շարքում Դուք Քեր արժանի տեղը գրավեցիք դեռևս Քեր կենդանության օրերին և երիտասարդ հասակում և դարձաք ոչ միայն մեր ժողովրդի ու հայրենիքի, այլև համաքրիստոնեական չափանիշով իրապես արժանավոր հովվապետ, և փառավորեցիք մեր ս. Եկեղեցին ու մեր պատվական ժողովուրդը:

Այնուհետև եկեղեցու Ավագ խորան է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը և տալիս Իր օրհնությունն ու պատգամը օրվա հանդիսության առիթով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ (8 փետրվար 1981 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի ժողովուրդ, այս առավոտ, այս պայծառ երկնքի լույսով հագեցած, գալիս ենք Ս. Էջմիածնից՝ ձեզ բերելու Աստուծո օրհնությունը:

Ս. Էջմիածինն այն վայրն է, այն սրբատեղին, որտեղից ճառագայթում է և շողարձակվում Աստուծո օրհնությունը մեր բոլոր եկեղեցիների վրա, ի Հայաստան և ի սփյուռքս աշխարհի, և համայն մեր հայ ազգի զավակների վրա, ուր որ էլ գտնվելիս լինեն նրանք աշխարհի ճանապարհների վրա:

Ահա այդ օրհնության խոսքով գալիս ենք Մենք այս առավոտ այստեղ, այս Ս. Սարգիս եկեղեցու կամարների ներքև հանդիսավոր մի առիթով:

Նախ Մենք կուզենք գոհություն տալ Աստուծո Ամենակալին, որ մանավանդ վերջին տասնամյակներին իր օգնականությամբ և իր օրհնությամբ նեցուկ հանդիսացավ մեզ՝ Մայր Աթոռիս, Հայաստանյայց Եկեղեցուն ի Հայաստան, որպեսզի Մեր բոլոր եկեղեցաշեն ծրագրերը քայլ առ քայլ կյանքի կոչվեն: Դուք, հայաստանցի հավատացյալներդ, տեղյակ եք մեր անցյալի ողբերգություններին և գիտեք, թե ամեն անգամ, երբ մեր հայրենի հողը և մեր ժողովուրդը տառապանքներ, հալածանքներ կրեցին՝ հաճախ նահատակվելով, այդ բոլոր դեպքերում նույն չափով և երբեմն նույնիսկ առավել չափով տուժեց, զոհվեց նաև մեր Եկեղեցին: Շատ անգամ նահատակվեցին մեր Եկեղեցու հոգևոր ապասավորները՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկավագներ: Այդ ժամանակները, փա՜ռք Տիրոջ, հեռացան մեզանից, և ահա այս վերջին տասնամյակներին, հայրենի վերաշինության թափին զուգահեռ, քայլ առ քայլ զարգացավ նաև եկեղեցական կյանքը, հոգևոր կյանքը, որի ականատեսներն եք դուք և վկաները:

Ահա այս հոգևոր-եկեղեցական առաքելության ճանապարհի վրա այսօր նոր մի էջ է բացվում Արարատյան թեմում, Արարատյան հայրապետական թեմում: Մենք դրժբախտությունը ունեցանք կորցնելու մի քանի ամիս առաջ Մեր փոխանորդին, հանգուցյալ Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանին: Նրա մահը եղավ անժամանակ և ողբերգական: Նա իր ուժերի լիության մեջ էր և սպասելի, որ տակավին մի քանի տասնամյակներ կարողանար իր ծառայությունները շարունակել: Ավա՜ղ, սակայն, ճակատագիրը այլ կերպ տնօրինեց, և նա հեռացավ մեզանից ընդմիշտ: Աստված լուսավորի նրա հոգին:

Առաջնորդական Աթոռը թափուր մնալով, Մեր առաջ խնդիր դրվեց, բնականաբար, ընտրել, նշանակել հաջորդին: Եվ մեր բոլորիս հայացքը կենտրոնացավ մեր երիտասարդ ուժերից գերաշնորհ Արսեն եպիսկոպոս Բերբերյանի վրա, որ վերջին տարիներին ձեռնհաս կերպով վարում էր Մայր Աթոռի դիվանապետի պատասխանատու պաշտոնը, և որից Մենք գոհ էինք: Բայց այս կացության մեջ առաջնահերթ կարևորություն ուներ Արարատյան թեմը: Արարատյան թեմը հայրապետական թեմ է ոչ միայն այն իմաստով, որ Հայրապետն է առաջնորդը, այլ նաև այն իմաստով, որ առաջինն է մեր թեմերի շարքին: Պատմականորեն իրապես առաջին վիճակն է, որովհետև Արարատյան աշխարհն է, որ Հիսուս

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՔԱՐՈԶԵԼԻՍ (1981 Թ. ՓԵՏՐՎԱՐ 8)

իջավ, և որի հողի վրա հիմնվեց Ս. Էջմիածին, Հայաստանյայց Եկեղեցին, Կաթողիկոսություն, Հայրապետություն:

Ահա այս պատասխանատու պաշտոնը Մենք վստահում ենք սիրելի Արսեն եպիսկոպոսին: Մենք գիտենք, Մեր անձնական փորձառությունից, որ աշխատող մարդը, մի մեծ գաղափարի նվիրված անձը իր աշխատանքի ճանապարհին իր ուժերը կրկնապատկում է: Նույնիսկ անկախ իր կամքից, իրերի բնական բերումով, պարտականության գիտակցությունը և աշխատանքի թափը մղում են նրան դեպի այնպիսի իրագործումներ, որոնց ինքն էլ գուցե չէր սպասում մինչ այդ պաշտոնին կոչվելը:

Մարդիկ ինչպես հակամետ են երբեմն-երբեմն սայթաքելու և հետ նահանջելու և նույնիսկ կործանվելու, այլասերելու, նույնչափով մարդիկ ընդունակ են նաև ինքզինքին գերազանցելու, իրենց ուժերը բազմապատկելու և նվիրվելու ամբողջական ուժերով, մեծ գաղափարների իրագործման:

Ուրիշ խոսքով, գուցե ավելի գործնական ու հասկանալի ձևով պիտի ասենք ձեզ, որ մարդիկ իրենց աշխատանքի ճանապարհին ներշնչվում են ու նոր մարդիկ են դառնում: Որտեղի՞ց գալիս է այդ ներշնչանքը՝ երկնքից, մեր հոգուց, մեր շրջապատից, դժվար է ճշտել, բայց ներշնչանքը կա:

Ճշմարիտ գաղափարապաշտ մարդիկ իրենց առաքելության ճանապարհին ներշնչվում են, այո՛, պայծառակերպվում են և իրենց ուժերը բազմապատկում և գերազանցում են իրենց իրենց:

Ահա այս մեծ, հրաշակերտ ներշնչանքը մատթում ենք Մենք ձեզ, սիրելի սրբազան: Մենք վստահ ենք նաև, որ սրբազանը՝ Արսեն Եպիսկոպոս. իր աշխատանքի ճանապարհին պիտի վայելե ոչ միայն Մեր անձնական վստահությունը և քաջալերանքը, այլ նաև մեր պետական իշխանության, որի բարձրագույն վերաբերմունքից շատ բան կախում ունի անկասկած մեր եկեղեցական կյանքում:

Եվ այստեղ Մենք պետք է խղճի պարտք համարենք վկայելու ձեր առջև մի անգամ ևս, որ այս վերջին տարիների բոլոր Մեր եկեղեցական-շինարարական, կազմակերպչական, հոգևոր-կրթական և այլ իրագործումները մեծ չափով կպարտինք նաև մեր հայրենի հարազատ պետության բարյացակամ և քաջալեր վերաբերմունքին:

Այս պահին Մենք կոչ ենք անում Արարատյան թեմի քահանայից դասին, վարչական մարմիններին, որ ձեր շուրջ համախմբված՝ մեկ սիրտ, մեկ հոգի, համերաշխ, փոխադարձ հարգանքով և մանավանդ կարգապահությամբ, կարողանան ամեն մեկը իր աշխատանքը արժեվորելու ընդհանուր գործի հառաջդիմության ի խնդիր:

Եկեղեցու կամարների ներքև, ինչպես Պողոս առաքյալն է պատգամում, մեր բոլոր գործերը, ամեն ինչը պետք է լինեն սիրով:

Եթե Եկեղեցու կյանքից սերը և փոխադարձ հարգանքը և կարգապահությունը պակսի, դա կնշանակի մի տեսակ սրբապղծում, մի տեսակ ժխտում հոգևոր կյանքի առաքելության: Մեր առաքելությունը հիմնականում բարոյական է, ընտանեկան, ընկերային, հայրենական կյանքի մեջ:

Ավետարանը՝ Հիսուսի Ավետարանը հիմնականում մարդկային կյանքի բարեկարգման, ազնվացման օրենք է: Այս գիտակցությամբ է, որ մենք հոգևորականներս իրավունք կունենանք այս վեղարը և այս սքեմը կրելու, խաչը ձեռքներիս առնելու և Ավետարանի անունով խոսելու: Այլապես, ինչպես Պողոս առաքյալն է ասում, կլինենք ոչ թե հոգևորականներ, այլ խոսքի վաճառականներ: Հեռու մեզանից այդպիսի առևտուր:

Սիրելի ժողովուրդ, այս պահին թույլ տվեք ձեր բոլորի ներկայության շնորհավորել մեր սիրելի սրբազանին և, իբրև նյութական արտահայտություն Մեր այս շնորհավորանքի և բարեմաղթությունների, իր կրծքին զետեղել այս գեղեցիկ պանակեն:

Սիրելի սրբազան, ահավասիկ ձեր Մայր Եկեղեցին՝ Ս. Սարգիսը, ահավասիկ ձեր ժողովուրդը, ձեր հոգևոր դասը, ձեր վարչական մարմինները, պաշտոնեությունը, նրանց հետ ձեռք-ձեռքի տված դեպի հառաջ ընթացեք և մխիթարեցեք ու ուրախացրեք Մեզ ձեր հաջողություններով:

Աստված Ձեզ օրհնի և միշտ օգնական և պահապան լինի:

Իսկ ձեզ, սիրելի ժողովուրդ, բոլորիդ բաշխում ենք Աստուծո օրհնությունը և աղոթում ենք ձեր բոլորի քաջառողջության, ձեր բոլորի հայրենանվեր գործոց հաջողության համար:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն»:

Քարոզից հետո Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես Արսեն եպիսկոպոսին է հանձնում առաջնորդական գավազանը:

Հավարտ ս. պատարագի բոլորը շնորհավորում են Արսեն սրբազանին և բարե-

մաղթություններ կատարում՝ իր նոր պաշտոնի հաջողությունների համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ԱՆԻ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Պատարագից հետո, ժամը 14.30-ին, Երևանի «Անի» հյուրանոցի ռեստորանում Արարատյան թեմի թեմական խորհուրդը, եկեղեցական վարչությունները կազմակերպել էին ընդունելություն՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի և Արարատյան հայրապետական թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդի:

Ընդունելությանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, Արարատյան թեմի եկեղեցիների եկեղեցական խորհրդի նախագահները, վարչության անդամները, քահանայից դասը, ծանոթ մտավորականներ և այլ հյուրեր՝ շուրջ 60 հոգի:

Վեհափառ Հայրապետը օրհնում է սեղանի աղն ու հացը, որից հետո ուխտի և պատրաստակամ ծառայության խոսքով հանդես է գալիս Արսեն եպս. Բերբերյանը:

Տ. ԱՐՍԵՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Վեհափառ Տեր,

Քիչ առաջ Ս. Սարգիս եկեղեցում բոլորս ներկա եղանք հոգեպարար արարողության և մի քանի րոպեներ ապրեցինք հոգևոր ուրախության պահեր: Եվ դա շարունակվում է նաև այս վայրկյանիս այստեղ:

Վեհափառ Հայրապետը Իր քարոզի մեջ, եկեղեցում, ճշմարտացիորեն շեշտեց, թե Հայ Եկեղեցվո այսօրվա հաջողությունների մեծ մասը մենք կպարտինք մեր հայրենի կառավարության բարյացակամ օժանդակության՝ շինարարության և այլ գծով:

Անշուշտ սա անժխտելի ճշմարտություն է, և մենք բոլորս, իբրև գիտակից քաղաքացիները մեր երկրի, բարձր ենք գնահատում մեր հայրենի կառավարության այս ջերմ վերաբերմունքը Հայ Եկեղեցու նկատմամբ:

Մեզ կմնա մի ուրիշ ճշմարտություն ևս ասել, որ Վեհափառը չէր ասի, որովհետև դա Իր անձի մասին է: Մեր Եկեղեցու ծաղկումը կպարտինք նաև Նրա անձնական հմայքին, Նրա անձնավորությանը, Նրա բազմակողմանի եռանդուն գործունեությանը:

Հետևաբար, ալպիսի հանդիսավոր առիթով մնում է մեզ միայն ու միայն մաղթել և աղոթել, որ Վեհափառ Հայրապետը երկար և երկար տարիներ շարունակի Իր եկեղեցաշեն ու հայրենանվեր առաքելությունը: Թող Աստված լսի մեր աղոթքները, և մեր Հայրապետը մշտապես քաջառողջ երկար տարիներ հովվի ու առաջնորդի մեզ բոլորիս ի փառս մեր Մայր Եկեղեցու և ի փառս Սուրբ Էջմիածնի և ի մխիթարություն համայն հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Իր խոսքը ավարտելուց հետո Արսեն սրբազանն առաջարկում է, որ բոլորը հոտընկայս բաժակ բարձրացնեն Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կենաց առողջության և նորանոր ծրագրերի կենսագործման համար:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ (8 փետրվար 1981 թ.)

Եկեղեցու սրբազան արարողությունից հետո Մենք երջանիկ ենք ձեր մեջ գտնվելու, այստեղ՝ շրջապատված հոգևոր սպասավորներով, պետության ներկայացուցիչներով և Արարատյան թեմի ու Գերագույն հոգևոր խորհրդի, վարչական մարմինների անդամներով, ինչպես նաև շատ հարգարժան հյուրերով՝ փայլուն մտավորականներ Երևանից:

Այսօր, այս պահին, հատկապես ուզում ենք ողջունել ներկայությունը մեր պետական իշխանության ներկայացուցիչների՝ պրն. Ռուբեն Պարսամյանի և պրն. Անդրանիկ Հասրաթյանի, որոնք մեր եկեղեցական կյանքի բոլոր կարևոր պահերին Մեր կողքին են, մեզ քաջալերում են, մեզ օգնում են հաճախ:

Մենք, Եկեղեցի և հայ պետություն, ազգային-հայրենասիրական տեսակետով, մեկ ամբողջություն ենք կազմում: Աստված մի արասցե, որ Մենք բաժանվենք մեր պետության մտածելակերպից, մեր պետության շահերից, մեր պետության ծրագրերի գործադրությունից: Մենք անհայրենիք Եկեղեցի չենք: Մեր կրոնական հավատքն էլ անհայրենիք չէ: Մենք միայն այստեղ հայ հավատացյալ կարող ենք լինել:

Ահա այս զգացումներով ուզում ենք նորից անգամ ողջունել մեր պետական ներկայացուցիչների այստեղ ներկայությունը. մաղթել նրանց բարեհաջողություն և նրանց միջոցով փոխանցել մեր բարձր իշխանություններին Մեր հարգանքը և Մեր պատ-

բաստակամությունը՝ միշտ հայրենիքի կողքին լինելու, ամեն գնով, ամեն անգամ:

Մենք միայն մեր երկրի, մեր հայրենիքի շահերով պիտի ղեկավարվենք՝ առանց աջ-ձախ նայելու: Մեր երկրի շահը, մեր երկրի անվտանգությունը, մեր երկրի ապահովությունը և կյանքի հառաջդիմությունը մեր գերագույն մտասևեռումներն են:

Հայ հոգևորականի հոգուց, սրտից անբաժան է հայ հայրենիքի գիտակցությունը: Հայրենասիրություն՝ մեր այսօրվա Սովետական Հայաստանի հիմքերի վրա խարըսխված:

Վստահ ենք նաև, որ Արարատյան թեմի Մեր նոր փոխանորդը նույն զգացումներով և նույն գիտակցությամբ պիտի ղեկավարվի, ինչպես նրա բոլոր գործակիցները: Մենք խոստանում ենք, Մենք ցանկանում ենք սիրով հետևելու, որ բոլոր Մեր գործակիցները այս գիտակցությամբ գործեն մեկ մարդու նման:

Թույլ տվեք, պրն. Պարսամյան, Ձեզ քաջառողջություն մաղթել:

Կեցցե մեր վերածնված Հայրենիքը:

Եկեղեցաշեն փայլուն հաջողություններ ենք մաղթում գերաշնորհ Տեր Արսեն եպիսկոպոսին Աստուծո օգնականությամբ և օրհնությամբ:

Վեհափառ Հայրապետի ելույթից հետո, ընդունելության ժամանակ, առաջինը շնորհավորական խոսքով հանդես է գալիս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը՝ հաջողություններ մաղթելով Արարատյան թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանին:

Ապա սեղանի շուրջ Տ. Արսեն եպս. Բերբերյանին ողջույնի և շնորհավորական խոսք են ասում Երևանի Ս. Սարգիս եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ պրն. Վալտեր Արամյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի օգնական փոխանորդ Տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Կարպիս Կարագյանը, Ս. Սարգիս եկեղեցու ավագերեց Տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը, պրոֆ. Զավեն Դոլաբջյանը և ուրիշներ:

Ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի Գոհաբանական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Տ. Արսեն եպս. Բերբերյանին՝ բարեմաղթելով նրան առաջնորդական բեղմնավոր, հոգեշեն և հայրենանվեր գործունեություն՝ ի պայծառություն մեր Մայր Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արարաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ ՝ւ գտջիք, բախեցէ՛ք՝ և բացցին ձեզ» (Մատթ. Է 7) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 6-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

*
* *

Փետրվարի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ յաշխարհի» (Հովհ. Թ 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում «Ավետարանի հայ միջնադարյան մեկնությունները» թեմայով զեկուցում է հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

*
* *

Փետրվարի 13-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Մայր տաճարում տեղի է ունենում Տեառնընդառաջի նախատոնակի ժամերգություն՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, ճեմարանի մարզադաշտում վառվում է Տեառնընդառաջի ավանդական խարույկը:

*
* *

Փետրվարի 14-ին, շաբաթ.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, օրվա խորհրդի առթիվ ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

*
* *

Փետրվարի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս ո՛չ քաղցիցէ, և որ հաւատայ յիս ո՛չ երբեք ծարաւեսցի» (Հովհ. Զ 35) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Երևանում վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի նախկին անդամ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գրիգոր Արշակի Հակոբյանը:

Այս առթիվ Հայոց Հայրապետը ցավակցական հետևյալ գրությունն է ուղարկում 19 դեկտեմբեր թվագրով տիկին Հակոբյանին.

ՍԳԱԿԻՐ ՏԻԿԻՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Երևան

Այսօր վշտով լսեցինք Ձեր ամուսնու՝ վաստակավոր գրականագետ Գրիգոր Հակոբյանի վաղաժամ մահվան մասին և այսու ներկայացնում ենք Մեր խորին ցավակցությունը Ձեզ և Ձեր ընտանիքին:

Հանգուցյալը իր կյանքով, իր տաղանդով ու իր ողջ գրական գործունեությամբ անսահման սիրով ներծծված էր մեր ժողովրդին, մանավանդ վերջին տարիներին արժեքավոր գործեր հրապարակելով:

Նա կարևոր ծառայություն մատուցեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին տարիներ շարունակ իբրև անդամ Գերագույն հոգևոր խորհրդիս:

Հարգա՜նք և օրհնությո՜ւն Գրիգոր Հակոբյանի կյանքին ու բեղուն վաստակին և նրա արդար հոգուն:

Թող Տերը միշտ լուսավոր պահի Գրիգոր Հակոբյանի բարի հիշատակը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 փետրվար 1981 թ.

*
* *

Նույն օրը Վեհարանում տեղի է ունենում դասախոսություն՝ «Հայ ժողովրդի ծագումը» թեմայով: Դասախոսությամբ հանդես է գալիս լեզվաբան և Երևանի համալսարանի դասախոս, դոկտ., պրոֆ. Ռաֆայել Իշխանյանը: Նոր ուսումնասիրության լույսի տակ զեկուցողը հանգամանալից խոսքով փորձում է ապացուցել, որ հայերը բնիկներ են և ոչ թե՝ եկվոր, և որ մ. թ. ա. Զ հարյուրամյակից այս կողմ Հայկական բարձրավանդակի վրա հիշվող բոլոր պետությունները հայկական են: Իր այս դրույթը ապացուցելու համար հարգելի դասախոսը բերում է մի շարք փաստեր:

Վերջում հարգելի դասախոսը հանգամանորեն պատասխանում է ներկաների տված հարցերին:

Սույն դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Արիս եպս. Շիրվանյանը: Երևանի օդանավակայանում սրբազան հորը դիմավորում է Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 28-ին, շաբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է երեկոյան հանդիսավոր ժամերգություն, որի վերջում, Մեծ պահքի առիթով, «ծածկեն Սեղանն վարագուրիւ»:

Սկսվում է Մեծ պահոց հոգեշեն շրջանը:

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ



ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 26-ին, հինգշաբթի.—Տոն «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն...» և «Տօն անուանակոչութեան Նորին Վեհափառութեան Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց».

Վարդանանց պատմությունը կամ Ավարայրի ճակատամարտը, արձանագրված պատմիչ Եղիշեի կողմից Ե դարում, այսօր էլ խորին ակնածանք ու ամենաջերմ զգացումներ է արթնացնում ամեն մի հավատացյալի, ամեն մի հայի սրտում:

Ավարայրը եկեղեցական տոն լինելուց բացի, համազգային նշանակության տոն է: Ահա այս է պատճառը, որ Շիրակի թեմի կենտրոն Լենինականի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում հավաքվածները՝ թեմական և եկեղեցական խորհուրդներ, քահանայից դաս, հավատացյալ ժողովուրդ և այլ հրավիրյալներ, ում համար այս խորհուրդը այդպես թանկ է ու նաև անունն ու անձը Հայոց Հայրապետի այդպես սիրելի, եկել էին ներկա գտնվելու օրվա հանդիսությանը նվիրված հոգևոր համերգին՝ նախագահությանը ներքո Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի:

Ներկաներին իր խոսքն ուղղեց առաջնորդ սրբազանը՝ ներկայացնելով Վարդանանց խորհուրդը մեր ժողովրդի և Եկեղեցու կյանքում:

Տ. ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Այսօր եկեղեցական և համազգային մեծ տոն է՝ տարեդարձը Սրբոց Վարդանանց 1036 վկաների:

Հավաքվել ենք այստեղ՝ ուրախ և երջանիկ նշելու նաև անվանակոչության տոնը Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Այսօր երախտագիտության, բարի և վեհ զգացումների օր իսկ է, երբ մեր մտածումները ուղղված են դեպի Ս. Էջմիածինը, ուր առաջին անգամ 451 թ. շողաց սուրը Վարդանի, և դեպի Հայոց Հայրապետը, որը Ղևոնդյան ուխտապահ հոգևորականության օրինակով առաջնորդում է Հայոց Եկեղեցին խաղաղ ու ապահով:

Մենք, Շիրակի թեմի առաջնորդությունն և հավատացյալ ժողովուրդ, երախտապարտ ենք Հայոց Հայրապետին, Իր հոգածության և ուշադրության համար դեպի մեր համայնքը: Այդ սերն էր, որ հայրական վերաբերմունքով Հայոց Հայրապետի եկեղեցիս օժտվեց երաժշտական թանկարժեք մի գործիքով, որը երեք տարի առաջ եկավ այստեղ գեղեցկացնելու համար երգեցողությունը մեր ս. պատարագի:

Վազգեն Ա կաթողիկոսը մեր հոգևոր հայրն է՝ հովվապետ բարի և անձնդիր, նաև մեր այս շեն ու խաղաղ օրերի Հովսեփ կաթողիկոսը, հայրենի խաղաղ ու ապահով պալմաններում:

Վարդանանց պատերազմը միայն պատմություն կամ դյուցազնություն չէ, այլև ներշնչանքի աղբյուրը բոլոր դարերի համար, ոգեղեն մի ուժ, հրեղեն մի սյուն մեր հայրենիքի երկնակամարում հավիտյանս փայլող: Ավարայրը մղվեց, որպեսզի հայ ժողովուրդն ու Եկեղեցին միշտ լույս և կյանք ունենան, առաջադիմություն՝ մեզ դեպի ապագան տանող: Այո՛, այդ նաև նրանցով չէ՞ր, որ սերնդից սերունդ Ավարայրի խորհուրդը էլ ավելի նվիրականա-

ցավ և շարունակվեց, մինչև հայրենական վերածննդյան այս խոստումնալից օրերը, անչափ որքան դիպուկ է, ուրեմն, բանաստեղծի մտածումը թե՝

«Դարերը կանցնին՝ բայց Վարդանը քաջ,
Բայց Վարդանը Սուրբ կերթա միշտ
առաջ...»:

Չլիներ ոգին այս եկեղեցասեր և հայրենանվեր վկաների, չէր լինի ինչպես Ս. Էջմիածինը, այդպես էլ այս հայրենին, Հայաստանը, այսօր մոխիրներից հառնած, մարմնացումը մեր դարավոր ազգային հույսերի:

Թող այսուհետև էլ Վարդանանց հերոսների ու սրբերի ոգին դառնա ուղենիշն ու պայծառ աստղը մեր բոլոր մաքառումների, խոյանքների, հանուն Ս. Էջմիածնի և մեր վերածնած մայր հայրենիքի:

Ծնորհավորելով Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը, մաղթենք Նրան քաջառողջություն, երկար ու խաղաղ գահակալություն՝ արևշատ օրերով:

Հանդիսությանը բացառիկ շուք տվեց այդ առթիվ պատրաստված հոգևոր համերգը, եկեղեցուս քառաձայն խմբի կողմից՝ ղեկավարությամբ խմբավար Արամ Աղաբաբյանի: Հոգևոր համերգի ծրագիրը պատրաստված էր ճաշակով: Ծրագրում կային Ներսես Ծնորհալին, Կոմիտաս վարդապետը, Մակար Եկմալյանը և արևմտաեվրոպական կոմպոզիտորներից՝ Բախը, Հենդելը, Շուբերտը և ուրիշներ: Երգերը կատարվեցին եկեղեցական ու դասական ոճին բնորոշ զսպությամբ և ոգևորությամբ:

Տոնական այդ պահին և ներկաների տրամադրության մեջ դարերի շունչն ու հոգին էին սավառնում այս նույն խնկաբույր կամարների տակ: Հատկապես այն պահին գեղեցկորեն հնչեց Ն. Ծնորհալու Վարդանանց նվիրված «Արիացեալք» ստեղին, Ա. Աղաբաբյանի մշակմամբ:

«Հայրապետական մաղթանք»-ով բացվեց հոգևոր համերգը:

Ոչ միայն երգերի, այլև երգեհոնի հնչյուններից գերված բազմության ունեցած քար լռության մեջ էլ կար մի անպատմելի խորհուրդ: Դա երախտիքի զգացումն էր դեպի այսօրվա Հայոց Հայրապետը, դեպի Վարդանանք, դեպի Հայց. Եկեղեցին հոգևոր օրորոցը նրանց բոլորի: Երախտագիտություն առ Աստված և առ մեր Սուրբ և Առաքելական Եկեղեցին և դեպի անձը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Վարդանանց սրբերի 1530-րդ տարեդարձը նախ առավոտյան ս. պատարագով և օրվա խորհրդին նվիրված քարոզով՝ արտասանված Տ. Նարեկ եպս. Ծաքաղյանի կողմից, Հայրապետական մաղթանքից առաջ, ապա և երեկոյին այս համերգը, անջնջելի կմնան ներկաներից ամեն մեկի սրտում:

ԿԱՐԻՆԵ ՂԱՎԱԶՅԱՆ



ԱՂՈԹՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ» (Մատթ. Է 7):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Բոլոր այն մխիթարություններից, որոնք մարդ կարող է ստանալ այս աշխարհում, ոչ մի բան չի կարող համեմատության մեջ դրվել այն հոգեպարար երանության հետ, որ կարող է մեզ տալ աղոթքը:

Աղոթքը մարդու սրտի և հոգու վերացումն է դեպի Աստված, Վերջինիս հետ նրա ներքին զրույցը: Ինչպես ասում է մեծն Նարեկացին՝ «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», այսինքն՝ սրտի խորքերից խոսք Աստուծո հետ:

Դեռևս Հին Կտակարանում (Գիրք Երկրորդումն Օրինաց) Աստված պատվիրում է մեզ օրհնել «զՏէր Աստուած քո ի վերայ երկրին բարութեան զոր ետ քեզ... յիշեսցես, զի նա տայ քեզ ոյժ առնել զօրութիւն» (Ը 10, 18): Նույնն է պատվիրում Նա Եզեկիել մարգարեի բերանով՝ ասելով. «Եւ հնչեցէք առ ինս զբանս ձեր, և ես լուայ» (ԼԵ 13):

Ոչ միայն խնկաբույր աղոթքներ, այլ նաև հիասքանչ բանաստեղծություններ կարելի է համարել Հին Կտակարանում տեղ գտած Սաղմոսաց և Ժողովողի գրքերը:

Ս. Գրքում շատ են այնպիսի օրինակները, երբ մեծ մարդիկ, սուրբեր, աղոթքի շնորհիվ կատարում էին բազում մարդկային ուժերից վեր գործեր: Այդպես էր Մովսես մարգարեն, երբ քառասուն տարվա անապատում դեգերումից հետո կարողացավ առաջնորդել իր ժողովրդին Ավետյաց Երկիր: Այդպիսին էին մեծ մարգարեները, քահանայապետերն ու առաջնորդները:

Ավետարանում, որն ինչպես գիտենք, նվիրված է մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի կյանքին ու գործունեությանը, նույնպես շատ են աղոթքի անհրաժեշտության և օգտակարության վերաբերյալ օրինակները: Քրիստոս Ինքն է սովորեցնում Իր աշակերտներին «Հայր մեր» աղոթքին, որի համար և այն կոչում ենք Տերունական, այսինքն՝ մեր Տիրոջ կողմից հաստատված:

Քրիստոսի կյանքի մեծագույն իրադարձությունները առաջնորդվում էին ոչ այլ կերպ, քան աղոթքով: Հիշենք թեկուզ Գեթսեմանի պարտեզում Նրա ձերբակալումից և մահվան դատապարտվելուց առաջ կատարած սրտաճմլիկ աղոթքը առ Աստված:

Քրիստոսի հարությունից և համբարձումից հետո Նրա աշակերտները՝ առաքյալները, ապրում էին իրենց ամենօրյա աղոթքներով: Նրանք աղոթում էին իրենց ծանր, բազում հալածանքներով լի կյանքը պատվով ավարտելու, փառքով պսակելու

ու Երկնային Թագավորությանը արժանանալու համար: Այս առթիվ Պողոս առաքյալը իր «Առ Եփեսացիս» թղթում ասում է. «Ամենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթս առնել յամենայն ժամանակի Հոգւով, և ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք վասն ամենայն սրբոց» (Զ 18—19):

Եկեղեցական մեծ հայրերը և մեր ուսուցիչները, ողջ եկեղեցական պատմությունը լավագույն վկայությունն են աղոթքի ու նրա վրա հիմնված քրիստոնեական հավատքի անհրաժեշտության:

Ահա այսպիսի կարևորություն է ներկայացնում մեզ համար աղոթքը, սիրելի հավատացյալներ: Եթե կարելի է այսպես արտահայտվել, աղոթքը մարդու հոգևոր կյանքի առաջին պայմանն է, նրա շունչը: Ինչպես մարմնավոր մեր շնչառությունը անհրաժեշտ է գոյության համար կարևոր ուժերը պահպանելու, այդպես էլ աղոթքը օգնում է մարդուն՝ իր մեջ ընդունելու հոգևոր գոյի՝ Աստուծո ներկայությունը մեր մեջ: Ինչպես ծովի կամ օվկիանոսի հատակում եղած մարգարիտները մի տեսակ կաղապարվում, արտաքուստ պաշտպանվում են անխոցելի պատյաններով՝ խեցիներով, այդպես էլ կյանքում մեր հոգու մաքրամաքուր մասերը պարուրում ենք, զրահավորում աղոթքով: Եվ, վերջապես, թշվառության, հիվանդության, ծերության կամ մահվան անկողնում մեր միակ անբաժան ընկերն է աղոթքը, որ չի հեռանում մեզանից, չի լքում մեզ, այլ դառնում է մեր ուղեկիցը դեպի հավիտենություն:

«Ոչինչ այնքան չի քաղցրացնում մարդու կյանքը, ինչպես աղոթքը». այսպես է պատկերել աղոթքի արժեքն ու մեծությունը Ընդհանրական Եկեղեցու մեծագույն սրբերից մեկը՝ Հովհան Ոսկեբերանը:

«Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ»:

Աղոթքը հոգևոր վարժություններին շարան է, որ մարդուն կենդանություն է պարգևում, լցնում նրա հոգին լավատեսությամբ, ապրելու ու գործելու տենչով: Աղոթքն ընդունակ է մաքրելու մարդուն, վերացնելու նրա հոգին, սովորեցնելու՝ տեսնել կյանքում միշտ բարին, մաքուրը, վսեմը: Ոչինչ աշխարհում ի վիճակի չէ կասեցնելու, փակ պահելու իր դռները մարդու կողմից անկեղծորեն արտասանված ու նրա մաքուր սրտից բխած աղոթքի դիմաց:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ մեր սուրբ Եկեղեցին, իր բազմապիսի հրաշապատումներով, իր փառավոր անցյալով ու այսօրվա ներկայով այս ամենի լավագույն ապացույցն է: Եթե Հայկի աղեղի պըրկությունն ու նետի սրընթաց թռիչքը որոշեցին Հայոց երկրի սահմանները, ապա աղոթքով կառուցվեցին մեր տաճարները, աղոթքով գրվեցին հայ գիրքերը, շարականները:

Եվ, վերջապես, աղոթքը խաղաղության աղբյուր է և նրա պահապանը: Իսկ որքան կարոտ է հիմա աշխարհը խաղաղության, երբ իր կատարելությամբ հանդերձ դեռևս այսքան տկար այս Գունդը մի բուռ մարդկանց չար կամքով «խոստանում է» կանգնել պատերազմների ուղու վրա, այսինքն հասնել ինքնակործանման:

Սակայն մարդիկ, որ շատ բան են տեսել, չեն ուզում այդ: Լինեն դրանք ծերունական ջրակալած աչքեր թե մանկան, որն ամեն ինչի մեջ արև է տեսնում ու կապույտ երկինք, ջահել մոր թե ... բոլորը կարոտ են խաղաղության, կարոտ՝ հոգու հանգստության, կարոտ՝ աղոթքի:

Ուստի և մենք ևս, սիրելի ժողովուրդ, միացնենք մեր աղոթքները այժմ առ Աստված ու մեկս մյուսին ցանկանք, մաղթենք խաղաղություն, անդորր ու երջանկություն: Թող Աստուծո շնորհաբեր Աջը լինի ձեր վրա այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ





ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ ԿԱՄ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՏԱՃԱՐՆ

Քրիստոսի սկզբնական տնօրինությունների (Գաբրիելի ավետումը, Եղիսաբեթի այցելությունը, Բեթլեհեմի Ծնունդը, Հրեշտակների փառաբանությունը, ութօրյա թլփատությունը և այլ եղելություններ մինչև Մկրտություն, Երկնային նշանների երևումը, Հովհաննեսի վկայությունը և այլն) համախմբված ամբողջությունը քրիստոնեական նախնական Եկեղեցու մեջ, ինչպես նաև որոշ իմաստով այժմ, բնորոշվում էր ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ անվան տակ:

Վերոհիշյալ այս դեպքերի ամբողջացման մեջ է մտնում նաև Քրիստոսի Քառասնօրյա Գալուստը տաճար: Սա մի հրեական սովորություն էր՝ Տիրոջ առջև նորածին մանկանը ներկայացնելու իմաստավորումով, որի ընթացքում կատարվում են Քրիստոսի տաճար ընծայման և Աստվածածնի սրբացման օրինական պայմանները:

Այս դեպքի մասին Ավետարանում հիշատակություն կա միայն Ղուկասի մոտ (Ղուկ. Բ 22—38):

Տեղին է այստեղ մի փոքրիկ ծանոթություն տալ վերոհիշյալ երկու օրենքների մասին:

Ըստ հրեական օրենքի, ամեն արու զավակ ծնող մայր, պղծված համարվելով, պարտավոր էր ծննդյան քառասունքին տաճար գնալ և «ողջակէզ» անել մի տարեկան ոչխար՝ սրբվելու համար, ինչպես նաև երկու տատրակ կամ աղավնյակ՝ «վասն մեղաց»: Իսկ եթե աղքատ լինեին ծնողները, կարելի էր երկու տատրակ կամ աղավնյակ զոհել միայն՝ մեկը «ողջակէզ»-ի, իսկ մյուսը՝ «վասն մեղաց»-ի համար (Ղևտ. ԺԲ 2—8):

Սակայն ինչո՞ւ պետք է Աստվածածինը կատարեր այս պարտականությունը: Զէ՞ որ նա «անսերմ յղութեամբ» և «կուսական ծննդեամբ» էր ծնել իր զավակին: Այս բացատրվում է հրեա ամբոխի բամբասանքներից զերծ մնալու և գայթակղությունների առիթ չտալու պատճառաբանությամբ, քանի որ դեռ Քրիստոսի աստվածահրաշ ծընունդի պարագաները հայտնի չէին բոլորին:

Կա նաև այն պարագան, որ ինչպես Քրիստոս, այնպես էլ Աստվածածինը իրենց ամեն քայլափոխում աշխատում են հավատարիմ մնալ սահմանադրված օրենքին՝ օրինակ հանդիսանալու համար հետագա սերունդներին:

Այս վերջին պատճառաբանությամբ է, որ Քրիստոս ենթարկվեց Անդրանկաց օրենքի գործադրմանը: Իսկ Անդրանկաց օրենքի մասին կարելի է ասել հետևյալը.

Եգիպտացիների անդրանիկներին հասցրած պատուհասի առթիվ Աստված հրամայել էր, որ հրեաների բոլոր անդրանիկ արուները նվիրվեն Իրեն (Ելից ԼԴ 19—20)՝ Աստուծո տաճարի ծառայության համար: Իսկ երբ հրեաները անապատում, Մովսեսի բացակայության ժամանակ, ոսկե հորթ շինեցին՝ իրենց առաջնորդելու համար, և երբ

Ղևիի ցեղը, Աստուծո համաձայնությամբ, գործակից եղավ Մովսեսին՝ հորթապաշտներին պատժելու (Ելից ԼԲ 26), Աստված նրանց ընտրեց Իր պաշտոնյաները, և այսպիսով բոլոր անդրանիկ արուները ազատվեցին այդ պարտականությունից (Թուոց Գ 12)։ Բայց արու անդրանիկների վրա պարտականություն դրվեց՝ իրենց համար փրկանք վճարել Ղևտացիներին, ըստ յուրաքանչյուրի կարողության։

Վերոհիշյալ երկու օրենքների գործադրությունը սովորաբար կատարվում էին միասին, քառասունքի առթիվ։

Ավետարանում օրինական այս գործողությունների մասին մանրամասնություններ չեն հիշվում՝ ամեն ինչ պարզ լինելու պատճառով։ Բայց հիշվում են երկու կարևոր անակնկալներ՝ Սիմեոն ծերունու և ապա Աննայի մարգարեությունները։

Սիմեոնը Ավետարանում հիշվում է պարզապես որպես «այր մի», առանց որևէ այլ անհրաժեշտ բացատրությունների։

Ավետարանում Սիմեոնի համար ասվում է, որ նա Սուրբ Հոգուց հրաման էր ստացել մահ չտեսնել՝ նախքան Տիրոջ Օծյալին տեսնելը։ Եվ տաճարում տեսնելով Մանուկ Հիսուսին, մարգարեական հոգով զգում է, որ նա է Մեսիան, Նա է այն, Որին ինքը անհամբեր սպասում էր ամեն օր։ Եվ այս առթիվ մի գեղեցիկ օրհներգություն է ուղղում առ Աստված և պատրաստակամություն հայտնում մահանալու, քանի որ արդեն տեսավ Մեսիային։

Սիմեոնի նման մարգարեանում է նաև Աննան մի կին մարգարեուհի, որ համարվում էր տաճարի այրիների մեծավորը։ Կարծվում է, որ Մարիամը եղել է այս Աննայի սանուհին, և այս առթիվ մեծ խնդություն էր մարգարեուհու համար՝ տեսնել իր սանուհուն պարգևված այս մեծագույն շնորհը։

Թե՛ Սիմեոնը և թե՛ Աննա մարգարեուհին, Ավետարանի վկայությամբ, սուրբ անձեր են, սակայն ուղղակի տոն չունեն։ Սիմեոնի տոնը նկատվում է Քառասնօրյա Գալստյան հետ համակցված, իսկ Աննայի հիշատակը միակցվել է Յուղաբեր կանանց անունների հետ։ Երկուսի պատմությունները Հին Հայսմավուրքում հունվարի 10-ին է, իսկ Նորում՝ փետրվարի 15-ին։

*
* *

Ինչպես վերևում հիշեցինք, Քրիստոսի սկզբնական տնօրինությունների համախմբված ամբողջությունը կոչվում է Աստվածահայտնություն։ Քրիստոնեական Եկեղեցին սկզբնական շրջանում Աստվածահայտնություն անվան տակ տոնում էր այդ բոլոր տնօրինությունների հիշատակները միասին, իսկ այդ մեծ տոնի օրը ընդունված էր հունվարի 6-ը։ Հետագայում, Քրիստոսի Ծնունդը համարվելով Աստվածահայտնության հիմնական խորհուրդը, հունվարի 6-ը նկատվեց և կոչվեց **Տօն Ծննդեան**։ Նույն շրջանին տնօրինություններից ոմանք, բաժանվելով գլխավոր տոնից, առանձին տոներ են կազմում։ Այսպիսով, հունվարի 6-ից հաշվելով 40 օր, փետրվարի 14-ը ընդունվում է «Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն»։

Սակայն Բ—Դ դարերում Արևմուտքում և ապա Արևելքում Ծնունդը սկսեց տոնվել դեկտեմբերի 25-ին՝ հունվարի 6-ին թողնելով միայն Մկրտությունը. Տյառընդառաջի տոնն էլ հաստատելով փետրվարի 2-ին։

Եվ միայն Հայ Եկեղեցին է, որ հավատարիմ է մնում առաքելական սովորությանը։

Հայ, ինչպես նաև արևելյան այլ Եկեղեցիները Տյառընդառաջի օրը համարում են Տերունական տոն՝ նկատի ունենալով Քրիստոսի Քառասնօրյա տաճար գալը և ընծայումը Աստծուն։ Իսկ Արևմտյան Եկեղեցիները, հիմնականում Հռոմեական Կաթողիկե Եկեղեցին, նկատի ունենալով Տիրամոր սրբացումը, այն համարում են տոն նվիրված Աստվածածնին և կոչում՝ «Սրբություն Ս. Կուսին», «Ներկայացում», «Մաքրագործություն Կուսին» և այլն։

Տյառընդառաջի տոնը, շատ հավանաբար, քրիստոնյաների հնագույն և նշանավոր տոներից մեկն է։ Այս տոնի մասին հիշատակություններ կան Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Գելասիոս Ա Հռոմի Պապի (5-րդ դար) և Եկեղեցու այլ հայրերի գրվածքներում։

Հուստինիանոս Ա կայսեր ժամանակ այս տոնը սկսվում է մեծ հանդիսավորությամբ կատարվել Հույն Եկեղեցում։

Իսկ Լատին Եկեղեցում այն սկսվում է հանդիսավորությամբ կատարվել Գրիգոր ԺԱ Պապի[1] ժամանակ (1370—1378)։

Հայ Եկեղեցում այն ավելի շուտ է հանդիսավորապես կատարվել։ Այս մասին վկայում է Ս. Սահակ Պարթևի Խ կանոնը[2]։ Այստեղ կարելի է հիշել նաև, որ Տյառընդառաջի օրվան նվիրված շարականի հեղի-

[1] **Հ. Մինաս Բժշկյան**, Սրբազան պատմութիւն— Բ, Պատմութիւն քահանայապետաց Հռովմայ, Վենետիկ, 1838, էջ 339։

[2] «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխ.՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 398։

նակությունը վերագրվում է Մովսես Խորենացուն[3]:

*
* *

Այս տոնի առթիվ կրակ վառելու պարագան բացատրվում է հեթանոսական մի սովորություն՝ քրիստոնեական իմաստով զգեստավորելով:

Հ. Ղևոնդ Ալիշանը[4], Մաղաքիա արք. Օրմանյանը[5], Եղիշե պատրիարք Դուրյանը[6] և ուրիշներ Տյառնընդառաջի տոնի հրավառության սկզբնավորությունը գտնում են հայ հեթանոսական կրոնի մեջ Տիր չաստծուն նվիրված մի տոնակատարության մեջ:

Եվ, շատ հավանաբար, այս նկատի ունենալով, Սիմեոն կաթողիկոս Երևանցին իր կազմած տոնացույցում նշել է. «Խոտելի է շրջիլն զհրովն, որ ի տգիտաց է ներմուծեալ»[7]:

Սակայն պետք չէ մոռանալ, որ հայ աստվածաբանական միտքը այս կապակցությամբ արել է իր հիմնավոր մեկնությունները: Իբրև նմուշ այստեղ հիշենք Գրիգոր Տաթևացու բազմաթիվ պատճառաբանություններից երեքը միայն.

«Իսկ թէ վասն է՞ր հուր վառեմք:

Առաջին պատճառ՝ զի ի մերձենալ Տեառնն ի տաճարն ինքնին բացաւ դուռն և ճայթմունք աճագին եղև և դղրդեցաւ քաղաքն յօրինակ տիեզերաց: Եւ ամենեքեան վառեալ լուսով եկին ի տաճարն ընդառաջ Տեառն և ասեն՝ Տէր էանց ընդ այս դուռնս, ուստի և անուանեցաւ աւուրս տօն Տեառնընդառաջ և Տր ընդ այս, զոր ծքելով ասեմք, Տրընդէս: Վասն այն և մեք զնոյն օրինակ ձևացուցանեմք հուր վառեալ և ջահ լուցեալ նախատօնակ Գալստեանն Տեառն:

Դարձեալ երկրորդ պատճառ հեթանոսք ի պաշտօն առին զամենայն արարածս և առաւել ևս զհուրն պաշտէին, որպէս ազգն պարսից: Եւ այժմ բազում են ի կողմանս հիւսիսոյ կրակապաշտք: Վասն այն մեք վառեալ զհուրս ընծայեմք ի պատիւ Աստուծոյ, եթէ դու ես ճշմարիտ Աստուած, որ երևեցար այժմ, իսկ հուրս այս ոչ է Աստուած, այլ արարած քո, վասն այն ի ծառայութիւն քեզ բերեմք, որպէս երբայեցւոց մանկունքն՝ զոստս ծառոց ընծայեցին ի պատիւ Քրիստոսի, զի նա է ճշմարիտ Աստուած, նոյնպէս և մեք զհուրս ընծայեմք...

Եւ դարձեալ երրորդ պատճառ՝ զի գալստեամբն իւրով Քրիստոս ասաց՝ Ես եմ լոյս աշխարհի, որ հաւատայ ինձ՝ ի խաւարի մի մնասցէ: Այլև ասաց՝ Հուր եկի արկանել յերկիր և կամիմ թէ արդէն իսկ բորբոքիւր: Այս նշանակ էր զՀոգին Սուրբ՝ որ հրեղէն լեզուօք էջ յառաքեալսն և մաքրեաց զմեղս նոցա և լուսաւորեաց զմիտս նոցա: Վասն այն դէմ ընդառաջ ելեալ Քրիստոսի, և լոյս վառեալ, զի Քրիստոս լոյս եկն յաշխարհս և մեք հաւատացաք ի լոյսն և որդիք լուսոյ եղաք: Եւ հուր բորբոքեալ՝ զհուր սիրոյ նորա խնդրեմք, զի մաքրեսցէ զժանգ և զաղտեղութիւն մեղաց մերոց և սրբեալ պայծառացուցէ զմիտս և զհոգիս մեր: Վասն այն հուր վառեմք յերեկոյս»[8]:

Ինչպես նկատեցինք Տաթևացու պատճառաբանություններից, հրավառությունը առաջին հերթին տնօրինական, ավետարանական ծագում ունի. «ամենեքեան վառեալ լուսով եկին ի տաճարն ընդառաջ Տեառն... վասն այն և մեք զնոյն օրինակ ձևացուցանեմք հուր վառեալ և ջահ լուցեալ նախատօնակ Գալստեանն Տեառն»:

Այս հաստատվում է նաև Քրիստոսի հետևյալ խոսքով. «Հուր եկի արկանել յերկիր և զինչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր» (Ղուկ. ԺԲ 49):

*
* *

«Տեառընդառաջ» անվան փոխարեն ժողովուրդը օգտագործում է «Տրընդէս» բառը:

Այս բառի առաջացումը Գր. Տաթևացին բացատրում է հետևյալ կերպ. «Եւ ամենեքեան վառեալ լուսով եկին ի տաճարն ընդ-

---

[3] «ՇԱՐԱԿԱՆ հոգևոր երգոց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց յօրինեալ ի Սրբոց Թարգմանչացն մերոց և ի Սրբոյ Շնորհալւոյն և յայլոց սուրբ հարց և վարդապետաց», Էջմիածին, 1861, էջ Ա:

[4] **Հ. Ղևոնդ Ալիշան,** Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 45—59, 309—314:

[5] **Մաղաքիա արք. Օրմանյան,** Տիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 62:

[6] **Եղիշե պատրիարք Դուրյան,** Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւն, Երուսաղէմ, 1933, էջ 46:

[7] «ՏՕՆԱՑՈՑՑ նախապէս կարգեալ և սահմանեալ Սրբոյն Սահակայ Պարթևի հայրապետին Հայոց ըստ աւանդութեան Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ: Եւ զկնի յոգնաջան կարգաւորութեամբ և աշխատասիրութեամբ Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին յերկուս հատորս բաժանեալ» Էջմիածին, 1887, էջ 18:

[8] **Գր. Տաթևացի,** Գիրք քարոզութեանց որ կոչի Ճմերան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 79—80:

առաջ Տեառն և ասեն՝ Տէր էանց ընդ այս դուռնս, ուստի և անուանեցաւ աւուրս տօն Տեառն, ընդառաջ և Տր ընդ այս, զոր ծքելով ասեմք Տրընդէս»[9]:

Տաթևացու այս կարծիքին հակադրվում է Հայկազյան բառարանը, «Տէրընտաս»-ը համարելով աղավաղված ձև. «ոմկ. կարճելով և խանգարմամբ հնչման ասի Տէրընտաս, տէրընտասի օր, զոր յետինք ոմանք կամեցան ըստ կամի մեկնել Տէր ընդ այս համարելով...»[10]:

Տրընդէս բառի ծագման մի այլ մեկնություն է արել Մաղաքիա արք. Օրմանյանը. «...ըստ մեզ հավանական է թե (Տեառնընդառաջ անունը) հին հեթանոսական տոներեն մնացած անուն մըն է, Տիր աստուծույն ի պատիվ տոնի մը անունը՝ որ Տյառն Քրիստոսի տոնին փոխուած է: Այս կարծիքն ավելի հաստատություն կգտնե ժողովուրդին բերնին մեջ գործածված Տերընտաս անունով, զոր հնար չէ պարզ աղավաղում մը նկատել»[11]:

Օրմանյանի այս կարծիքը շատ հավանական է թվում՝ նկատի ունենալով մանավանդ, որ «տիրէնտազ» բառը պարսկերենում նշանակում է «նետաձիգ»[12], իսկ «Տիր» չաստծու անունը՝ «նետ»[13]:

---

[9] **Գր. Տաթևացի**, անդ, էջ 79:

[10] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ. Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ Մեծին Մխիթարայ աբբահօր Հ. Գաբրիէլի Աւետիկեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան», Վենետիկ, 1837, էջ 862:

[11] **Մաղաքիա արք. Օրմանյան**, անդ:

[12] **Եղիշե պատրիարք Դուրյան**, անդ:

[13] **Հ. Ղևոնդ Ալիշան**, անդ, էջ 310:



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՈՐԻԳԵՆԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԶՄԱՐԴՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ (185—254)

Որիգենես Ալեքսանդրացին թեև մեզ չի ներկայանում Ընդհանրական Եկեղեցու մեծանուն սրբերի լուսապսակով, բայց նա Գ դարի առաջին հիսնամյակի քրիստոնեական մշակույթի ու գիտության մեծավաստակ և հանճարեղ ներկայացուցիչներից մեկն է, որպես աստվածաբան ու մտածող, մեկնիչ ու փիլիսոփա, քարոզիչ ու մանկավարժ, որը իր մատենագրական վաստակի հազվագյուտ և շուայլ արդյունավորությամբ հարստացրել է Ընդհանրական Եկեղեցու հոգևոր գանձարանը:

Պաղեստինյան Կեսարիայի աստվածաբանական դպրոցում Որիգենեսի աշակերտ, Գ դարու պատմիչ և նրա վարքագիր Եվսեբիոս Կեսարացին, իր նշանավոր «Պատմութիւն Եկեղեցական» աշխատության «Դպրութիւն վեցերորդ» բաժնում, էջ 419—520-ում, նշում է, որ «բազմաթիվ և երկարապատում ճառեր հարկավոր էին, արդարև, ձեռնարկելու համար այս անձնավորության վարքը գրելու աշխատանքներին: Եվ անհրաժեշտ էր ըստ օրենի առանձին պատմություն շարադրել նրա մասին... քաղելով տվյալներ ոմանց նամակներից, նրա բարեկամների և ծանոթների խոսքերից, վկայություններ, որոնք հասել են մեզ մինչև մեր ժամանակները... որովհետև նա և՛ հավատի հարցերում և՛ սուրբ գրքերի ուսումնասիրության մեջ, հարևանցիորեն չէ որ ձեռնամուխ էր լինում իր աշխատանքներին, այլ մտադյուր հոժարությամբ, մեծավաստակ ջանքերով իր մանկությունից սկսած ինքն իրեն կրթում էր այդ հարցերի մեջ... ամեն գիշեր ծանր վարժություններով տքնում էր և գիշերվա ժամերը բազում՝ նվիրում էր աստվածեղեն գրքերի ընթերցումներին. ապրում էր խստակրոն կյանքով, զոր ու գիշեր իրեն նվիրել էր ծոմապահության վարժություններին, և գիշերվա ժամերի քունը սահմանափակում էր. Փրկչի ավետարանական բոլոր պատվերները պահելը իր պարտքն էր համարում»[1]:

Եվսեբիոս Կեսարացին Որիգենեսին իր այս խստակրոն կենցաղավարության և «կյանքի այս փիլիսոփայական եղանակին համար» անվանում է Adamantus, այսինքն «Պողպատե մարդ»[2]. «Համբավավոր մատենագիր էր Եկեղեցվո»[3], «զարմանալի Որիգենես, որ լի էր և կատարեալ ամենայն գիտութեամբ»[4]:

[1] Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցական. յեղեալ յասորւոյն ի հայ հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն, Վենետիկ, 1877:

[2] **Johannes Quasten,** Patrology, vol. II, էջ 38:

[3] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1889, էջ 649:

[4] Մատենագրութիւնք նախնեաց, վարք և վկայաբանութիւնք սրբոց, հատընտիր քաղուածք ի ճառընտրոց, հատոր Ա, Վենետիկ, 1874, էջ 317—331:

«Որիգենեսի նշանակությունը չափել անկարելի է: Առանց կասկածի նա ամենամեծ ազդեցություն է ունեցել եկեղեցական հայրերի մեջ... Նա ոչ միայն յուր ժամանակի ամենամեծ քրիստոնյա մտածողն էր, այլ ընդհանրապես չկար մեկը ամբողջ աշխարհում, որ հավասարվեր նրան գիտության և աշխատանքի ընդունակության կողմից: Կարծես պողպատից և երկաթից էր կազմըված: Նրա մեջ քրիստոնեական պլատոնականության յուր ծագման շրջանում և եկեղեցական գիտությունը վերջնականապես՝ հերետիկոսությանը»[5]:

Որիգենեսը առաջինն էր Եկեղեցու հայրերի և քրիստոնյա մտածողների մեջ, որ «քրիստոնեական աստվածաբանական գիտության հայր դարձավ», սահմանեց եկեղեցական-գիտական աստվածաբանության հիմնական սկզբունքները և մեթոդը և «դասական, հին գիտությունն ու փիլիսոփայությունը» եկեղեցականացնելու «առաջին վճռական քայլը առավ», հաշտեցնելով «գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, բարձր քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ, եկեղեցական վարդապետության հողի վրա»[6]:

Որիգենեսը այս իմաստով հանդիսանում է քրիստոնեական մտածողության մեծագույն ներկայացուցիչը, որի ուսմունքի հիմնական դրույթն էր հայրաբանների նման «փիլիսոփայորեն հիմնավորել և արդարացնել քրիստոնեությունը»[7]:

Գ դարի սկզբներից եկեղեցական գրականությունը ոչ միայն ապրում է իր զարգացման բուռն շրջանը, այլ նաև ջատագովական ու հակաճառական ուժեղ պայքար է մղում երբեմնի իր հալածիչների և հակառակորդների դեմ:

Այս իմաստով Գ դարը իր նշանակությամբ վերին աստիճանի մի հետաքրքիր ու կարևոր ժամանակահատված է ներկայացնում:

Եկեղեցու գոյության դեմ մղված արտաքին կռիվներն ու հալածանքները չկարողացան ջլատել նրա ներքին կենսունակությունն ու կորովը: Եկեղեցին ապրեց հոգեվոր, լիակատար կյանքով, մինչև որ Դ դարի սկզբներին, Մեծն Կոստանդիանոսի օրով հույն-հռոմեական կայսրության մեջ «քրիստոնեության արտաքին դրության մեջ առաջ եկած հիմնական փոփոխությունը Եկեղեցու ներքին կյանքին համար ամենահաջող հետևանքներն ունեցավ, լիակատար հնարավորություն տալով նրա անդամներին հոգու բոլոր ուժերը կենտրոնացնելու Եկեղեցու ներքին հարցերի լուծման վրա», հարցեր, որոնք ոչ միայն պատմական, այլև խորին գիտական, գործնական նշանակություն ունեն ինչպես բացառաբար այդ շրջանի կարևոր լինելու պատճառով, նույնպես նաև աստվածաբանական գիտությունների մասին եղած մեր ժամանակակից հարցի և նրանից սպասելիք պահանջների պատճառով»[8]:

Գ դարից սկսած «քրիստոնեական հանճարը առանձին ուժով երևան է գալիս աստվածաբանական գիտության զանազան ճյուղերի մեջ... Սույն ժամանակի աստվածաբանական երկերը, ուղեցույց են ծառայում ընդհանուր քրիստոնեության հաջորդ սերունդների համար»[9]:

Գ դարի եկեղեցական հայրերի գրականությունը կամ հայրաբանությունը բարդացուցվում է որպես պաշտպանություն քրիստոնեական վարդապետության և գիտության՝ ընդդեմ այլ կրոնների և հերետիկոսական մոլորությունների:

Այս շրջանում դրվում է հիմքը քրիստոնեական աստվածաբանության և գիտության: Ընդհանրապես Արևելքում, և ի մասնավորի Ալեքսանդրիայում, Պաղեստինում, Անտիոքում, Ասորիքում, Կապադովկիայում բացվում են աստվածաբանական դպրոցներ, որոնց մեջ նշանավոր էր Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցը:

Մեր թվարկությունից առաջ, 331 թվականին, Ալեքսանդր Մակեդոնացին հիմնադրում է Ալեքսանդրիա քաղաքը, որը շուտով դառնում է Արևելքն ու Արևմուտքը միացնող ամենափայլուն կենտրոնը կայսրության մտավորական կյանքի:

Ալեքսանդրիան խառն բնակչությամբ մի քաղաք էր: Այստեղ իրար էին հանդիպում արևելյան, եգիպտական, հունական և հրեական և Ա դարից սկսած նաև քրիստոնեական մշակույթները, կրոններն ու փիլիսոփայական ըմբռնումները: «Հին աշխարհի կարևոր իմա-

---

[5] **Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց,** Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ա հատոր, Հին Եկեղեցին, Ս. Էջմիածին, 1908, էջ 145—146:

[6] **Պրոֆ. Ն. Սագարդա,** Ցոյն-Արևելքի հին-եկեղեցական Աստուածաբանական գիտութիւնը իւր ծաղկման շրջանում (IV—V դ.), ռուս. թարգմ. Արտակ վարդապետ Սմբատեան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910, էջ 17—18:

[7] **Դավիթ Անհաղթ,** Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 4:

[8] **Սագարդա,** նույնը, էջ 3—4:

[9] Նույնը, էջ 3—4:

ցական այդ հոսանքները հոն զիրար կճանչնան ու կթափանցեն: Ա՛յս է որ ալեքսանդրյան փիլիսոփայութան կուտա զանազան վարդապետություններ իրար բերելու, հաշտեցնելու, մեկը մյուսով մեկնելու նկարագիրը»[10]:

Փիլիսոփայական այս հոսանքների պայքարից և շփումից ծնվեց Ալեքսանդրիայում նոր-պլատոնականությունը, որը «Գ, Դ, Ե դարերուն, ամենեն ավելի կենդանի և ծաղկող վարդապետություններեն մեկը եղած է, ճիշտ այն շրջաններուն երբ քրիստոնեական փիլիսոփայությունը կազմավորվելու վրա էր... Նոր-պլատոնականությունը գըլխավոր ուժն էր քրիստոնեության դեմ պայքարող: Նոր-պլատոնականները կպայքարին անոր դեմ և հաղթանակը կմնա քրիստոնեության»[11]:

Քրիստոնեության և նոր-պլատոնականության այդ պայքարի արդյունքն է լինում Ալեքսանդրիայի քրիստոնեական աստվածաբանական դպրոցի հաստատումը: Այդ դպրոցը «հանդիսանում է հնագույն կենտրոնը սրբազան գիտության քրիստոնեության պատմության մեջ»[12]:

Գ դարի սկզբից եկեղեցական գրականությունը զարգանում է նոր թափով և նոր բովանդակությամբ: Այդ գրականության կենտրոնն է լինում Ալեքսանդրիայի դպրոցը, որի մշակած գրականության որոշիչ նկարագիրն է լինում հավատի բովանդակության բնազանցական ուսումնասիրությունը, մեծ հակում դեպի Պլատոնի փիլիսոփայությունը և Աստվածաշնչի այլաբանական մեկնությունը[13]:

Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի նշանավոր դավանաբաններն ու ուսուցիչներն են հանդիսանում Կղեմես Ալեքսանդրացին (150—215), Որիգենեսը, Դիոնեսիոսը, Պիերիոսը, Պետրոս Ալեքսանդրացին, Դիդիմոսը և Կյուրեղ Ալեքսանդրացին:

Ալեքսանդրիայի դպրոցը, սակայն, իր ոսկեդարն է ապրում Որիգենեսի տեսչության օրով: Որիգենեսը հաջորդում է Կղեմես Ալեքսանդրացուն որպես այդ դպրոցի գլուխը:

Որիգենեսը համարվում է առաքելական հաջորդ դարի Եկեղեցու մեծագույն վարդապետը, անսպառ եռանդով լի գիտնականն ու աստվածաբանը, մաքուր նկարագրի տեր, հանրագիտական կրթությամբ մի մարդ և մեկը ամենահիանալատիպ քրիստոնեական մտածողներից, որը երբեք աշխարհը տեսած լինի[14]:

Որիգենեսի մասին մեզ հասել են կենսագրական ավելի շատ տեղեկություններ, քան Եկեղեցու մի այլ մտածողի կամ աստվածաբանի մասին: Նրա կենսագրության, անձնավորության, մատենագրական հարուստ վաստակի, նրա ուսուցման մեթոդի և մանկավարժական գործունեության մասին, անսպառ և ստույգ աղբյուրներ կարող էին լինել ավելի քան 100 այն նամակները, եթե պահպանված լինեին: Բարեբախտաբար, սակայն, ինչպես նշվեց, Եվսեբիոս Կեսարացին հավաքել է այդ նամակների մեծ մասը և օգտագործել՝ իր «Պատմութիւն Եկեղեցական» աշխատության մեջ, Որիգենեսի կենսագրությունն ու վարքագրությունը շարադրելիս: Եվսեբիոսի պատմության «Դըպրութիւն վեցերորդ»-ը ամբողջությամբ նվիրված է Որիգենեսին:

Պամփիլիուս Կեսարացին, Եվսեբիոսի ուսուցիչը գրել է 5 գիրք ի պաշտպանություն Որիգենեսի, որի առաջին հատորը մեզ է հասել Ռուֆինոսի ասորերեն թարգմանությամբ[15]:

Որիգենեսի կենսագրության, նրա ուսուցման և դաստիարակության արժեքավոր մեթոդների, ուսումնական ծրագրերի և անձնական կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ կան նաև նրա աշակերտ Ս. Գրիգոր Սքանչելագործ Նեոկեսարիայի հայրապետի «Ներբող Որիգենեսի մասին» աշխատության մեջ[16]:

Ըստ վարքագրական տվյալների, Որիգենեսը քրիստոնյա, բարեպաշտ և մի բազմանդամ ընտանիքի երեց որդին է եղել: Նա ծնվել է 185 թվականին Ալեքսանդրիա քաղաքում: Հայրը՝ Լեոնիդասը, իր որդուն ջամբել է, «քրիստոնեական հոգատար դաստիարակություն, սովորեցրել է Աստվածաշնչի պատմություն, մեկնություն և աշխարհիկ գիտություններ». «ի մանկութենէ իւրմէ զգիրս սուրբս Աստուծոյ ուսեալ էր և նոքօք կրթէր զանձն... իսկ հայրն նորա ի վերայ խրատու և արտաքին իմաստութեան ... մեծապէս փոյթ առնէր, զի նախ քան զկրթութիւն յունականին մակացութեամբ, ի հրահանգս խրատու սրբութեան զնա ընտելացուցանէր, և օր ըստ օրէ հատուածս ինչ ի սուրբ գրոց ուսեալ ի բերան և արտասա-

[10] Շահան Ռ. Պէրպէրեան, Պատմութիւն իմաստասիրութեան, Անթիլիաս, 1977, էջ 132—133:

[11] Նույնը, էջ 134—135:

[12] Quasten, նույնը, էջ 2:

[13] Նույնը, էջ 2:

[14] Նույնը, էջ 37:

[15] Նույնը, էջ 37:

[16] Նույնը, էջ 32—33:

նել հրամայէր» վկայում է Եվսեբիոս Կեսարացին:

Որիգենեսը ունեցել է վեց փոքր եղբայրներ և մի քույր:

Որիգենեսի հայրը 202 թվականին, նահատակվում է Սեպտիմոս Սևերոս կայսրի (193—211) հալածանքների ժամանակ մարտիրոսական մահով:

Հորը նահատակության ի տես, երիտասարդ Որիգենեսը բուռն ցանկությամբ ձգտում էր «ընդունել զպսակ վկայութեան և ինքն ամենայնիւ խրոխտէր ի վկայութիւն մարտիրոսութեան», իսկ մայրը՝ նույնպես բարեպաշտ կին սաստիկ անհանգստացած և վախեցած «թաքոյց զամենայն հանդերձ նորա և արգել զնա ի ներքս ի տան բռնի»:

Հորը նահատակությունից հետո կառավարությունը «յարքունիս» է գրավում ընտանիքի հորենական կալվածը: Որիգենեսի մայրը, քույրը և եղբայրները մատնվում են ծայրահեղ աղքատության:

Ընտանիքը պահելու ծանր հոգը ընկնում է երիտասարդ Որիգենեսի վրա: Նա ուսուցչությամբ հոգում է իր ընտանիքի կարիքները:

Այդ շրջանին Որիգենեսը խորապես ուսումնասիրել էր արդեն հունական փիլիսոփայությունը, նոր-պղատոնականությունը Ամոնիոս Սակկայի մոտ (Գ դար), եբրայեցերեն լեզուն և Աստվածաշունչը:

Կղեմես Ալեքսանդրացին 200 թվականին Սեպտիմոս Սևերոս կայսրի հալածանքների պատճառով ստիպված հեռանում է Ալեքսանդրիայից: Տեղի աստվածաբանական դպրոցը անտերության է մատնվում: Քաղաքի Դիմետրիոս նոր եպիսկոպոսը սակայն դպրոցի տեսչությունը հանձնում է 18-ամյա Որիգենեսին, որը ուսուցիչ է կարգվում. «Եկաց ի վարդապետութիւն աշակերտաց» և 203—215 թվականներին հազվագյուտ արդյունավորությամբ և ձեռնհասորեն ղեկավարում է դպրոցը, հասցընում բազում աշակերտներ: Նույնիսկ զարգացած հեթանոս կանայք մեծ ոգևորությամբ հետևում են նրա դասախոսություններին, ոչ միայն նրա ծովածավալ գիտնականության, հմտության, այլ նաև նրա քրիստոնեական, անձնական կյանքի մեծության, խստակեցության և մաքրության համար:

Դպրոցը ուներ իր հաստատուն ուսումնական ծրագիրն ու դասավանդվող առարկաները, կանոնավոր ուսումնական շրջանների բաժանված դասընթացքներով և ուսուցման հստակ եղանակով:

Ընդհանուր դասախոսություններին մասնակցելու իրավունք ուներ նաև հեթանոս աշակերտությունը: Նրանց համար դասավանդվող հիմնական առարկաներն էին դիալեկտիկա, ֆիզիկա, մաթեմատիկա, երկրաչափություն, աստղագիտություն, հունական փիլիսոփայություն և հայեցողական աստվածաբանություն: Իսկ բարձրագույն գիտական-կրոնական դասախոսություններին մասնակցում էին միայն քրիստոնյա աշակերտները, այր և կին հավատացյալներ, որոնք բացի վերոհիշյալ առարկաներից, սովորում էին նաև քրիստոնեական աստվածաբանություն, Աստվածաշունչի այլաբանական մեկնություն և փիլիսոփայություն: «Այս դպրոցը բնականաբար դարձավ քրիստոնեության համար ուսուցիչներ պատրաստող դպրոց, այն ինչ նրա գլխին, կանգնած մարդիկ քրիստոնեության ամենանշանավոր գիտնականների շարքն անցան... և Որիգենեսը դառնում է քրիստոնեության ամենամեծ գիտնականը, որի համբավը ամեն կողմ տարածվում է»[17]:

Վարքագիրը՝ Եվսեբիոս Կեսարացին վկայում է «պողպատե» այս մարդու «ապրելու փիլիսոփայական կերպի», նրա ճգնողական սովորույթների, ծոմապահության, խստակեցության մասին. «Ինչպես նրա խոսքն էր, այդպես էր նաև նրա ապրելու կերպը. և ինչպիսին էր նրա ապրելու կերպը, այդպիսին էր նաև նրա խոսքը և այս էր պատճառը, որ նա աստվածային ներգործության շնորհիվ շատերին համոզում էր կիսելու իր նախանձահուզությունը... մահճի վրա երբեք չէր քնում, այլ հապճեպ կերպով սենյակի հատակի վրա գետնախշտիկ էր լինում: Խիստ կերպով հետևում էր Փրկչի պատվերին, չունենալ երկու պարեգոտ, կոշիկ և հողաթափ չհագնել և շատ չհոգալ վաղվա մասին: Փոքրուց վարժվել էր տոկալ ցրտի և մերկության, խիստ ժուժկալության. հրաժարվում էր ունեցվածքներից» և իր այդ կենցաղավարությամբ հիացնում էր ոչ միայն իր քրիստոնյա աշակերտներին:

«Ս. Գրիգոր Սքանչելագործը Որիգենեսին իմաստունի տիպար է անվանում, որը ոչ միայն հորդորում էր խոսքի ու գործի, այլ իր սեփական օրինակով ավելի, քան թե իր վարդապետությամբ առաքինության ճանապարհն էր ուսուցանում» (նույնը, էջ 147):

Որիգենեսի հեթանոս աշակերտներից շատերը նույնպես հետևում էին նրա կյանքի այդ օրինակին, խստամբեր ճգնողական կենցաղավարության, և քրիստոնեական

[17] Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց, նույնը, էջ 141 և 144:

ուսմունքին: Նրանցից շատերը սիրով ընդունեցին Աստծու խոսքը: Ոմանք նույնիսկ հալածանքների ժամանակ իրենց կյանքը վերջացրին մարտիրոսական վկայությամբ:

Այս ճգնողական խիստ կյանքի հետևանքը այն եղավ, որ 202—203 թվականներին երիտասարդ Որիգենեսը, «որը նույնպես իր դասերի ժամանակ պարապում էր կանանց հետ, իրեն զրկեց սեռական կարողությունից»[18], տառացիորեն հասկանալով Հիսուսի վկայությունը, պնդելով, որ Ավետարանը արդարացնում է կամավոր ներքինացումը. «Կան ներքինիներ, որոնք իրենց մոր որովայնից այդպես են ծնվել: Կան ներքինիներ էլ, որոնք մարդկանց կողմից են ներքինի դարձած, ներքինիներ էլ կան, **որոնք երկնքի արքայության համար իրենց ներքինիներ են դարձրել»**[19]:

Այնքանդրիայում Որիգենեսի մանկավարժական, մատենագրական, մեկնողական և քարոզչական գործունեությունը ընդհատվում է մի շարք աստվածաբանական հանապարհորդություններով: 212 թվականին նա գնում է Հռոմ, ուր հանդիպում է ունենում ժամանակի նշանավոր եկեղեցական և հայտնի փիլիսոփա Հիպոլիտի հետ: 215-ին Որիգենեսը այցելում է Արաբիայի քրիստոնեական համայնքը, և ապա Անտիոք՝ հրավերով Այնքանդր Սևերոս կայսրի մոր՝ Հուլիա Մամեայի, որը ցանկություն էր հայտնել լսել նրան՝ ժամանակի այդ մեծ օիտնականին: Այնուհետև Որիգենեսը այցելում է Աթենք, Նիկոմեդիա, Բուստրա, Կայսարիայի Կեսարիա և այլն:

Կարակալլա կայսրը (211—217) 215 թվականին հրավիրում է Այնքանդրիան, փակում է տեղի աստվածաբանական դպրոցը, հալածում՝ դասախոսներին: Որիգենեսը 216 թվականին թողնում է Այնքանդրիան և հաստատվում պաղեստինյան Կեսարիա քաղաքում: Երուսաղեմի և Կեսարիայի եպիսկոպոսների հրավերով Որիգենեսը մի շարք աստվածաբանական դասախոսություններ է կարդում եպիսկոպոսների ներկայությամբ, որոնք դեռ եկեղեցական որևէ աստիճան չունեն: Այս հարցի առիթով կանոնական վեճ է ծագում Այնքանդրիայի և Երուսաղեմի Աթոռների միջև: Պաղեստինի եպիսկոպոսները մեղադրում են Այնքանդրիայի Աթոռի միջամտությունը իրենց եկեղեցական. թեմական ներքին գործերին և Որիգենեսին քահանա են ձեռնադրում: Վեճը գնալով բորբոքվում է: Որիգենեսը Պաղեստինի եպիսկոպոսների հրավերով բացում է Կեսարիայում մի նոր աստվածաբանական դպրոց, և այն ղեկավարում 20 տարի շարունակ: Այստեղ է, որ Որիգենեսին աշակերտում են Ս. Գրիգոր Սքանչելագործը՝ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքի ապագա եպիսկոպոսը և Գ դարի նշանավոր եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացին:

Պաղեստինյան Կեսարիայի աստվածաբանական դպրոցում Որիգենեսը հետևում է Այնքանդրիայի դպրոցում իր մշակած և հաստատած մանկավարժական համարյա նույն ավանդություններին, ուսման նույն ծրագրերին: Այս դպրոցում դասավանդում են տրամաբանություն, դիալեկտիկա, բնական գիտություններ, երկրաչափություն, աստղագիտություն, ապա բարոյագիտություն և աստվածաբանություն: Բարոյագիտությունը դասավանդվում էր ոչ միայն որպես բարոյական հարցերի նվիրված գործնական ուսումնասիրություն և քննություն, այլ որպես կյանքի փիլիսոփայություն[20]: Գրիգոր Սքանչելագործը վկայում է, որ Որիգենեսը թույլ էր տալիս իր դպրոցում իր աշակերտներին կարդալ հին փիլիսոփաների բոլոր գործերը, բացի այն փիլիսոփաներից, որոնք մերժում էին Աստծո գոյությունը և աստվածային նախախնամությունը[21]:

Որիգենեսը փիլիսոփայությունն ու արտաքին գիտությունները համարում էր «նախապատրաստական առարկաներ» Աստվածաշունչն ու քրիստոնեական վարդապետության ուսումնասիրության համար: Նա թելադրում էր իր աշակերտներին փիլիսոփայությունից և արտաքին գիտություններից վերցնել այն, ի՛նչ օգտակար կարող էր լինել Աստվածաշնչի ճշգրիտ հասկացողության համար: Նրա կարծիքով փիլիսոփայությունը, բնականությունը, դիալեկտիկան, հռետորությունը աղախիններն են աստվածաբանության և առժեք ունեն միայն օրիսորեանան վարդապետության հետ իրենց փոխհարաբերությունների մեջ:

244 թվականին Որիգենեսը դարձյալ այցելում է Աղեքսանդրիայի քրիստոնեական համայնքին: Դեկիոս կայսրի օրով (250—253) Որիգենեսը ձերբակալվեց և բանտում և ոտք էր դնում Կեսարիայում մահանում է 254 թվականին Տյուրոսում (Փունիկիա) 69 տարեկան հասակում

[18] Նույնը, էջ 144:

[19] Նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975, Մատթեոսի ավետարան, գլուխ ԺԹ համար 12, էջ 56:

[20] Quasten, նույնը, էջ 40:

[21] Նույնը, էջ 40:

հիվանդ ու հյուծված իր կրած տառապանքներից:

«Որիգենեսի ճակատագիրն էր հակառակության, հակաճառության նշան դառնալ և՛ իր կյանքի ընթացքում, և՛ հետմահու: Դժվար է գտնել մի այլ մարդ, որը այնքան բարեկամներ ունենար և նույնքան թշնամիներ: Ճշմարիտ է, որ նա սխալներ գործեց, բայց ոչ ոք կարող է կասկածել, որ նա միշտ ցանկացավ լինել ու մնալ ուղղափառ և հավատացյալ քրիստոնյա: Նա իր աստվածաբանական կարևոր գործի սկզբում, որը կոչվում է «Սկզբունքների մասին» (De principiis) գրել է. «Միայն այն է ընդունելի որպես ճշմարտություն, որը ոչ մեկ ձևով չի տարբերվում եկեղեցական և առաքելական ավանդությունից»: Որիգենեսը միշտ հետևվեց այդ կանոնին և այն սրբագործեց իր կյանքի վախճանին իր արյունով»[22]:

ՈՐԻԳԵՆԵՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Որիգենեսը թողել է բազմաժանր ու հարուստ մատենագրական վաստակ, որի մի կարևոր մասը, սակայն, կորել է հակաորիգենեսյան հակաճառությունների ժամանակ: «Ամբողջ հունական աստվածաբանության և դավանանքի զարգացումը կարելի է նկարագրել իբրև մի մաքառումն Որիգենեսի մտքերի հետ, նրանց յուրացումն ու մերժումը»[23]:

Որիգենեսի և՛ Ալեքսանդրիայի, և՛ պաղեստինյան Կեսարիայի դպրոցներում կարդացած աստվածաբանական, փիլիսոփայական, մեկնողական դասախոսությունները, նրա մեծ անձնավորության, ծովածավալ հմտության ու գիտնականության թողած ազդեցությունն իր դասախոսություններով, աստվածաբանական ուղղություններով և նրա հանճարի կնիքով տարածվեցին ամբողջ հունական արևելքում և Հռոմում:

Ս. Գրիգոր Սքանչելագործի «Ներբող Որիգենեսի մասին» աշխատությունը՝ արտասանված 238 թվականին Կեսարիայում, համարվում է մի կարևոր փաստաթուղթ Որիգենեսի մատենագրական վաստակի արժեքի, այդ շրջանի քրիստոնեական մտածողության, աստվածաբանության ու դաստիարակության պատմության մասին[24]:

Պատահականություն չէր, որ Ս. Բարսեղը, Ս. Գրիգոր Աստվածաբանը Որիգենեսի մատենագրական վաստակի ամենաընտիր կտորների մի ժողովածուն՝ Ֆիլոկալիան կազմեցին... «Որիգենեսի աստվածաբանական սկզբունքները հանդես էին գալիս իբրև իրենց՝ կապադովկիացիների մայրենի երկրի աստվածաբանական ավանդությունները... Որիգենեսի մեկնաբանական աշխատությունների ուսումնասիրությունը նրանց համար նախապատրաստություն էր արիոսականների դեմ կռվելու համար: ...Որիգենեսի հզոր հոգին շարունակում էր յուր ազդեցությունն ունենալ աստվածաբանական մտքի ընթացքի վրա: Կարելի է ասել, որ Դ և Ե դարերի բոլոր աստվածաբանները աշխատում էին Որիգենեսից ստացած ավելի կամ պակաս հոգևոր ժառանգությամբ, մասամբ անընդմիջաբար մոտենալով նրան, մասամբ նրա ստեղծած աստվածաբանական գիտության ուղղության ընդդիմադիր լինելով, բայց միևնույն ժամանակ ոգևորվելով նրա գիտական իդեալներով... Որիգենեսի տեսության ուժը անհաղթահարելի էր»[25]:

Պամփիլուսը և Եվսեբիոս Կեսարացին որպես «աջակողմյան որիգենեզմի կողմնակիցներ» ի պաշտպանություն Որիգենեսի աստվածաբանական-գիտական, փիլիսոփայական ողջ ժառանգության, գրքեր գրեցին ընդդեմ նրա հակառակորդների: «Շատերի համար Որիգենեսի հեղինակությունը հավասար էր Աստվածաշունչի հեղինակությանն»[26]:

Ընդհանրական Եկեղեցու մեծ հայր և աստվածաբան Ս. Աթանասը երբեք Որիգենեսի մասին «կշտամբիչ» խոսք չի ասել: Ս. Աթանասի աստվածաբանական առաջին աշխատությունների վրա, ինչպիսիք են «Ընդդէմ հեթանոսաց» և «Յաղագս Մարմնացելոյ Բանին» գործերը, երևում է Որիգենեսի ազդեցությունը[27]:

Հսկայական է եղել Որիգենեսի գրական գործունեությունը: Վարքագիրները վկայում են, որ նրան օգնում էին յոթ աղագիրներ, որոնց նա միաժամանակ թելադրում էր իր մտքերը: Կային նաև նրա տրամադրության ներքո նույնչափ արտագրողներ և զարգացած կանանց մի խումբ: Այդ բոլորի ծախսերը հոգում էր իր առատաձեռնությամբ նրա բարեկամ և հիացող Ամբրոսիոսը, ինչպես վկայում է Եվսեբիոս Կեսարացին:

Որիգենեսի գրական վաստակը հաշվվում էր հազարներով: Հերոնիմոսը նրա նամակների թիվը հաշվում է 2000, իսկ Եպիփան

[22] Նույնը, էջ 40:

[23] Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց, նույնը, էջ 146:

[24] Quasten, նույնը, էջ 1243:

[25] Սագարդա, նույնը, էջ 37:

[26] Նույնը, էջ 38:

[27] Նույնը, էջ 33:

Կիպրացին (Դ դար) հաշվում է նրա ողջ գրական վաստակը՝ շուրջ 6000 աշխատություններ[28]:

Որիգենեսի աշխատություններից մեզ հասել են ոչ թե հունարեն սկզբնական բնագրով, այլ լատիներեն թարգմանությամբ:

Հնարավոր չէ մի հոդվածի մեջ սպառիչ կերպով ներկայացնել Որիգենեսի մատենագրական ողջ վաստակը: Կհիշենք այստեղ միայն այդ վաստակի մի քանիսը:

Որիգենեսի մատենագրական վաստակի մեծ մասը նվիրվել է Աստվածաշունչ գրքերի մեկնությանը: Նա ճշմարտապես կոչվել է **Աստվածաշնչական գիտության հիմնադիր և հայր:** Նրա նշանավոր **Վեցէջեանը՝** Hexapla, համարվում է առաջին գիտական ու լուրջ ուսումնասիրությունը Հին Կտակարանի քննական բնագիր կազմելու աշխատանքներում: Այդ «հսկայական» աշխատանքներին նա նվիրեց իր ողջ կյանքը[29]:

Որիգենեսի մատենագրական վաստակի ծանրակշիռ գործերը նվիրվել են Հին Կտակարանի գրքերի բնագրային քննադատության և մեկնության:

1. Բնագրային քննական գործեր.

Նրա նշանավոր **Վեցէջեանը՝** առաջին գիտական փորձն է Հին Կտակարանի գրքերի քննական բնագիր կազմելու վերաբերյալ: Բնագրի քննադատությունը նոր էր, բայց կարևոր, որովհետև ընդունված էր ներշնչման վարդապետությունը. ուրեմն պետք էր իմանալ, թե ի՞նչպես է իսկական բնագիրը: Այդ պատճառով նա քննադատական եղանակով սրբագրեց ամբողջ Աստվածաշունչը Հերոնիմոսի ժամանակ: Սա Հին Կտակարանի Յոթանասնից թարգմանության բնագիրը մյուս թարգմանությունների հետ համեմատելով վերականգնելու համար ձեռնարկած մի հսկայական գործ է. վեց էջերի մեջ համեմատության են դրված եբրայեցերեն բնագիրը՝ եբրայական և հունական տառերով, ապա Աքվիլայի, Սիմաքոսի, Յոթանասնից և Թեոդոտիոնի Հին Կտակարանի հունարեն թարգմանությունները: Լուսանցքներում նշանակված են եղել տարբերությունները: Քրիստոնեական գիտության ամենամեծ դժվարություններից մեկը նարելի է համարել, որ այս երկը, որի վրա Որիգենեսը յուր կյանքի վերջին 30 տարին ամբողջապես աշխատել է, ամբողջությամբ մեր ձեռքը չէ հասել. մնացած հատակոտորներից հնարավոր է վերականգնել միայն Որիգենեսի Յոթանասնից թարգմանության օրինակը (տես **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց,** նույնը, էջ 147):

2. Մեկնողական գործեր.

Որիգենեսը Աստվածաշնչի համարյա բոլոր գրքերի վրա հմտալից մեկնություններ է գրել, երեք տարբեր գրական ժանրերով.

ա) **Սքոլիաներ** կամ համառոտ բացատրություններ աստվածաշնչական դժվարիմաց հատվածների վրա, որոնցից հատվածներ են հասել մեզ:

բ) **Քարոզներ** կամ Հոմիլիներ, դարձյալ աստվածաշնչական ընթերցումներից ընտրված հատվածների վրա: Որիգենեսի սույն քարոզները ընթերցվել են եկեղեցիներում ժամերգության ժամանակ, ամեն օր և մանավանդ չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Որիգենեսի սույն քարոզները համարվում են «քրիստոնեական ոգեկանության հրաշալի էջեր», գլուխ-գործոցներ, նվիրված հավատացյալների հոգևոր դաստիարակության, նրանց հոգիների շինության:

գ) **Մեկնություններ,** որոնք Աստվածաշունչի գրքերի գիտական բացատրություններ են, որոնց նպատակն է եղել դարձյալ հավատացյալների հոգևոր դաստիարակության և նրանց հոգիների փրկության գործը:

Որիգենեսյան աստվածաշնչական մեկնությունները հարուստ են բնագրային, բանասիրական, պատմական, ստուգաբանական, աստվածաբանական, փիլիսոփայական ծանոթություններով: Բոլոր մեկնությունները կատարվել են այլաբանական մեթոդով: Որիգենեսի հարուստ այս մեկնողական ժառանգությունից ոչ մեկը մեզ չի հասել ամբողջությամբ:

Աստվածաշնչի գրքերի նվիրված Որիգենեսի հարուստ մեկնողական աշխատանքներից հիշենք մի քանիսը, համեստ մի գաղափար տալու համար նրա մեկնողական հմտության, գիտության, աստվածաշնչական հատվածների հոգևոր իմաստին մեջ խորանալու նրա ոգեկան թափանցումի կարողության մասին, մի հանգամանք, որը պանասել է հաջորդ դարերի մեկնիչների մոտ[30]:

ա. **Մեկնություն Մատթեոսի Ավետարանին** 25 գիրք.

բ. **Մեկնություն Հովհաննու Ավետարանին** 32 գիրք.

օ. **Մեկնություն Հռոմեացվոց թղթի** 15 գիրք.

[28] Quasten, նույնը, էջ 43:

[29] Նույնը, էջ 44:

[30] Նույնը, էջ 48:

դ. **Մեկնություն Երգոց Երգույն Սողոմոնի** 10 գիրք.

Սույն վերջին մեկնությունը Որիգենեսի ամենահայտնի այլաբանական մեկնությունն է համարվում: Երգ երգոց-ի փեսան, ըստ Որիգենեսի՝ Քրիստոսն է, իսկ հարսը՝ Եկեղեցին:

ե. Որիգենեսը ունի նաև 291 գիրք այլ մեկնություններ, Հին և Նոր Կտակարանների գրքերի վրա, որոնցից 275-ը կորել է:

3. Ջատագովական գործեր.

Որիգենեսը 8 գիրք է գրել հեթանոս մատենագիր Կելսոսի դեմ, ի պաշտպանություն քրիստոնեական կրոնի: Կելսոսը որպես պլատոնական փիլիսոփա 178 թվականին հարձակումներ է գործել քրիստոնեական կրոնի դեմ: Նրա աշխատությունը կոչվում է «Բան ճշմարիտ ընդդէմ քրիստոնէից»:

Կելսոսի գործը մեզ չի հասել: Բայց Որիգենեսը այնքան առատ մեջբերումներ է կատարել «Ընդդէմ Կելսոսի» իր գործի մեջ, որը կազմում է բնագրի շուրջ 3/4 մասը, որով կարելի է լինում ամբողջական գաղափար կազմել Կելսոսի գործի մասին: Կելսոսը հանգամանորեն ուսումնասիրել է քրիստոնեական գրականությունը, աղանդավորների և մանավանդ գնոստիկյանների ուսմունքը և լավ տիրապետում է իր թեմային: Նա քրիստոնեությունը համարում է հակա-պետական, գաղտնի ու դավադիր մի կազմակերպություն: Կելսոսը լուրջ գաղափարական թշնամի էր Որիգենեսի համար: Նա կոչ է անում քրիստոնյաներին, որ վերջ տան իրենց քաղաքական և կրոնական մեկուսացմանը և ենթարկվեն կայսրության հասարակաց կրոնքին և Հռոմին: Նրա քաղաքական մտահոգության հիմքը Հռոմեական կայսրության ապահովությունն է: Այդ պատճառով նա մեղադրում է քրիստոնեաներին, որ նրանք անջատողական քաղաքականությամբ տկարացնում են կայսրության ներքին միությունը և կոչ է անում նրանց օգնել կայսրին և պետությանը պաշտպանելու համար արդարությունը, խաղաղությունը կայսերական դրոշակի ներքո: Նա քրիստոնյաներին համարում է ամենամտանգավոր թշնամիները գոյություն ունեցող կարգերին, և կոչ է անում նրանց հրաժարվել իրենց մոլորությունից և ստանձնել կայսրության մեջ հասարակաց բարիքի և ապահովության համար, պաշտոններ և պաշտպան կանգնել օրենքի և ճշմարտության:

Որիգենեսի պատասխանը չի գրվել լոկ քրիստոնյա հավատացյալների համար, այլ ամբողջ կայսրության մտավորականության համար: Այն կրում է «խորունկ կրոնական համոզմունքների կնիք, ուժեղ անհատականության դրոշմ, որի մեջ միահյուսված են քրիստոնեական հավատը, գիտությունը և հեթանոս հակառակորդին թողնում են ըստվերի ներքո, իսկ ընթերցողին համոզում են հանդարտ և տրամաբանական տոնով»[31]:

Որիգենեսի «Ընդդէմ Կելսոսի» գործը գրվել է «անպիտան ի հաւատս» մարդկանց դարձի բերելու համար, և գրվել է 60 տարեկան հասակում, երբ հեղինակը ապրում էր իր ուժերի ծաղկման, իր մտավոր, հոգևոր հասունության ամենափայլուն շրջանը:

Որիգենեսը կետ առ կետ քննության է առնում Կելսոսի առարկությունները և հերքում դրանք: Մինչ Կելսոսը շեշտը դնում էր աշխարհիկ իշխանության, օրենքի և հեղինակության վրա, Որիգենեսը շեշտում է, որ պետության օրենքներին հանդեպ հնազանդությունը արդար կարող է լինել միայն այն դեպքում, երբ չեն հակադրվում աստվածատուր օրենքներին:

Որիգենեսի «Ընդդէմ Կելսոսի» աշխատությունը համարվում է «ամենաամբողջական պաշտպանությունը քրիստոնեության, որով հին դարերը կարող են պարծենալ»[32]:

«Ընդդէմ Կելսոսի» աշխատությունը մի կարևոր աղբյուր է հանդիսանում նաև կրոնների պատմության համար, որի մեջ որպես «հայելում հստակորեն երևում է պայքարը քրիստոնեության և հեթանոսության միջև: Այդ օրոքը հին եկեղեցու մեծագույն ջատագովությունն է»[33]:

4. Դավանաբանական գործեր.

Որիգենեսի այս բնագավառում ամենանշանավոր աշխատությունը համարվում է «Առաջին սկզբունքներ» կամ «Սկզբունքների մասին» (De principiis) գործը, որի մեջ հեղինակը մշակել և խորացրել է «աստվածաբանական քրիստոնեական առաջին սիստեմը և առաջին ձեռնարկը եկեղեցու հրամանակարգ վարդապետության (dogma)[34]: Որիգենեսի այս գործը համարվում է բացառիկ և միակ գործը հին Եկեղեցու ամբողջ պատմության մեջ: Գրվել է 220—230 թվականին: Բաղկանում է 4 գրքերից: Ֆի-

[31] Նույնը, էջ 52:

[32] The Encyclopedia americana, vol. 20, Origen, էջ 866—867:

[33] Quasten, նույնը, էջ 56:

[34] Նույնը, էջ 57:

լոկալիայում, Ս. Բարսեղն ու Ս. Գրիգոր Նազիանզացին մեջբերել են որոշ հատվածներ: Գրքի բովանդակությունն է «Աստված», «Աշխարհ», «Ազատություն» և «Հայտնություն»:

Որիգենեսը իր սույն աշխատության մեջ քննության է առել քրիստոնեական հավատքի հիմնական վարդապետությունները կամ սկզբունքները: Նրա դավանանքն է, «որ քրիստոնեական հավատքի և կրոնական ճշմարտության աղբյուրը՝ Աստվածաշունչն է, եկեղեցական և առաքելական ավանդությունը»:

Այդ աշխատությունը ցույց է տալիս միաժամանակ հեղինակի անվեհեր համարձակությունը, նրա հավատարմությունը իր հավատքին և դեպի Փրկիչը ունեցած անսակարկելի սիրո և նվիրումի:

Սույն հոդվածի նեղ շրջանակի պայմաններում երբեք հնարավոր չէ խոսել Որիգենեսի մատենագրական ողջ վաստակի, նրա աստվածաբանության առանձնահատկությունների, ամենասուրբ Երրորդության վարդապետության, եկեղեցաբանության, մկրտության և սկզբնական մեղքի, ս. Հաղորդության և վախճանաբանության, հոգիների նախագոյության և այլ կարևոր եկեղեցական-աստվածաբանական հարցերի մասին: Վերոհիշյալ հարցերով հետաքրքրվողները կարող են դիմել **Johannes Quasten**, Patrology, vol. II, էջ 41—101: **Migne**, Patrologia graeca. հատոր 11—17, 91—108 և այլ ուսումնասիրություններ:

(Շարունակելի)



ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԱՅՏԵ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՌՆԵՐԸ

Փայտի գեղարվեստական մշակումը ներտորեն շաղկապված է հայ ժողովրդի կենցաղին, նրա ապրելակերպին, նրա արհեստավորության բազմաթիվ ճյուղերին, կիրառական արվեստի տարբեր բնագավառներին: Փայտը ամառ էր, դաղդղան, գավազան, մոմակալ, վառոդաման, մահճակալ, դաջի կաղապար, կուժ, գաթանախշիկ, գրակալ, գահ, պատշգամբի ձևավորված հատված, եկեղեցու դուռ...: Հղկված փայտե տախտակը հատուկ մշակվում էր նկարի կամ սրբապատկերի համար, դառնում էր ձեռագրի կազմ: Փափուկ, հեշտ մշակվող և գեղեցիկ արտաքին ստացող փայտի առանձնահատկությունները հնարավոր են դարձրել այն ներմուծել ժողովրդի կյանքի զանազան բնագավառները: Կաղնու, հաճարենու, լորենու, ծիրանենու, դեղձի, ընկուզենու, թեղու ծառերը, որոնք այնքան առատ էին Հայաստանի տարածքում, անգնահատելի նյութ են դարձել ժողովրդական կիրառական արվեստի վարպետների համար:

«Պատմական տեղեկություններից երևում է, որ Հայաստանում փայտը բավական առատ էր, որովհետև, բացի Բասենի անտառներից, հիշատակվում են այնպիսի ընդարձակ անտառներ, որոնց տեղերում այսօր ոչինչ չկա. անկասկած է, որ ժամանակի ընթացքում այդ անտառները ոչնչացել են»—գրում է Թորոս Թորամանյանը[1]: Վանից հարավ-արևմուտք գտնվող Խիզանի գավառին էր պատկանում Կարճկանի գավառակը, որի անտառներում աճում էր դիմացկուն և պինդ «անտուճ» կոչված փայտը: Վանեցիք այս գավառն անվանում էին «փայտի երկիր»[2]: Ասորական մատենագիր Բար Հեբրայուսը վկայում է, որ Ամիդի եկեղեցին վերանորոգելու նպատակով Տարոնի տեր Աշոտ Բագրատունին իր երկրից շինափայտ է նվիրել: Հայաստանի ծառերից պատրաստված գերանները դուրս էին գալիս միջազգային շուկա, որից կահույք էին պատրաստում[3]: Մովսես Խորենացին գրում

---

[1] **Թորոս Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Հ. 1, Երևան, 1942, էջ 145:

[2] **Վրթանես Փափազյան**, Նամակներ Թուրքաց Հայաստանից: «Երկերի ժողովածու», հ. 5, Երևան, 1959, էջ 492:

[3] **Բաբկեն Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում: Հ. 1, Երևան, 1958, էջ 200;



Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու դռ.ոը։ 1134 թ.։ Երևան, Հայաստանի պատմության պետական թանգարան



Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու դուռը: Հատված: 1134 թ.: Երևան, ՀՊՊԹ

է, որ Արա Գեղեցիկի մահից հետո Շամիրամը Վանի մոտ կառուցում է քաղաք: Սրա համար կարգադրում է Ասորեստանից և իր իշխանության մյուս վայրերից բերել գործավարներ, այդ թվում՝ վեց հազար փայտագործ, քարգործ, պղնձագործ և այլ կարգի ընտիր արհեստավորներ[4]: Հայաստանի տարածքում փայտի գեղարվեստական զբաղմունքը տարածված է եղել դեռևս ուրարտացիների ժամանակ, որի օրինակները գտնվել են Կարմիր բլուրում: Հայաստանի հեթանոսական տաճարներում գոյություն են ունեցել նաև փայտե քանդակներ, որի մասին վկայում է Ագաթանգեղոսը: Թագավոր Տրդատն առաջարկում է Գրիգոր Լուսավորչին երկրպագել հեթանոսական կուռքերին, որից Գրիգորը հրաժարվում է, իր

[4] **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց: Երևան, 1968, էջ 99:

պատասխանի մեջ նաև ասելով. «...ի բաց թողէք այսուհետև գպղծութեան պաշտամունդ, զքարեղէն և զփայտեղէն, զարծաթեղէն և զոսկեղէն պղնձաձոյլ պատկերացդդ զի սուտ են և սնոտի»[5]:

Փայտի գեղարվեստական փորագրության բացառիկ օրինակներ են պահպանվել միջնադարյան հայկական մշակույթում, դռներ ու խոյակներ, գրակալներ ու խաչեր, որոնք գեղարվեստական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում:

Հատկապես նշանակալից են փայտի գեղարվեստական փորագրությամբ կատարված եկեղեցական դռները:

Գեղարվեստական բազմակողմանի առանձնահատկություններով ու արտահայտչականությամբ, պահպանված դռների թվում առանձնակի տեղ է գրավում Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու փայտյա դուռը:

Մշո դռան մասին առաջին գրավոր հիշատակությունը կապված է անցյալ դարի 90-ական թթ. հետ, երբ Մշո մասին գրված տպավորություններում ճանապարհորդը հիշատակում է նաև այս դռան «հիանալի» քանդակները[6]: 1914 թ., Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ, Նիկողայոս Մառի կազմած ծրագրով, Ա. Տեր-Ավետիսյանը 1500 հայկական ձեռագիր հավաքեց Թուրքիայի հայկական գավառներից և հանձնեց Էջմիածնի վանքի մատենադարանին: 1915 թ. Տարոնի գավառի ողջ բնակչությունը ևս կոտորվեց կամ գաղթեց, թալանվեց նրանց հարստությունը: 1916 թ. Ա. Տեր-Ավետիսյանը Բիթլիսում գտավ և Թիֆլիս տեղափոխեց Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու դուռը: 1925 թ. դուռը տեղափոխվեց Երևան և այժմ ցուցադրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (Թբիլիսիում պահպանվում է դռան կաղապարը):

Մշո դուռը (185×150) պատրաստված է սև կաղնու փայտից (Մշո չորս կողմը տարածված էին կաղնու անտառներ, որոնք շրջապատի բնակչությանը ծառայում էին նաև որպես վառելանյութ): Դռան վերևում կա մեկ տողից բաղկացած արձանագրություն. «Ի թ(վին) ՇՁԳ ես տ(է)ր Թորոս եւ Գրիգոր եւ Ղուկաս գծ(ող)»[7]: Նշանակում է, դուռը պատրաստված է 1134 թ.:

Այստեղ գործ ունենք եկեղեցու դռան բավականին բարդ հորինվածքի հետ: Դուռը երկփեղկանի է, ունի լայն և հաստ շրջանակ, երկու հավասար մասերի է բաժանվում մեջտեղի փայտե առանցքով: Դռան փեղկերը ծածկված են հատու գծերով փորագրված երկրաչափական զարդաքանդակներով, որոնք փնջաձև միանում են մեջտեղի մասում տեղադրված ութանիստ աստղերին[8]: Դրանք յուրաքանչյուր դռան վրա կազմում են չորսական ութանկյուն հարթություններ: Թորոս, Գրիգոր և Ղուկաս փորագրողները գտել են ընտրած կոմպոզիցիայի գեղարվեստական արտահայտման ինքնատիպ ճնարներ: Նախշերից դուրս մնացող դռան ազատ տարածությունները փորագրողները ծածկել են ընդբագեղ, թեթև սահող, շերտավոր փորվածքներով: Դռների գեղարվեստական ձևավորման մեջ ամենը ենթարկվում են փորվածքի խորությանը, գծի շերտի հաստությանը: Բազմանկյունիների ու աստղերի երիզները շատ ավելի հստակ են ընդգծված, որոնք և ստեղծում են ստվերներ, իսկ բարձր մնացած մասերում առաջացնում են զարդանախշերի ծավալային պատրանք: Գեղարվեստական ձևավորման տեսակետից, զարդաքանդակների բնույթով և փայտի փորագրման տեխնիկական ճնարներով այս աշխատանքին մոտ կանգնած դռներ հանդիպում են շատ ավելի ուշ շրջանում: Օրինակ. Սամելյուկների իշխանության ժամանակ կատարված մի դուռ՝ Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում, Իկոնիայից բերված դռներ՝ Ստամբուլի Չինիլի-Քյոշք թանգարանում և այլն: Մշո դռան համար նախատիպ կարող էր հանդիսանալ եթե ոչ այդ կոնկրետ դուռ, ապա պարսկական, հատկապես սասանյան շրջանի հեռավոր

---

[5] Բ. **Առաքելյան**, Քանդակագործությունը հին Հայաստանում (VI դ. մ. թ. ա.—III դ. մ. թ.): «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 57:

[6] **Ավետիս**, Մուշ: «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1890, գիրք Ա, հունիս, էջ 17—29:

[7] Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների: Պրակ 1. **Եվգենյա Մուշեղյան**, Հայերեն արձանագրությամբ առարկաներ: Երևան, 1964, էջ 60: Դուռը պատմա-բանասիրական հիմնավոր վերլուծության է ենթարկել հայ արվեստի երախտավոր Գարեգին արքեպս. Հովսեփյանը. «Տարոնի ս. Ղազարի կամ Առաքելոց վանքին դուռը»: «Զուարթնոց» տարեգիրք, Կահիրե, 1937, էջ 146—150:

[8] Զարդանախշի մի ձև, որը լայն տարածում ուներ արևելյան երկրների փայտի գեղարվեստական փորագրության մեջ, հատկապես արաբական արվեստում, արաբյանների թագավորության շրջանում:

մի նախօրինակ, որի վկայությունը դռան շրջանակն է[9]:

Դուռը փորագրող վարպետները ազատ չեն թողել ոչ մի հատված: Նրանք փորագրել են նաև դռան հիմնական հարթությունների շուրջն ընկած տարածությունները, որոնք ամբողջացնում են կոմպոզիցիան և նախապատրաստում շքեղ շրջանակի անհրաժեշտությանը: Վերջինս բոլորովին առանձին է մտածված, հարուստ զարդաքանդակներով ծածկված փայտի լայն երիզ է և երեք կողմից շրջափակում է դուռը: Շրջանակի երեք կողմերն ունեն փորագրության երեք տարբեր մոտիվներ:

Փորագրող վարպետների համար կարևորը դռան վերևի մասն է, որի մեջտեղում պատկերված մունետիկի ֆիգուրով այն բաժանվում է հավասար հատվածների: Յուրաքանչյուր մասում երկուական հեծյալ է պատկերված: Հեծյալներից մեկի վերևի «Տրդատ» գրությունը Գ. Հովսեփյանը համարում է ուշ ժամանակների «անշնորհք գիր» և այն միտքն է հայտնում, որ դուռը Մամիկոնյան իշխաններից մեկի՝ Ծորտանուել Ա-ի կամ նրա որդու՝ Վիգենի մի քաջագործությունն է պատկերում, իսկ դուռը զոհաբերական նվեր է եղել այդ հաղթանակին[10]:

Դռան շրջանակի երկու կողմերից ցած են իջնում առասպելական կենդանիների պատկերումներ. սֆինքսներ, զարդանկար թևերով թռչուններ, առյուծներ, փղեր, գոմեշներ, ունգեղջյուրներ, հուշկապարիկներ, ինչպես նաև հեծյալներ և այլն: Սրանց առկայությունը վկայում է սասանյան ժամանակների արվեստների հետ ունեցած Մշո դռան գեղարվեստական ձևավորման կապի մասին: Դա արդարացված է նաև ժամանակի տեսակետից ևս: Թարմ էին չորս դար առաջ իր ծաղկումն ապրող սասանյան արվեստի ավանդները, որոնք իրար էին հանձնում արհեստավոր սերունդները: Ավելին: Մշո Առաքելոց վանքի դռան զարդաքանդակները աղերսներ ունեն նաև իսլամական ժամանակների արվեստների հետ, որին հարմարեցրել են շատ ավելի վաղ արված դռան շրջանակը: Բացառիկ վարպետությամբ է օգտագործված շրջանակի հաստ փայտի շերտը: Ֆիգուրների պատկերման ժամանակ փորագրողները դիմում են խորը փորվածքի, ազատվում են փայտի ավելորդ մասերից, ֆիգուրների ձևերը լուծելով քանդակային հստակությամբ: Զինված հեծյալները դրված են որոշակի շարժման մեջ, դեմքերի միօրինակությունը խախտվում է զգեստների դետալների միջոցով՝ անհատականացման ձգտմամբ: Բացառիկ վարպետությամբ են քանդակված կանգնած կամ սլացքով ընթացող ձիերը ուրվագծային հստակ ընդգծվածությամբ, դեկորատիվ նուրբ գեղեցկությամբ: Այս առանձնահատկությունները բնորոշ են նաև շրջանակի կողերի մյուս զարդաքանդակներին: Կենդանիները դասավորված են ռիթմիկ, համաչափ հեռավորության վրա, օժտված են ներքին լարված շարժումով: Նրանց արտահայտչականությանն օգնում է նաև ոլորապտույտ բուսական զարդաքանդակը, որը շքեղ տարածված է երիզի ողջ մակերեսով, անցնում է կենդանիների ֆիգուրների կողքով ու նրանց բաժանում իրարից: Հիացնում է վարպետների կողմից փայտի փորվածքին տիրապետելը, ինչպես նաև նրա կարողությունները լրիվ օգտագործելու նրանց բացառիկ իմացությունը: Մի կողմից առկա է խորը փորվածքը, որից կենդանիների պատկերումները ստանում են քանդակային հստակ լուծումներ: Մյուս կողմից զարդանախշերն արված են ռելիեֆային և գծային փորագրությունների տեխնիկայով, որոնց շնորհիվ դրանք հարստացնում են միջավայրը, լցնում երիզի դատարկ տարածությունները և օգնում նրա կառուցվածքի ամրությանը:

Մշո Առաքելոց վանքի դուռն իր գեղարվեստական արժանիքներով, իր զուտ աշխարհիկ թեմատիկայով ու կերպարներով զարգացած միջնադարի մշակույթի արտահայտության այն փայլուն օրինակներից է, որտեղ մերվում են հայ կիրառական արվեստի զարգացման տենդենցները, շաղկապված հարևան ժողովուրդների արվեստների ավանդներին:

Մեզ հասած հնագույն դռներից է Սևանի Առաքելոց վանքի արևմտյան կողմի մուտքի փայտե դուռը (178×110, Հայաստանի պատմության պետական թանգարան): Դուռն ունի հետևյալ արձանագրությունը. «Ի թվ(ին) հայոց ՌԻԵ (1176) նորոգեցաւ դուռն ս(ուրբ) եկեղեցոյս հրամանաւ իշխանաց իշխան Քրդին եւ ձեռամբ Յոհանիսի հիւսանն, որք ընթեռնոյք յիշեսջիք»: Այս հուշարձանի առաջին ընկարագրությունը պատկանում է Մայր Աթոռի միաբան Հովհաննես եպիսկ. Շահխաթունյանցին, որը բերում է արձանագրությունը, նշում, որ դուռն ընկուզենուց է և հնությունից կարծ-

[9] Այս միտքն առաջին անգամ հայտնել է Ա. Տեր-Ավետիսյանը. Резная дверь 1134 г. из окрестностей гор. Муша. «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе». т. III, Тифлис, 1925.

[10] **Գարեգին արքեպս. Հովսեփյան,** նշված աշխ.:

Սևանի Առաքելոց եկեղեցու դուռը: 1486 թ.: Երևան, ՀՊՊԹ

ռացած[11]: Ինչպես երևում է արձանագրությունից, դուռը պատրաստվել է 1176 թ., Հովհաննես հյուսնի ձեռքով:

Սևանի Առաքելոց վանքի արևմտյան մուտքի դուռը ժամանակի փայտի գեղարվեստական փորագրության ինքնատիպ օրինակ է, որտեղ վարպետը կարողացել է համամասների միասնականության և զուսպ փորագրության միջոցով հանդես բերել գեղարվեստական ընդհանրացման կարողություններ: Հովհաննես հյուսնի նպատակը միայն գեղարվեստական ձևավորում ունեցող դուռ ստեղծելը չէ: Նա դռան համար պատրաստում է ծանր ու հաստ շրջանակ, որի հարթ տարածությունը լցնում է եռաշար, իրար կողքի դասավորված քառակուսի խաչերով: Դրանց խորը քանդակված հաջորդականությունը վարպետն աշխուժացնում է գծային փորվածքով արված խաչերով: Վարպետն ունի ծավալի զգացողություն, փայտի ծանրությունը թեթևացնելու հմտություն: Ճարտարապետական ֆունկցիայից զատ, դռան շրջանակը կատարում է նաև գեղարվեստական երիզի դեր: Դուռն իր հերթին ներկայացնում է խաչքար, որի կենտրոնական մասը գրավում է երկարաձիգ զարդաքանդակ խաչը՝ շրջապատված ոճավորված արմավազարդերով: Խաչի ցածի մասը դատարկ է, համաչափ փորվածք ունեցող կետերով լցված, որը խաչքարի պատվանդան է հիշեցնում:

Եկեղեցիների համար փորագիր փայտյա դուռեր ստեղծելը տարածված արվեստ էր միջնադարյան Հայաստանում: Պահպանված հետաքրքիր օրինակներից է Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու դուռը (Հայաստանի պատմության պետական թանգարան): Դռան կոմպոզիցիան ավանդական «խաչքարային է»՝ վարդյակի վրա կանգնեցված խաչով: Վարպետը փայտի ազատ տարածությունը ծածկում է բարդ կորագծերից կազմված երկրաչափական ու բուսական զարդաքանդակներով: Նա հատկապես շեշտում է զարդագծերի ծավալայնությունը, որին հասնում է թեթև կամ խորը փորվածքներով: Ըստ պահպանված արձանագրության դուռը նորոգվել է 1253 թ. (ՋԲ), Տեր Հայրապետի կողմից[12]:

Խաչի տարբերակներով ստեղծված դռներից հետաքրքիր է Վարագա վանքի դուռը: Երկփեղկ դռան ողջ տարածությունը ծածկված է իրար մեջ հագնող եռանկյունիների համաչափ շարքերով, որոնք կատարված են խորը փորվածքով: Բարձրաքանդակ փորվածք ունեցող արաբեսկների կողքին վարպետը տանում է մի ոչ շատ խորը գիծ, որից զարդանախշերը դառնում են ավելի նրբագեղ: Դռան վերևում տեղադրված խաչերն ունեն ժանեկանման փորագրություն և հիշեցնում են XII—XIII դդ. խաչքարերը[13]:

Խաչքարերի ու փայտյա դռների անմիջական կապը հաստատող օրինակ է նաև Սևանի Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու հարավային դուռը (175×91, 1466 թ., Հայաստանի պատմության պետական թանգարան): Անշուշտ, դռան ամենակարևոր առանձնահատկությունը նրա տարածքում տեղադրված այուժետային տեսարանն է, չնայած ընդհանուր գեղարվեստական կերպարը դարձյալ խաչքարային է:

Դռան կոմպոզիցիայի չորս կողմում տեղադրված է արձանագրությունը, որի հիմնական հատվածն է. «Զհա(յոց) թվ(ա)կանի ԼԵ թիւ ավելի յաթ(ո)ռա(կալ)ութե(ան) տ(եառ)ն Սարգսի, ի խանութեա(ն) Յաղուպ բեկի, ծաղկեցաւ դուռն տաճարիս Առաքելոցն Ք(րիստոս) ի հրամ(ա)նաւ ս(ուր)բ վ(ար)դ(ապետ)ի եռամեծիս Դանիէլի եւ սիրելի որդւոյ սորին եպիս(կոպոս) տ(է)ր Ներսեսի Զեռ(ա)մբ սորին աշակերտի անարժանիս Աբրահամի. Նաեւ եղբաւր մեր սիրելի շնորհաւք ի լի Գր(ի)գ(որ)իսի»[14]: Դռան ցածի մասում՝ ավանդական վարդակ է, հյուսվածքով փորագրված, շուրջն ունենալով եռատերևի և արմավենու ցողուններ, որոնք, ըստ Գարեգին Հովսեփյանի, շատ տարածված ու սիրված մոտիվներ են XIII դ. մանրանկարչության մեջ[15]: Կոմպոզիցիայի վերին մասում զգալի դեր

[11] **Հովհաննես եպիսկ. Շահխաթունյանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ: Էջմիածին, 1842, հ. Բ. էջ 212: Հետագայում այս հուշարձանին անդրադարձել են **Մեսրոպ արքեպ. Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գավառին: Վաղարշապատ, 1895, **Ղ. Ալիշան**, Սիսական: Վենետիկ, 1893, **Ե. Լալայան**, Գեղարքունիք կամ Նոր Բայազետի գավառ: Թիֆլիս, 1908, գիրք 17, **Գ. Հովսեփյան**, Խաղբակյանք կամ Պողոյանք հայոց պատմության մեջ: Վաղարշապատ, 1928, **Եվգինե Մուշեղյան**, նշվ. աշխ.:

[12] Չափերն են՝ 190×150: Տաթևից բերվել է 1931 թ. երկրաշարժից հետո, կենտրոնական մասը կոտրված վիճակում:

[13] Դռան ճակատագիրը հայտնի չէ: Լուսանկարը տեղավորված է՝ Walter Bachman, Kirchen und Moschen in Armenien und Kurdistan Lezigpi 1913, tab. 30.

[14] **Շահխաթունյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 213:

[15] **Գարեգին արքեպս. Հովսեփյան**, Սևանի Առաքելոց վանքի հարավային դուռը: «Անահիտ», Փարիզ, 1932, № 5—6, էջ 39—40:

Սևանի Առաքելոց եկեղեցու դուռը: Հատված: 1486 թ.: Երևան, Հայաստանի պատմության պետական թանգարան

են խաղում կորագծերը, որոնք դառնում են այուների վրա խարսխված կիսակամարներ, մեկը մյուսի շարունակությունն են կազմում և իրենց մեջ են առնում այուժեի մեջ կարևոր տեղ գրավող գործող անձանց: Դռան վերևի մասում փորագրված է գահին նստած Քրիստոսը: Նրա երկու կողմերից երևում են Արծվի, Եզան, Առյուծի և Հրեշտակի խորհրդանիշերը: Մյուս գործողությունները տարածվում են դեպի ցած. Քրիստոսի ներքևում՝ խաչն է, որի երկու կողմերում կանգնած են Հովհաննես Մկրտիչն ու Աստվածամայրը, Ստեփանոս Նախավկան և Գրիգոր Լուսավորիչը: Մեջտեղում փորագրված Սուրբ Հոգու գալստյան տեսարանի՝ դեպի ցած թռչող աղավնու

կտուցից իջնող լույսի ճառագայթների երկու կողմերում նստած են տասներկու առաքյալները: Նրանցից ցած պատկերված են աղոթող վեղարավորները, Դանիել վարդապետն ու Ներսես եպիսկոպոսը, որոնք և դռան պատվիրատուներն են: Սուրբ հոգու ցածում տեղադրված կամարակապ հատվածում եռաֆիգուր մի կոմպոզիցիա է: Գ. Հովսեփյանը գտնում է, որ կենտրոնում կանգնած թագակիրը՝ բյուզանդական կայսերական զգեստավորմամբ, մարմնավորում է տիեզերքը, իսկ մարդկային գլխով և ծոծրակին ամրացված շան գլխով անձնավորությունը հեթանոսության խորհրդանիշն է (սրա կողքին պարթևական տարազով մի կերպար կա)[16]: Աղավնակերպ Սուրբ Հոգին, շուրջը նստած առաքյալներն ու կամարի տակ պատկերված տարբեր ազգերի ներկայացուցիչները XI դարի մանրանկարչության մեջ ընդունված պատկերագրությունից են թելադրված:

Սևանի Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու հարավային դուռը գրավել է նաև Մ. Վագների ուշադրությունը, որը գրել է. «Գլխավոր մուտքի դռները կազմված են օրինակելի փայտե փորագրություններից, որոնք ներկայացնում են ամեն տեսակի զարդարանքներ և ֆիգուրներ»[17]: Այսօրինակ գնահատությունը հատկապես արժեքավոր է, եթե նկատի ունենանք, որ Մ. Վագները շատ զգույշ է Հայաստանում տեսած գեղարվեստական արժեքները գնահատելիս:

Ո՞րն է այս աշխատանքի լայն տարածում ստանալու և բարձր գնահատվելու գաղտնիքը. գեղարվեստական մտահղացումն ու այն իրականացնելու մեծագույն հմտությունը, որը Հ. Ղ. Ալիշանն անվանում է «ճարտարագոյնս»[18]:

Աբրահամ վարպետի աշխատանքի հմտությունն արտահայտվել է թեմայի ընտրության, նրա պարզ արտահայտչականության համար գտնված մեկնաբանման մեջ: Այստեղ մենք գործ ունենք բազմապլան սյուժեի և բազմաթիվ կերպարների հետ: Վարպետը ձգտում է գործող անձանց անհատականացման, գտնում է նրանց բնորոշող տարբեր դետալներ: Նա օգտագործում է և՛ բարձրաքանդակի, և՛ հարթաքանդակի հնարներ: Փորագրում է ազատ, հմուտ, ձևերին տալով թեթևություն, մոտենալով նաև գեղանկարչական արտահայտչականության: Հավանական պետք է համարել վարպետ Աբրահամի գրիչ և մանրանկարիչ լինելը, քանի որ, ինչպես վկայում է Գ. Հովսեփյանը, 1471 թ. մի Ավետարանի հիշատակարանում հանդիպում ենք Դանիելի աշակերտ «զԱբրահամ անվարժ գրչիկս» արտահայտությանը, իսկ Մատթեոսի պատկերի տակ կա «զԱբրահամ նկարիչ յիշեա եւ ասա միշտ տր. ողորմեա»[19]: Դռան ողջ կոմպոզիցիան վերցված է փայտի տարբեր կտորներից ստեղծված շրջանակի մեջ, որի զարդանախշերն աղերս ունեն արևելյան զարդաքանդակների հետ: Գ. Հովսեփյանն այն կարծիքն է հայտնում, որ շրջանակը կարող է շատ ավելի հին լինել[20]: Բոլոր դեպքերում, եթե անգամ Աբրահամ վարպետը օգտվել է հին օրինակներից, ապա օգտվել է հմտորեն, ճաշակով, վարպետության ակնհայտ կարողություններով: Շրջանակի վրա տեսնում ենք թեթև և նրբագեղ արված խաչեր, ծաղիկների ոճավորված վեցյակներ, հավերժության խորհրդանիշեր և այլն, որոնցից դուռը որոշակի շքեղություն է ստանում:

Թարգմանչաց եկեղեցու փայտյա դռները բացառիկ չեն եղել Սևանի վանքում: Ինչպես նշվում է մի Ավետարանի հիշատակարանում, վարպետ Դանիելը, վերոհիշյալ դռան պատվիրատուն

«զարդարէ եկեղեցի,
եւս առաւել զՍևան կղզի
ի զանազան զարդ պերճալի,
պճնեալ ի տիպս հրճուելի»[21]:

(Շարունակելի)

[16] Նույն տեղում, էջ 39—40:

[17] **Wagner Moriz**, Reise nach dem Ararat und dem Hochland Armenien. Stuttgart und Tübingen 1848, p. 30.

[18] **Հ. Ղ. Ալիշան**, Սիսական: Վենետիկ, 1892, էջ 84:

[19] Նույն տեղում, էջ 35—36:

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում:



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻ
(1909—1981)

Փետրվարի 23-ին Երուսաղեմում, Ս. Հակոբյանց վանքում, ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Ս. Հակոբյանց Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյանը:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը, Ս. Հակոբյանց միաբանությունը ծանր կորուստ կրեցին Տ. Հայրիկ արքեպիսկոպոսի մահով:

Հանգուցյալը (ավազանի անունով՝ Սիմոն) ծնվել է Աղբակում (Վան) 1909 թվականին, գյուղի ռեսի ընտանիքում: Ծնողների յոթ զավակների միջնեկն էր հանգուցյալը:

Փոքրիկ Սիմոնը մանկական վաղ հասակից ճաշակել է որբության դառնությունը:

1915 թվականին, Վանից դեպի Սալմաստ-Պարսկաստան տարագրության և նահանջի ճանապարհի վրա, նա կորցնում է իր հոգեհատորներին, որոնք ընկնում են մարտի դաշտում, թշնամու դեմ մղած անհավասար գոյության կռվում, իսկ ինքը մահից ազատված հրաշքով, վիրավոր սրտով ընկնում է Պաքուպայի (Իրաք) Տարագրելոց հայկական որբանոցը, նույն տխուր ճակատագրին ենթարկված բազմահարյուր հայ որբերի հետ:

1922 թվականին պատանի Սիմոնը մի խումբ ուսանողների հետ փոխադրվում է

Երուսաղեմի Արարատյան որբանոցը՝ է՛լ ավելի հիմնավոր հայեցի դաստիարակություն ստանալու համար:

1924 թվականին Սիմոնն ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, և այդ օրվանից նրա կյանքն ու գործունեությունը ընդմիշտ կապվում է այդ շատ սիրելի Հաստատության անվան հետ:

Հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի քառամյա դասընթացը, Սիմոնը սարկավագ է ձեռնադրվում 1928 թվականին Դուրյան Եղիշե պատրիարքի ձեռքով: Ապա անդամակցելով Ս. Աթոռի միաբանության, 1932 թվականին ավարտում է Ընծայարանի աստվածաբանական դասընթացը և կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Թորգոմ պատրիարքից՝ օծակից ունենալով Եղիշե, Տիրայր և Ասողիկ վարդապետներին:

Երիտասարդ, գործունյա Հայրիկ վարդապետի առաջ բացվում է վանական-վարչական պատասխանատու պաշտոնների ասպարեզը: 1933—1939 թվականներին նա ձեռնհասորեն վարում է Ս. Հակոբյանց վանքի ավագ թարգմանի պաշտոնը, որը մի տեսակ յուրահատուկ ներկայացուցչություն է Պատրիարքարանի և կառավարության, հայոց վանքի և մյուս կրոնական այլ հարանվանությունների միջև:

Նույն տարիներին նա Ժառանգավորաց վարժարանում դասավանդել է գրաբար լեզու ու Հայ Եկեղեցու պատմություն:

1939—1941 թվականներին Հայրիկ վարդապետը վարում է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի կալվածոց տեսչությունը:

1941—1953 թվականներին նա անդամ և ատենապետ է ընտրվում Տնօրեն ժողովի:

1947—1955 թվականներին, համատեղության կարգով, կատարում է նորից վանքի ավագ թարգմանի պաշտոնը:

1961 թվականից Տ. Հայրիկ սրբազանը ընտրվում է Ս. Հակոբյանց Մայր տաճարի լուսարարապետ, պաշտոն, որը նա վարում է մինչև իր մահը:

Հանգուցյալը ազնիվ, սրտաբաց, հյուրասեր ու բարի հոգևորական է եղել, Ս. Հակոբյանց միաբանության ճանաչված ու սիրված անդամներից մեկը:

1955 թվականի հոկտեմբերի 6-ին հանգուցյալը Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվում Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետից՝ օծակից ունենալով Տ. Հայկազուն, Տ. Պարգև, Տ. Սերովբե, Տ. Շնորհք, Տ. Վարդան և Տ. Եզնիկ վարդապետներին:

1963 թվականի հոկտեմբերին Տ. Հայրիկ եպիսկոպոսը արժանանում է, Վեհափառ Հայրապետի տվչությամբ, արքության պատվի՝ իր հոգևոր, վարչական ծառայությունների համար:

Հանգուցյալի մահվան առիթով Վեհափառ Հայրապետը հետևյալ ցավակցական հեռագիրն ուղարկեց Երուսաղեմի հայոց ամենասատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքին.

«Վշտով կմասնակցինք Սուրբ Աթոռիդ սուգին՝ աղոթելով, որ Աստված խաղաղությամբ ընդունի ի Տեր հանգուցյալ լուսարարապետ Հայրիկ արքեպիսկոպոսին հոգին և արժանի ընե երկնից արքայության:

Սուրբ Էջմիածնեն օրհնություն և լույս Հայրիկ սրբազանի հիշատակին և վաստանին: Անսասանություն Առաքելական Սուրբ Աթոռիդ և արևշատություն Ձերդ Ամենապատվության»:

Մարտի 1-ին, կիրակի.—Բարեկենդան: Հավարտ ս. պատարագի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Տ. Հայրիկ արքեպ. Աղվանյանի հիշատակին նվիրված հոգեհանգստյան կարգ:

Հանգի՜ստ Տ. Հայրիկ արքեպիսկոպոսի ոսկորներին:



ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Լրացավ հայ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի բազմերախտ գործիչ, ականավոր կոմպոզիտոր, խմբավար ու մանկավարժ **Մակար Եկմալյանի** ծննդյան 125 տարին: Անցած տասնամյակների ընթացքում Եկմալյանի անունը ոչ միայն չի մոռացվել, այլև ազգային երաժշտական ժառանգության երկնակամարում գնալով ավելի է փայլում նոր երանգներով, շարունակ ավելի պարզ է գծագրվում իր ժողովրդի համար Եկմալյանի կատարած գործի պատկառելի արժեքը:

Մ. Եկմալյանի ստեղծագործությունը արգասիք է հայ կոմպոզիտորական արվեստի զարգացման այն կարևորագույն շրջանի, երբ այդ արվեստում մշակվում էին ազգային ոճի հիմքերը: Այս առումով Եկմալյանի ներդրումը՝ ազգային լեզվով արտահայտվելու նրա հայտնաբերած միջոցներն ու եղանակները, շատ որոշակի նշանակություն ունեցան հայ երաժշտության՝ Կարա-Մուրզայից դեպի Կոմիտաս տանող վերելքի ճանապարհին:

Դրա հետ մեկտեղ Եկմալյանի երկերը մեծ դեր խաղացին ժողովրդի մեջ բազմաձայնության ճաշակ արմատավորելու գործում, զգալի նպաստեցին ժողովրդի ինքնաճանաչմանը, նրան հայրենասիրական ոգով դաստիարակելուն:

Եկմալյանի աշխատանքը Ներսիսյան դպրոցում զորեղ ազդակ դարձավ ազգային երաժշտական մանկավարժության և խմբավարական արվեստի զարգացման համար: Նրանից ուսում ստացած մի շարք հայ պատանիներ հետագայում դարձան նշանավոր երաժիշտներ...

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս Մ. Եկմալյանի գործունեության **պատմական** անուրանալի նշանակությունը: Նույնքան կարևոր է և այն, որ կոմպոզիտորի երաժշտական երկերը չմնացին որպես սոսկ թանգարանային նմուշներ: Դրանք գեղարվեստական շրջանառության մեջ են և իրենց խոր բովանդակալիությամբ ու վառ ինքնատիպությամբ մշտապես գրավում են և՛ հայ, և՛ այլազգի ունկնդիրների: Սրանով երևան է գալիս Եկմալյանի գործունեության նաև **արդիական** նշանակությունը:

Մ. Եկմալյանի ստեղծագործական ժառանգությունը (եթե մի կողմ թողնենք ուսումնական աշխատանքները) ժանրային առումով ընդարձակ չէ՝ լինելով գրեթե բացառապես երգեցողական (գերազանցապես՝ խմբերգային), բաղկացած հայ հոգևոր ու ժողովրդական երգերի մշակումներից և ժողովրդական սկզբնաղբյուրից անկախ մի քանի այլ գործերից: Պատկառազդու է, սակայն, այդ ժառանգության կշիռը, հարուստ ու բազմազան՝ դրա բովանդակությունը:

Ներկայումս լիովին պարզ է, որ Եկմալյանի **Պատարագը** իր բազմաբնույթ երաժշտական արտահայտչությամբ, խոր խոհականությունից ու հոգևոր քնարականությունից մինչև դրամատիկական լարումներ ու վիպական շունչ, լոկ միայն արարողական երկ չէ, այլ նաև լիարժեք համերգային գործ, ինչպիսիք են այլ ժողովուրդների



նշանավոր կոմպոզիտորների նույնատիպ ստեղծագործությունները: Որպես այդպիսին, Պատարագի գեղարվեստական արժեքը պայմանավորվել է նրանով, որ այդ աշխատության համար հեղինակը կարողացել է նրբորեն ընտրել հնավանդ հոգևոր եղանակների լավագույն նմուշներ, դրանք հմտորեն ու ճաշակով խմբագրել է, ներդաշնակելիս չի խաթարել, չի մթագնել, այլ ավելի ցցուն երևան է բերել ընտրած եղանակների ի սկզբանե ժողովրդական հիմքը, ժողովրդական ոճին դրանց անվիճելի հարազատությունը և, վերջապես, Պատարագը (բոլոր երեք տարբերակները) հեղինակն իրականացրել է ոչ թե որպես հոգևոր երգերի շարան, այլ որպես խոշոր չափանիշի



ամբողջական երաժշտական երկ:

Եկմալյանի հայրենասիրական **«Հայ ժողովրդական երգերի շար»-ը, «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»,** վիպասանության խոսքերով գրված **«Լռեց...»** ընդարձակ խմբերգը և մյուս նման գործերը ոգեշնչված են Ռափայել Պատկանյանի բոցաշունչ քնարով: Դրանք մի յուրատեսակ հնչող հուշարձան են դարձել հայրենասեր բանաստեղծին ու նրա պոեզիային և մնում են որպես մեր ժողովրդի համար անվերապահորեն գնահատված ու սիրված խմբերգեր:



Նույնքան գնահատելի են **գյուղական ու աշուղական երգերի** վերջերս երևան բերված մշակումները, այն երգերի, որոնց մեղեդիները, ինչպես հայտնի դարձավ արխիվային նյութերի ուսումնասիրությունից, Եկմալյանին տրամադրել է Կոմիտաս վարդապետը 1895-ին, երբ նրա մոտ վարժվում էր երաժշտության տեսությունից: Այդ մշակումները փաստորեն ժողովրդական կյանքի տարբեր արտահայտումների մասին մտերմիկ ու հուզաթաթավ պատումներ են: Վարպետության առումով դրանցում առանձնապես գրավիչ են բազմաձայնի՝ անմիջականորեն ժողովրդական մտածելակերպից բխող նոր հատկանիշները: Ոճի մի կուսական մաքրություն է հատուկ այդ երգերին, ողջախոհությունն է բուրում դրանցից: Գյուղական երգերի հրապարակումով Եկմալյանի ստեղծագործության մինչ այդ հայտնի եղած աշխարհիկ հատվածը իր ծավալով էլ կրկնապատկվեց:

Եկմալյանի աշխարհիկ ստեղծագործություններում կան շատ տխուր էջեր: Թերևս ինչ-որ չափով դա բխել է հեղինակի անձ-

նական խառնվածքից: Բայց կան նաև անկաշկանդ ուրախության պահեր, դրամատիզմի ու հերոսականության տարրեր, անկեղծ պաթետիկա...

Մ. Եկմալյանի ամբողջական գործունեության ուսումնասիրությունը գտնվում է շարժուն վիճակում, որովհետև նույնպիսի վիճակում է գտնվում նրա երկերի հայտնաբերումը՝ լինեն դրանք մաքրագրված թե սևագիր թերթիկների վրա: Երևան եկող և ուսումնասիրվող ամեն մի նոր թերթիկը մի նոր էջ է ավելացնում կոմպոզիտորի գործունեության նկարագրին կամ նրա բուն ստեղծագործությանը:

Ստորև ներկայացվում են Եկմալյանի ուշ տարիների աշխատանքներից մինչև այժմ անծանոթ մնացած մի քանի էջեր.

Կոմպոզիտորի ձեռագրերի ուսումնասիրությունից ներկայումս երևում է, որ 1896-ին, Պատարագի տպագրությունն ավարտելուց հետո, նա զբաղվել է ոչ միայն վերը հիշատակված գյուղական երգերի մշակումով, այլ նաև շարունակել է հոգևոր երգերի մշակում-դաշնակումը: Այսպես, այստեղ առաջին անգամ հրապարակվող «Հրաշափառ Աստուած» շարականը՝ դաշնավորված քառաձայն միասեռ խմբի համար, Սբ. Ներսեսին նվիրված «Այսօր վերստին նորոգեցան» երգը, Պատարագի մաս կազմող ԳՋ «Տէր, ողորմեա» և «Փառք քեզ, Տէր» նոր հատվածները,—այս բոլորը գրված են 1898-ին, իսկ «Այսօր երկնայինքն ուրախացան» շարականը գրված է ավելի ևս ուշ՝ 1901-ի ապրիլին, ու կոմպոզիտորի թերևս վերջին աշխատանքներից է:

Այս բոլոր կտորները, Եկմալյանի աշխատանքային կենսագրությանը լրացուցիչ տվյալներ բերելով հանդերձ, գրեթե բոլորն էլ ունեն նաև մասնավոր հետաքրքրականություն:

Այսպես, օրինակ, ԳՋ «Տէր, ողորմեա»-ն, ինչպես և տպագրված Պատարագի նույնանուն հատվածը Նիկողոս Թաշճյանի գրառած ու տպագրած միաձայն պատարագներում (1874 և 1878) չկան, ուրեմն երկուսն էլ հետագայում Եկմալյանի կողմից գրառված և հաստատապես էջմիածնական եղանակներ են: Ներդաշնակման կերպը երկուսում էլ նույնն է, բայց այս նոր «Տէր, ողորմեա»-ում եղանակի չափը կենտ է (հիշեցնենք, որ իր ընդարձակ Պատարագում Եկմալյանը կենտ չափ գործածել է միայն մեկ դեպքում՝ «Յամենայնի» հատվածի երկու տարբերակների սոսկ առաջին կեսերում), և արդեն իր այդ «գնայուն» ընթացքով հետաքրքրական է:

Հայտնի է, որ 1898 թ. գարնանը «Արարատ» ամսագրում Կոմիտասը զետեղել է Եկմալյանի Պատարագը բարձր գնահատող և միաժամանակ դրա վերաբերյալ որոշ դիտողություններ պարունակող ընդարձակ հոդված, որին Եկմալյանը նույն տարվա ամռանը, դարձյալ «Արարատ»-ի միջոցով, բորբոքված ժխտողական պատասխան է տվել: Ըստ երևույթին, իր պատասխանը գրելուց հետո, Եկմալյանն այնուամենայնիվ անդրադարձել է Կոմիտասի դիտողություններին, և դրա հետ է կապված «1898, դեկտեմբեր» թվական կրող այս «Տէր, ողորմեա»-ն, որտեղ թվում է, թե Կոմիտասի դիտողությունները նկատի են առնված*: Անշուշտ, անկախ դրանից էլ, սա ընդհանրապես գեղեցիկ եղանակ է նույնքան գեղեցիկ դաշնակումով (հատկացված է եռաձայն խմբի, հաջողությամբ կարող է կատարվել նաև մեներգով՝ երկձայն խմբի ուղեկցությամբ):

«Փառք քեզ, Տէր» հակիրճ հատվածը նույն եղանակն ունի, ինչ որ Պատարագում է, բայց այստեղ էլ նշմարվում է Եկմալյանի ներդաշնակման մեթոդի այն էվոլյուցիան, որ ավելի պարզորոշ երևան է եկել գյուղական երգերի մշակումներում (կիրառված է, օրինակ, ձայների «նշանակում», որ հետագայում, ի դեպ, Կոմիտասը ևս նույն «Փառք»-ի մեջ մշտապես կիրառել է): Վերջապես, 1901-ին գրված «Այսօր երկնայինքն» շարականը (Կանոն Պէնտեկոստէին երրորդ աւուր) գրեթե առեղծվածային է. ձայնեղանակը ոչ թե ԲԿ է, ինչպես տպագրված Շարակնոցում (էջ 628), այլ՝ ԱՋ, «դարձվածք» վերջավորությամբ. հետևաբար՝ դարձյալ մի նոր, թերևս դարձյալ էջմիածնական տարբերակ: Սա հայ ժողովրդական և հոգևոր եղանակների այն հետաքրքրական նմուշներից է, որոնք, շարունակ մի որոշակի ձայնեղանակում ընթանալով, վերջում անսպասելի դարձ են կատարում, ավարտվում նոր հիմնաձայնով ու դրանով առատ երանգավորում երգը: Ներկա ներդաշնակման մեջ արդյունավետ կերպով հաշվի է առնված երգի այդ հատկանիշը (տես՝ նոտային օրինակները):

(Նոտային օրինակներ)

Եկմալյանի երաժշտական ժառանգությունը, իր՝ ներկայումս էլ դեռ ոչ լրիվ հայտ-

* Եկմալյանի պատարագի 71—72 էջերի ԱԿ «Տէր, ողորմեա»-ի մասին Կոմիտասը նկատել էր, որ «Տէր» վանկերի ամանակը անտեղի ծանրացված է, իսկ էջ 79-ի ԳՋ «Տէր, ողորմեա»-ի վերաբերյալ նա գտել էր, թե եղանակի մեջ մետրական շեշտերը սխալ դասավորություն են ստացել (տես՝ **Կոմիտաս**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, էջ 143 և 146): Այս նոր «Տէր, ողորմեա»-ում այդ պակասները չկան:

նաբերված վիճակում, անցյալի հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտության մի ամբողջական ու նշանակալից բաժինն է և, ինչպես ասացինք, ունի ոչ միայն պատմական, այլև մնայուն գեղարվեստական արժեք: Եթե անգամ Պատարագից հետո Եկմալյանը նոր ոչինչ ձեռնարկած չլիներ, հենց Պատարագն էլ բավական կլիներ՝ հայ ազգային երաժշտության զարգացման մեջ նրան մեծ դեր հատկացնելու համար: Սակայն, չափից դուրս բարեխիղճ, ինքնապատասխանատվության հիվանդագինության աստիճանի հասնող զգացմունքի տեր, բառիս բուն իմաստով աշխատավոր ու միաժամանակ բարձրաճաշակ այդ անձնավորությունը Պատարագի բերած դափնիներից անգործության չի մատնվել, շարունակել է ստեղծագործել և նույնիսկ իր արվեստում շարունակ խորացել: Եկմալյանն իր բազմարդյուն կյանքն ապրեց բացառապես ժողովրդի շահերով: Նրա թե՛ նախապես հայտնի եղած ստեղծագործությունները և թե՛ ձեռագրերի նոր հայտնաբերումները այս են հաստատում:

Նկատի ունենալով Եկմալյանի Պատարագը, երիտասարդ Կոմիտասը իրավացի համոզվածությամբ գրել է՝ **«Հարգելի պ. Մակար Եկմալյանը մեր երգեցողության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրաստանը տնկեց: Արտանց ուրախ ենք, որ հայերս այժմ կարող ենք պարծել, թե մենք էլ ետ չենք մնացել վսեմ գեղարվեստի և կատարելագույն երաժշտության զարգացումից»:**

Հասկանալի է, որ «մեր երգեցողության անդաստան» ասելով Կոմիտասը նկատի ունի հայ պրոֆեսիոնալ երաժշտությունն ընդհանրապես, իսկ «ներդաշնակություն» բառն այստեղ առնված է այն իմաստով, ինչ իմաստով Կոմիտասը դա գործածում էր նաև իր ստեղծագործությունների համար («գրի առավ և դաշնակեց...»):

Իմանար Կոմիտաս վարդապետը Եկմալյանի՝ այդ ժամանակ արդեն ձեռնարկած գյուղական երգերի մշակումները ևս (որոնք հեղինակի կյանքի ընթացքում այդպես էլ չկատարվեցին), անշուշտ իր բարձր գնահատականը նա կհատկացներ և ա՛յս գործերին, Եկմալյանի ո՛ղջ ստեղծագործությանը:





ՄԵՂՈՒՆ, ՄԵՂՐՆ ՈՒ ՄԵՂՐԱՄՈՄԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

Հայաստան աշխարհը, Փոքր Կովկաս լեռնաշղթայի փեշերից մինչև Հայկական Տավրոս, վաղնջագույն ժամանակներում ծածկված է եղել ալպյան արոտավայրերով ու անտառներով, գետերով, մեծ ու փոքր լճերով և սառնորակ աղբյուրներով: Այդտեղ բազմացել են բազմազան կենդանիներ ու թռչուններ, միջատներ ու զեռուններ, այդ թվում՝ նաև մեղուներ: Բնա-կլիմայական այս պայմաններում են ապրել ու գործել հայերի նախնիները՝ Հայկական բարձրավանդակի հնագույն բնակիչները: Նրանք իրենց մատչելի միջոցներով ստեղծել են իրենց ապրելակերպն ու միջավայրն արտացոլող ժայռապատկերներ, որոնք հարատևել են մինչև մեր օրերը և որոնք վերջին տասնամյակներում հաշտնագործվել ու ուսումնասիրվել են մասնագետների կողմից:

Այդ ժայռապատկերներում, ի թիվս ժամանակի մարդուն հայտնի այլ արարածների, առկա է նաև մեղվի պատկեր (նկ. 1):

Հայտնի է, որ հնում թե՛ իրական և թե՛ երևակայական արարածների պատկերումները ժայռերին, ապա նաև հնագիտական ու ազգագրական բնույթի գտածոների՝ գոտիների, մատանիների, գինդերի, դրամների, հագուստի, գործվածքի, փայտի, քարի, ոսկրի և այլ իրերի վրա, անմիջապես առնչվել է մարդու հնագույն հավատալիքների հետ, որոնք հիմքում կապված են եղել բարու և չարի, օգտավետի և վնասակարի գաղափարի և դրանց ծնող պատճառները գիտականորեն բացատրել չկարողանալու հետ: Ժողովրդի դարավոր կրոնական պատկերացումները բազմազան արտահայտություններ են ստացել նրա

Նկար 1

առտնին կյանքի ու կենցաղի բոլոր ոլորտներում, մանավանդ թաղման արարողություններում: Ուշագրավ է, որ այդ ամենի մեջ, այլևայլ երևույթների կարգին, նշա-

նակալից տեղ է բռնել նաև մեղուն, մանավանդ նրա մեղրը և հատկապես մոմը:

Անկանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը 1906—1908 թթ. Նոր Բայազետի գավառում (Գեղարքունիք), Սևանա լճի հարավային և արևելյան ափերին, պեղել է 500-ից ավելի միկրոարձանային, երկկրոնանային դամբարաններ, որոնցից մեկի մասին իր «Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում» աշխատության մեջ գրում է, որ այդտեղ հայտնաբերված երեխայի կմախքի մոտ դրված է եղել ճրագ, մի խոզորույթ, որը, ինչպես հավաստում է հեղինակը, հարատևել է մինչև մեր օրերը՝ «Երեխային թաղելիս ձեռքը մոմ են տալիս, որպեսզի մյուս աշխարհ գնալիս ճանապարհը լուսավորեն»:

Իր «Հին Հայաստանի կուլտոդրան» աշխատության մեջ նույնն է վկայում պրոֆ. Խաչիկ Սամվելյանը, ավելացնելով, որ «հոգու» ճանապարհը մյուս աշխարհը գնալիս լուսավորելու նպատակով հանգուցյալի ձեռքին մոմ դնելու հնագույն ծեսն անցել է նաև քրիստոնեական եկեղեցուն, ըստ որում բնորոշ է, որ մոմը վառելիս մաղթում են. «Այտված հոգին լուսավորի»:

Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում պեղած դամբարաններում հայտնաբերված բազմաթիվ ու բազմազան կավե ամանների կարգին գտնվել են նաև ճրագներ, որոնցում հնարավոր է, որ մոմեր վառած լինեն:

Դամբարաններից հանվել են նաև բրոնզե գոտիներ, որոնք ծածկված են եղել զարդանկարներով, դրանցից մեկի վրա (որը մաքրվել է Ե. Լալայանի կողմից), երևում է մի զույգ ձի, թռչնագլուխ մարդիկ՝ նետերը ձեռքերին, ապա արևի խորհրդանիշը պատկերող մի շրջանակ և մի «բզեզանման միջատի պատկեր», ինչպես կարծել է Ե. Լալայանը, որը, ըստ իս, ավելի նման է մեղվի, քան բզեզի: Գոտու վրայի պաշտամունքի առարկա հանդիսացող արևի ու մեղվի պատկերները ցույց են տալիս, որ այն ունեցել է մոգական, չարից ու վտանգից պաշտպանող ու հաջողություն և բարեբախտություն բերող նշանակություն: Գոտիները, ինչպես նաև նույն դամբարանից հանված ճրագները, թվագրվում են մ. թ. ա. III—II հազարամյակներով: Գոտու մոգական նշանակությունը շարունակել է պահպանվել նաև կրոնաճիսական հանգամանքներում, երբ այն կապել են պաշտամունքային արարողության ժամանակ, ինչպես նշում է Խ. Սամվելյանը: Սևանի ավազանում, Լճաշեն գյուղի մոտ, 1965 թ. կատարած պեղումների ժամանակ հնագետ Հ. Մնացականյանը մեկկարասյա դամբարանի միջից գտել է բրոնզե գոտի, որի վրայի բազմաթիվ զարդաքանդակների թվում կան նաև մեղուների պատկերներ՝ թռիչքի պահին, թևերը բացած (նկ. 2): Ինչպես վկայում է հեղինակը, գոտին պատկանում է մ. թ. ա. 10—9-րդ դդ.: Այս գոտու վրա քանդակված մեղուների պատկերները վկայում են, որ մեր նախահայրերը ոչ միայն ժայռապատկերներում են խորհրդանշել մեղվին, այլև այն առարկայի վրա, որը կրելիս են եղել իրենց մեջքին՝ պաշտամունքային նպատակով:

Մեղվի և նրա մեղրի պաշտամունքի հետ են կապված նաև եկեղեցիների պատերին, գմբեթներին և սյուներին քանդակված մեղրահացի պատկերները: Դրանք առկա են 915—921 թթ. կառուցված Աղթամարի պալատական եկեղեցի-տաճարի պատուհանի կողքին պատկերված հրեշտակի գլխի շուրջը երիզած պսակի համալիրում, հայկական վիմափոր կառուցվածքի գլուխ-գործոց Գեղարդի (Այրիվանք) քարակոփ գմբեթաձև առաստաղին, Արցախի XIII դ. կառուցված Հովհաննես Մկրտչի (Գանձասար) վանքի գմբեթաձև ծածկի խաչվող կամարների և լուսանցք-երդիկի միջև, Ռշևանի շրջանի Աչաջուր գյուղի մոտի Մակարավանքի սյուներից մեկի խոյակի վրա և այլուր:

Մեղվապահության վերաբերյալ ուղղակի և անուղղակի ուշագրավ վկայություն են պարունակում նաև հայերեն հին ձեռագրերը ու մանրանկարները: Այսպես, Մատենադարանի № 8400 ձեռագիր շարակնոցի 107ա թերթի տառակերպ նկարում (13-րդ դ.) պատկերված է թռչունի նմանվող գեղեցիկ մի մարդապատկեր՝ գլխին թագ, վրան շարված վառվող մոմեր: Այստեղ, ինչպես նկատում է Ա. Մնացականյանը, լուսապսակին փոխարինել է վառվող մոմերով թագը, որից որոշակի երևում է տառապատկերի աղերսն աստվածուհիների հետ, որը միաժամանակ մոմի պաշտամունքի հետ կապված խորհրդանիշ է: Ինչպես այս, այնպես էլ սրա նման այլ էակները, որոնց գլուխները վերցված են լուսապսակի մեջ կամ բերանում ունեն սրինգ, գրականության մեջ անվանվել են սիրեններ և կապված են սիրո և գեղեցկության, երգի ու երաժշտության գաղափարի հետ: Մի այլ՝ № 6059 ձեռագիր շարակնոցում, գրված 1621 թ. Կ. Պոլսում, Ավետիս գրչի կողմից, պատկերված է մարդ, կքած վիճակում, ձեռքերին և գլխին վառվող մոմեր: Ա. Մնացականյանի մտահանգմամբ դա հիշեցնում է ուրարտական կուռքի պատկերը: Այս կուռքերը, ըստ Վ. Ս. Սորոկինի, արտա-

հայտում են կին աստվածության պատկերը: Հ. Իսրայելյանն էլ նկատում է, որ համանման քարե արձանիկները ուշ բրոնզեդարյան մշակույթին պատկանող՝ պտղաբերության պաշտամունքն արտահայտող կանանց կուռքեր են, որոնց վերևի երեք հատվածում գրված են ամենահին գրերի, գմբեթների շքայլների, ինչպես նաև տաճարներում գործածվող իրերի ու ամանների վրա: Բ. Բ. Պիոտրովսկին Կարմիր բլուրի պեղումների ժամանակ կարասներից մեկում հայտնաբերել է 97 թաս, որոնց վրա փորագրված են աշտանակներ,



Նկար 2

եղուստի վրա փորագրված են ծառի ճյուղերին նմանվող զարդամոտիվներ, որի իմաստը հետագայում արտահայտվել է վառվող մոմերով: Այս կապը հանգեցնում է նրան, որ նախամարդու պատկերմամբ հողը էլ, մայր կինն էլ պտղաբերող են, ուստի երկուսն էլ հանդես են գալիս որպես մայր հողի խորհրդանիշ, ինչպես նշում է հեղինակը:

Այս ամենից հետո սխալված չենք լինի, եթե ավելացնենք, որ ինչպես արձանիկների վրայի բուսական զարդանախշերն են խորհրդանշում կենաց ծառ, այնպես էլ վառվող մոմերով զարդանախշված արձանիկը հետագայում ներկայացվել է նման բովանդակության խորհրդանիշ արտահայտող մոտիվ:

Շատ հնում վառվող մոմերով արտահայտված կենաց ծառեր են քանդակվել ու նկարվել տաճարների (ուրարտական Մուսասիրի տաճարի խորաններինը), մատուռների, գմբեթների շքայլների, ինչպես նաև տաճարներում գործածվող իրերի ու ամանների վրա: Բ. Բ. Պիոտրովսկին Կարմիր բլուրի պեղումների ժամանակ կարասներից մեկում հայտնաբերել է 97 թաս, որոնց վրա փորագրված են աշտանակներ, որոնց ծայրերի կենաց ծառն արտահայտված է վառված մոմերով: Ըստ Ա. Մնացականյանի, տոտեմիզմի հետ են կապված նախնիների ու ծնող զույգերի գաղափարն արտահայտող՝ Թոփրակ-Կալեի պեղումներից հանված մոմակալը, միջնադարի առօրյան արտահայտող՝ № 7729 ձեռագրի 476ա թերթում նկարված աշտանակը, № 3033 ձեռագրի 4բ թերթում նկարված մոմակալը: Այս ոճով էլ հետագայում մշակվել են կախովի կանթեղներն ու ջահերը:

Կենաց ծառը նաև լույսի աղբյուր է, այդպես են պատկերացրել նրան, որովհետև ծառի վրա վառվող մոմերը լուսավորում են շրջապատը: Հայկական կենաց ծառին նվիրված մի երգում «Արդար մեղուն» գովերգվում է այն պատճառով, որ նա ծաղիկներից քաղցր մեղր է պատրաստում, իսկ նրա արտադրած մոմն օգտագործվում է լուսավորության համար: Այդ ծառագովքը

շատ տարածված է եղել հայոց մեջ և հանախ երգվել է հարսանիքներում:

Ծաղկազարդին էլ շատ ծիսական արարողություններ են կատարվել մեղրի ու մոմի հետ կապված: Հիշենք դրանցից աղջիկ նշանելու պահը ծառի շուրջը: Տղայի մայրը, նախօրոք ունենալով աղջկա ծնողների համաձայնությունը, եկեղեցում Ծաղկազարդի ծառի վրայի վառվող մոմերից վառել է մի խաչաձև մոմ, որի վրա մի արծաթե մատանի է անցկացրել: Վառված մոմը մատանիով լուսավորելով տվել է իր հավանած աղջկա ձեռքը և կամ, աղջկան մոտեցնելով Ծաղկազարդի ծառին, գլխին գցել է մի կարմիր շղարշ, որից հետո այդ աղջիկը նշանված է համարվել: Հիշենք նաև առագաստի առաջին գիշերվա և հաջորդ օրվա հարսի լողացման արարողությունները՝ կապված մեղրի ու մոմի հետ, որը ժողովրդի սովորություններում գոյատևել է մինչև մեր օրերը: Նման նկարագրություններ շատ կան «Ազգագրական հանդես»-ում: Այդ նույն հանդեսում Ե. Լալայանը Վասպուրականի վերաբերյալ նշում է, որ Ուց կտրելու գիշերը, ընթրիքից հետո, թագավորը (փեսան) հարսի հետ առանձնացել է մի սենյակ, ուր արդեն պատրաստված է եղել առագաստի անկողինը, մոտը դրված մի շիշ գինի, մեղր և մրգեղեն: Փեսան հարսին խոսեցրել է, տվել նվերներ, նույն բաժակով գինի են խմել, կերել են մրգերն ու մեղրը, որ իրենց միությունը մեղրի նման քաղցր անցնի: Առագաստի հաջորդ օրը փեսայի տանը պառավ կանայք լողացրել են հարսին, լոգանքի տաշտի շուրջը վառել մոմեր: Վանեցիների մեջ էլ առագաստին հաջորդող առաջին հինգշաբթի օրը նորահարսի սկեսուրը հավաքել է իրեն հասակակից, մերձավոր արյունակից և հարևան մի քանի կին, որոնք, մեկական վառվող մոմ բռնած ձեռքերին, շրջապատել են տան կենտրոնում դրված պղնձե տաշտը, որի մեջ նստած է եղել մերկ նորահարսը: Տաշտի շուրջը նույնպես շարել են վառվող մոմեր: Կանայք մերկ հարսի վրա հաջորդաբար լցրել են մեկական թաս սառն ու տաք ջուր և հետո էլ աղոթք մրմնջացել: Եթե մերկ հարսը սառն ու տաք ջրերի ազդեցության տակ շարժվեր կամ ցնցվեր, դա նշան էր, որ հարսն անհամբեր և անհնազանդ է: Եթե չշարժվեր, ուրեմն հարսը համեստ էր լինելու: Այսպիսով, առագաստի առաջին գիշերը և հաջորդ օրը, լողացման արարողության ժամանակ, օգտագործվել է մեղվի արտադրանքը:

Գամիրքի (Փոքր Հայք) հայերը մոմեր են վառել հարսանիքներին՝ հինա դնելու արարողության ժամանակ: Քավորն ու քավորկինը բռնել են մի բյուրեղյա նախշուն ափսե, որի մեջ բրգաձև դիզված է եղել հինան, կենտրոնում թաղված պարուրաձև ոլորված մոմի խուրձը: Հարսին նստեցրել են սենյակի կենտրոնում, մի բարձի վրա, շրջապատել վառված մոմերով ու հինան դրել: Հետո էլ սկսել են խրախճանքը՝ նվագն ու պարը, երգն ու երաժշտությունը:

Հարսանիքի գաթան թխելիս, գաթայի ալյուրի, խմորի տաշտի եզրերին մոմեր են վառել, որպեսզի հարսը մոմի լույսի նման պայծառ լինի, ամոթխած ու հնազանդ:

Վանեցիները հարսանիքի ժամանակ մոմեր են վառել, երբ հարսն ու փեսան եկեղեցուց տուն են վերադարձել: Փեսայի մայրը, գլխին դրած կամ ձեռքին բռնած մոմերով զարդարված ուտելիքներով լիքը մի ափսե, պարելով ընդառաջ է գնացել թագավորին ու թագուհուն և, համբուրելով նրանց, առաջնորդել է հարսնացուի սենյակը:

Մշո դաշտում մոմեր է վառվել Տերնդեզի կամ Տեառնընդառաջի տոնական ծիսակատարության ժամանակ: Երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցու բակում եկեղեցու մոմերով խարույկ է վառվել, այդ խարույկից էլ վառվել են ողջ գյուղի կտուրներին արված խարույկները, ու գյուղը թաղվել է ծխի ու կրակի բոցերի մեջ: Բոլորը թռել են խարույկի վրայով, խանձելով վարտիքների փողկերը, դրանով, որպես հմայիլ, իրենց ապահովել են գազաններից ու սողուններից վնասվելուց: Վառել են նաև հավերի փետուրները, որ նրանք էլ հաջող թուխս նստեն ու շատ ձու ածեն: Եթե գյուղում նորահարս է եղել, նրա տուն պատգամավոր են գնացել հարսի հոր տնից, հարսին հանել են տանիք՝ Տերնդեզ տեսնելու և նվերներ ստանալու: Հենց կտուրում էլ փոխինդ են արել, ցորենի հասկեր խարկել և բաժանել ներկաներին, գցել երդիկներից, գծեր քաշել երդիկների ու դռների շուրջը՝ ընդդեմ չար ոգիների: Մշեցիների մեջ ևս այս արարողությունը եղել է: Մոմեր վառելու արարողության հիմքում ընկած է մոմի պաշտամունքը, ընտանիքի պտղաբերության ապահովումը:

Դրա ուշագրավ վկայությունն են նաև ձեռագրերում և մանրանկարներում պատկերված վառվող մոմերը, մոմակալներն ու հյուսածո մեղվափեթակները: Այսպես, Մատենադարանի 14-րդ դարասկզբին վերաբերող № 3708 ձեռագրի 7ա թերթի վրա պատկերված է նորապսակ զույգի գունավոր նկար: Հարսի ու փեսայի ձեռքերին կան վառվող մոմեր և կենաց ծառեր: Ինչպես

երևում է նկարից, նրանք հարսանիքում պարում են, մակագրությունն էլ ասում է, որ պարելիս են եղել Աշտարակի շրջանի Սաղմոսավանքին մոտիկ գյուղում: Այստեղ կենաց ծառն ու վառվող մոմերն արտահայտում են պտղաբերության գաղափարը:

Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Հայկական մանրանկարչություն» գրքի № 18 և 90 տախտակները Մատենադարանի ձեռագրի զարդաքանդակներից են: Այստեղ որպես զարդանախշ օգտագործված է մեղվի հյուսածո փեթակի պատկերը, իսկ լուսանցքներում պատկերված են մոմակալներում դրված վառվող մոմեր: Նկարներն արված են 13 և 17-րդ դարերում:

Սկսած հնագույն ժամանակներից ընդհուպ մինչև մեր օրերը, մեղվի մեղրը և մոմը, կազմելով հայ ժողովրդի սննդի կարևոր բաղադրիչ մաս, օգտագործվելով նաև բուժական նպատակներով, միաժամանակ որոշակի դեր են կատարել ժողովրդական հավատալիքներում, դիտվելով որպես կենսատու և չարխափան միջոցներ, մարդուն բոլոր առումներով հույժ օգտակար նյութեր, վերջին դեպքում՝ սրբագործված կրոնական հավատալիքներով:

ԱՐԱՄԱՅԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. 222ա.— Իսլամականութիւն. մահմետականութեան ծագումը. իր վարդապետութիւնները:

Թ. 229ա.— Ներսէս Գ. Շինող. Ներսէսի ընտրութիւնը և Դլունայ ժողովը:

Թ. 231ա.— Հայերը արաբացուց կը հպատակին. Կոստանդին կայսրը:

Թ. 234ա.— Անանաս Ա. Ակոռեցի:

Թ. 235ա.— Իսրայէլ Ա. Ոթմսեցի:

Թ. 236ա.— Սահակ Գ. Զորափորեցի. հայոց խոովեալ վիճակը:

Թ. 237ա.— Սահակայ մահը:

Թ. 239ա.— Եղիա Արճեշեցի (703—717). Պարտաւի ժողովը:

Թ. 242ա.— Յովհաննէս Գ. Օձնեցի իմաստասէր:

Թ. 244ա.— Դլունայ և Մանազկերտի ժողովները. իմաստասէրին պճնասիրութիւնը:

Թ. 247ա.— Իմաստասէրին գրական գործունէութիւնը:

Թ. 250ա.— Պատկերամարտութիւնը:

Թ. 253ա.— Դաւիթ Ա., Տրդատ Ա. և Տրդատ Բ. կաթողիկոսները:

Թ. 257ա.— Սիոն Ա. Բաւոնացի. Եսայի Ա. Եղիպատրուշեցի:

Թ. 258ա.— Ստեփաննոս Ա. Դունեցի, Յովաք Ա. Դունեցի. Սողոմոն Ա. Գառնեցի:

Թ. 259ա.— Գէորգ Ա. Օշականցի. Յովսէփ Բ. Փարպեցի. Դաւիթ Բ. Կակաղեցի:

Թ. 261ա.— Յովհաննէս Ա. Ովայեցի (883—855):

Թ. 265ա.— Զաքարիայի ընտրութիւնը. Աշոտ Բագրատունի:

Թ. 267ա.— Զաքարիայի և Փոտի թղթակցութիւնը. Շիրակաւանի ժողովը:

Թ. 270ա.— Գէորգ Բ. Գառնեցի (877—898). Աշոտի թագաւորութիւնը:

Թ. 273ա.— Սմբատ Ա. և Ափշին ոստիկան:

Թ. 278ա.— Մաշտոց Ա. Եղիվարդեցի (898—899):

Թ. 279ա.— Յովհաննէս Ե. Դրասխանակերտցի «պատմաբան»:

Թ. 281ա.— Յուսուփ ոստիկան. Սմբատայ նահատ(ակ)ութիւնը:

Թ. 285ա.— Աշոտ Բ. Երկաթ. նահատակութիւնք և սով:

Թ. 287ա.— Նիկողայոս պատրիարքին մխիթարական թուղթը. Աշոտ ի Կ. Պոլիս. ներքին խռովութիւնները:

Թ. 290ա.— Բիւրական ամրոցին առումը. Կաթողիկոսին կրած տագնապներն ու վախճանը:

Թ. 293ա.— Հայրապետական Աթոռն յԱղթամար. Ստեփաննոս Բ. Ռշտունի (926—927). Թէոդորոս Ա. Ռշտունի (927—938):

Թ. 295ա.— Եղիշէ Ա. Ռշտունի (938—945). Անանիա Ա. Մոկացի (945—967):

Թ. 297ա.— Յակոբ եպիսկպս. Սիւնեաց և Անանիա:

Թ. 299ա.— Յունական հալածանքը:

Թ. 301ա.— Աշոտի թագաւորութիւնը և Անանիայի մահը:

Թ. 303ա.— Վահան Ա. Սիւնի. Ստեփաննոս Գ. Սևանցի:

Թ. 305ա.— Խաչիկ Ա. Արշարունի. Խաչիկի մեծագործութիւնը. նշանաւոր վարդապետները:

Թ. 307ա.— Երկրին քաղաքական վիճակը. Սմբատ Բ.:

Թ. 308ա.— Յունական ատելութիւնը:

Թ. 312ա.— Սարգիս Ա. Սևանցի. քաղաքական վիճակը:

Թ. 314ա.— Ծուազատիկի խնդիրը:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի № Ա-ից:

Թ. 317ա.— Թոնդրակեցիի ծագումը:

Թ. 319ա.— Աղանդին նկարագիրը և վարդապետութիւնը:

Թ. 323ա.— Յակոբ Եպիսկոպոս Հարքաց:

Թ. 325ա.— Մանանաղի գաւառին դէպքը:

Թ. 327ա.— Գրիգոր Մագիստրոսի հալածանքը:

Թ. 329ա.— Պետրոս Գետադարձ. Յովհաննէս-Սմբատի թագաւորութիւնը. Սենեքերիմ Արծրունի:

Թ. 331ա.— Պետրոսի մասնակցութիւնը Անիի վանման մէջ:

Թ. 333ա.— Պետրոսի աստանդական կեանքը և Գէորգորոս Սանահնեցի:

Թ. 337ա.— Սմբատի կտակը. Վեստ Սարգիս և Վահրամ սպարապետը:

Թ. 338ա.— Անիի գրաւումը:

Թ. 340ա.— Պետրոսի կալանաւորումը և մահը:

Թ. 343ա.— Խաչիկ Բ. Անեցի:

Թ. 347ա.— Գրիգոր Վկայասէր. Գրիգորի ընտրութիւնը. Դանիլաւանիք:

Թ. 351ա.— Գրիգոր Վկայասէրի հայրապետութիւնը:

Թ. 352ա.— Գրիգոր Վկայասէրի ճամբորդութիւնները. Գէորգ, Սարգիս և Բարսեղ:

Թ. 355ա.— Վկայասէրի ճամբորդութիւնը. Բարսեղ կաթողիկոս. Թէոդորոս Ապախսիկ:

Թ. 359ա.— Բարսեղ կաթողիկոսի տեսակցութիւնը Մելիք-Շահի հետ:

Թ. 360ա.— Վկայասէրին վերջին տարիները. իր և Բարսեղի մահը:

Թ. 365ա.— Գրիգոր Գ. Պահլաւունի. ԺԲ դարը ազգային եկեղեցական տեսակէտով:

Թ. 368ա.— Գրիգորի ընտրութիւնը. Դաւիթ Թոռնիկեան և Սեաւ լերան ժողովը:

Թ. 370ա.— Աթոռին փոխադրութիւնը. Գրիգորի ուխտագնացութիւնը և յարաբերութիւնը լատինաց հետ:

Թ. 374ա.— Կաթողիկոսական Աթոռը Հռոմկլայի մէջ:

Թ. 376ա.— Ամայր և Շղթան գաւառներուն առանդաւորները:

Թ. 377ա.— Յունաց հետ միութեան խնդրին սկզբնաւորութիւնը:

Թ. 381ա.— Ս. Ներսէս Շնորհալի Կլայեցի (1166—1173). Ներսէսի նախկին կեանքը. իր ընդհանրական թուղթը:

Թ. 384ա.— Միութեան խնդիրը:

Թ. 387ա.— Կայսեր պատգամաւորութիւնը. Թէորիանէ և Ութման:

Թ. 390ա.— Ինը առաջարկներ. Ներսէսի մահը:

Թ. 393բ.— Արևորդիք:

Թ. 394բ.— Ծիսական բարեկարգութիւնները:

Թ. 396ա.— Գրիգոր Դ. Տղայ. ընտրութիւնը. միութեան խնդրին վերսկսումը:

Թ. 398ա.— Ներսէս Լամբրոնացի:

Թ. 398բ.— Բանակցութեանց շարունակութիւնը:

Թ. 399բ.— Միութեան խնդրոյն յարուցած վէճը Արևելեան և Կիլիկեան վարդապետներուն միջև:

Թ. 400բ.— Գրիգոր Տղայ և Գրիգոր Տուտէորդի:

Թ. 402ա.— Գրիգոր Տղային պատասխանը:

Թ. 404ա.— Հռոմկլայի ժողովը (1179 թուականին):

Թ. 407ա.— Մանուէլի մահը. հայոց յարաբերութիւնը լատինաց հետ:

Թ. 408բ.— Գրիգոր Տղայ և Լուկիոս Գ. Պապը:

Թ. 410ա.— Կղէմէս Գ.ի թուղթը և Գրիգոր Տղայի մահը:

Թ. 411բ.— Գրիգոր Ե. Բարավէժ. բանտարկութիւնը և մահը:

Թ. 413ա.— Գրիգոր Զ. Ապիրատ. Ներսէս Լամբրոնացի և Լևոն:

Թ. 415բ.— Լամբրոնացւոյն դեսպանութիւնը. Դոնզատիկը:

Թ. 416բ.— Լևոնի թագաւորութիւնը. Ներսէսի և Գրիգոր Ապիրատի մահը:

Թ. 417բ.— Յովհաննէս Մեծաբարոյ (1203—1221). Յովհաննէս Զ. «Խնկտոր». Անանիա Սեբաստացի. Դաւիթ Արքակաղնեցի:

Թ. 418բ.— Զաքարէ և Իսահակ. Լօռիի և Անիի ժողովը. Մահ լևոնի և Յովհաննէսի:

Թ. 420ա.— Կոստանդին Ա. Բարձրբերդցի (1221—1267). ընտրութիւնը. Հեթում Ա.:

Թ. 421ա.— Սսոյ Ա. ժողովը:

Թ. 422ա.— Յակոբ Ա., Կոստանդին Բ. և Ստեփաննոս Դ., Յակոբ Ա. Կլայեցի «Գիտնական» (1268—1286):

Թ. 423ա.— Կոստանդին Բ. Կատուկեցի «Պրօնագործ» (1286—1289):

Թ. 423բ.— Ստեփաննոս Դ. Հռոմկլայեցի (1290—1293):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թ. 7ա.— Գէ(ո)րգ Արք. Արալանեան (նկիր, ձեռագիր ստորագրության ձևով: Մատյանը պատկանել է Գեորգ Սրբազանին, որի ամբողջ գրականության հետ, եռ մահու, ուղարկված է Ս. Էջմիածին):

№ 515
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 301:— **Պրակները՝** 25, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԵ՝ 8, ԱՀ՝ 11 և ԻՀ՝ 14 թերթից են:— **Մեծությունը՝** 20×15,3×5 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր կան նկարված:— **Պահպանակները՝** 2-ական թերթ սկզբում և վերջում:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** 299բ և պահպանակները՝ 1ա—2բ և 300ա—301բ:— **Տողերը՝** 21:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ձեռագրում կան երեք ավետարանիչների նկարները (թթ. 87բ, 142բ և 230բ): Պակասում է Մատթեոսի նկարը, կտրված և հանված լինելով: Պահպանված են չորս Ավետարանների խորանները (թթ. 3ա, 88ա, 143ա և 231ա):

Կան բազմաթիվ զարդագրեր, թոչնագրեր և լուսանցազարդեր, ինչպես նաև մի հրեշտակագիր (թ. 3ա), երկու գազանագրեր (թթ. 88ա և 143ա) և մի մեծ թոչնագիր (թ. 231ա)։ Այս բոլորն ունեն միջակ որակի արժեք։— **Գրիչը՝** Հովհաննես։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 17-րդ դար։— **Վայրը՝** անհայտ։— **Մանոթագրությունը՝** սույն ձեռագիրը Մայր Աթոռին է նվիրել Տ. Նշան քահանա Բեյլերյանը 1980 թ. հունիս ամսին։ Այն ձեռք է բերել Կիրովաբադում (Ադրբեջան) 1957 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

թթ. 3ա—87ա Ավետարան Մատթեոսի։
թթ. 88ա—142ա Ավետարան Մարկոսի։
թթ. 143ա—230ա Ավետարան Ղուկասու։
թթ. 231ա—298ա Ավետարան Հովհաննու։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 230ա.— Ով եղբ(ա)յրք յիշեցէք ի մաքրափ(ա)յլ յաղօթս ձեր անարժան գծողս սուտ անուն Յովանէս, յիշողդ յիշե(ա)լ լիցիք ի Քրիստոս։ Ամէն։

Թ. 298ա.— Փառք ... հօր և որդոյ և հոգոյն սրբոյ՝ այժմ և անզրաւ յաւիտենից Ամէն։ ...ութի(ւն)է ա(ստուա)ծային արանց միշտ և հանապազ խոկալ յա(ստուա)ծային պատուիրանս, ի տուէ և ի գիշերի, միշտ զվերինն խորհել ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Ա(ստուծո)յ։

Եւ վասն բազում պատճառի, բազում փափագին (թ. 298բ) ջերմեռանդ սիրով և ըղձալի ցանկութ(եամ)բ, արդիւնս և գործս կատարել։

Նախ վասն յաւիտենական և անմահ կենացն զանցաւորս արհամարեն և զայն ստանան կեանս որ մնացական է որպէս ասէ Տ(է)ր՝ երթայք գործեցէք մի զկորընտակն կերակուրն, այլ զկերակուրն որ մնա ի կեանսն յաւիտենականս։

Երկ(րո)ղ, զի հրամայէ Տ(է)ր՝ գանձեցէք ձեզ գանձ յերկինս ..... ապականեն և գողք ... հատանեն և գողանան։

Գրեմք զգիրս որ զամ(ենայն) գանձ և զամ(ենայն) աւետիք յինքն պարունակեալ ունի։

Նախ զվերջինն իմաստութիւն և ապա զամ(ենայն) աքանչելագործութի(ւն)ս որ ի սմա։

Երր(որ)դ վ(ա)ս(ն) անջինջ յիշատակութե(ան) առաջի (Թ. 299ա) Ա(ստուծո)յ ո(ր)պ(է)ս ասէ մարգարէն։

Երանի որ ունիցի զաւակ ի Սիովն և ընդանի(ք) յԵ(րուսաղէ)մ։

Չոր(րոր)դ վ(ա)ս(ն) քաւութե(ան) և թողութե(ան) մեղաց մերոց բարեխաւս։

Որպէս ասէ մարգարէն ըզմեղս քո ողորմութ(եամ)բ քաւեսցես և զանօրէնութի(ւն)ս տրաւք տնանկաց։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Նորին Սուրբ Օծություն
Տ. Տ. Վազգեն Ա-ին, Կաթուղիկոս ամենայն հայոց.

Վեհափառ Տեր, որդիական ամենաանկեղծ սիրով և երախտագիտական ջերմ զգացումներով նվիրում եմ այս ձեռագիրը Քեզ, ակնկալելով միայն Քեզ հայրական օրհնությունը։

Մատչիմ ի համբույր Քեզ Ս. Աջոյն
Նշան քահանա
5 հունիսի 1980
Էջմիածին։

№ 516
ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թերթերը՝ 412։— **Պրակները՝** ձեռագիրը բաղկացած է երկու մասից՝ 17 և 18 պրակներից, յուրաքանչյուրը 12-ական թերթից։ Առաջին մասի Ա պրակն ունի 7 թերթ, իսկ երկրորդ մասի վերջին (ԺԸ) պրակն ունի 9 թերթ։— **Մեծությունը՝** 22.2×16.5×5.7 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, կիսաքայքայված, որի վրա ճնշումով զարդեր կան նկարված։— **Վիճակը՝** բավարար, սակայն սկզբից թերի է։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 5բ—7բ, 199ա—200բ, 380—399ա, 401բ—403ա, 404բ, 409ա—410ա, 411բ—412բ։— **Տողերը՝** 25—35։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** նոտրգիր (մի քանի տարբեր ձեռագրեր)։— **Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի մի ձկնագիր (306բ), երկու հրեշտակագիր (300բ, 311բ) և բազմաթիվ զարդագրեր, որոնք հասարակ որակի են։ Կան նաև բազմաթիվ թոչնագրեր, որոնց մեկ մասը գեղեցիկ է, իսկ մնացածը՝ ոչ արժեքավոր։— **Գրիչները՝** Գրիգոր, Հակոբ և Հովհաննես քահանաներ։— **Պատվիրատուն՝** Պողոս վարդապետ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝** անհայտ։— **Մանոթություն՝** սույն ձեռագիրը Մայր Աթոռին է նվիրել Տ. Նշան քահանա Բեյլերյանը 1980 թ. հունիս ամսին։ Այն ձեռք է բերել Կիրովաբադում (Ադրբեջան) 1957 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 2ա—5ա, 8ա—198բ, 201ա—397բ (Քարոզգիրք, որ գրված է տարբեր անհատների կողմից)։

Թթ. 399բ—401ա, 403բ—404ա (Մեկնություն Սուրբ Գրոց)։

Թթ. 405ա—408ա, Ցանգ է գրոյս (ձեռագրի երկրորդ մասի միայն)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 43ա.— ԶԳրգր գծողս յիշեա։
Թ. 65ա.— ... յիշեա զգրիչս Ցկր քոյ։
Թ. 76ա.— Ցիշեցէք զտոպլ Ցկր էրէց գծողս։

Թ. 137բ.— ՀՏ(Է)բ Ցկբ գծողս յիշեա տր։

Թ. 164բ.— Ով մանկ(ո)ւնք սբ եկղ և ընթցողք սբ տ(ա)ռիս. յիշէք զստցղ սր զՊողոս վդպ արհեպ-կըսպտն. և Ած ողորմի աս(ա)ցէք։

Թ. 183ա.— Զտուպլ գծողս Ցկբ բհս յիշեսջիք։

Թ. 186ա.— Զցանկալցօղ գիրքս Պօղոս վդտն յի-շեցէք։

Թ. 215բ.— ՀՑՀՆԷս խնդրող բանի և գրող յայմ տառի յիշման առն(ու)ք դուք արժանի և Ած ձեզ և մեզ առ հարկ ողորմեսցի որ է օրհնել յաւիտեան-ըս, Ամէն։

Թ. 237ա.— Որով զմեզ և զամ հաւտցելս և թէ սորին գրողս իւրեանն արժանի արասցէ Քս Ած պայ-ծառ երեսօք և զուարթ սրտիւք լուսով խաչին տե-սանել զսբ երրորդութե(ան)ն, փառսն լուսոյ, որ է օրհնե(ա)լ յատենս ամէն։

Թ. 246ա.— Զամենամեղ գրիչս յիշել ի բարի մսին. ով սբ ընթերցողք և Ած զձեզ յիշէ յիւր բա-րութիւնսն. Ամէն։

Թ. 256ա.— Զի սատցլ և ի մեղսամած գծող գրիս յիշեցէք ի Քս ամէն։

Թ. 268բ.— Ով սբ ընթերցողք զգրոյս գծողս ևս յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զի կորել եմ ի մէջ մեղաց և Քս զձեզ յիշէ յրն դատաստնի ա-մէն։

Թ. 280բ.— Եղբայրք զմեղաւոր անարժան գծողս ս(ո)րին յիշեցէք ի Քս ամէն։

Թ. 306բ.— Ով ընթերցողք զանարժան գծողս սո-րին յշցք ի մաքրափայլ յաղօթս ձեր։

Թ. 311բ.— Ցորոց փրկեցէ զմեզ և զգրողս սորին փրկիչն ամցն Քս Ած մեր և նմա ընդ հօր իւրում և սբ հոգւոյն յտենս ամէն։

Թ. 316բ.— Ով ընթերցողք զլիմրել զանարժան գծողս ի գրոյս ի մաքրափայլ յաղօթս ձեր յիշեցէք զոր տր Ած զձեր աղօթիւքն զլանցանս իմ թողու ամէն։

Թ. 320ա.— Որում և զմեզ զամսն արժանի ա-րասցէ համբուր ի բ(և)բանոյ իւրոյ յիւր խնդութեցն ի Քս Ցս ի տր մեր որ է օրհնել յատենս, ամէն։

Թ. 324բ.— Որոց փրկեսցէ Քս Ած մեր յոյսն և փրկիչն ամցն, և նմայ փառք յաւիտենս յտենց ա-մէնն և անարժան գծող սորին յշցք ի Քս։

Թ. 328ա.— ... Սբ Ածածին բարեխօս լեր առ որ-դիտ միածին զի զանարժան գծ(ո)ղս գրոցս մե-ղացն թողութիւն պարգևսցէ և ստնչկն յորոգայթէ փրկե(ա)լ ազատեսցէ ամէն։

Թ. 334բ.— Այսքան առ այս նա և տր Ած ինձ մեղաւոր անարժան գրչիս աղօթիւքն ձեր ով ըն-թերձողք արժանի առնէ այսմ կրկրոյ և նմա փառք յտենս յտենց ամէն։

Թ. 348ա.— ... և զիս անարժան գր(ո)ղս յիշցք ի Քս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Որդիական սրտաբուխ ցվերս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ին Հայրապետին, համբուրում եմ Ձերդ Սրբության Օծեալ Աջը։

Նշան քահանա

5—VI—80

Էջմիածին

Թ. 197բ.—ՌՃՀ (1721—Ն. Մ.) թուին։

№ 517

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Ա. ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 1։— **Մեծությունը՝** 10×14 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար, կա միայն թերթի վերևի մասը, ներքևինը կտրված է։— **Գրությունը՝** երկսյուն։— **Տողերը՝** 13։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** բոլորգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն** անհայտ։— **Ժամանակը՝** 16—17-րդ դդ.։— **Վայրը՝** անհայտ։— **Մանրություն՝** պատառիկը հանված է Մայր Աթոռի № 17 Ավետարան ձեռագրից, որն ստացվել է Թեհրանից 1949 թ. ձեռամբ Ռուբեն արքեպիսկոպոս Դուամբյանի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կեսս թերթանոց այս փոքրիկ պատառիկը խոսում է Քրիստոսի Գալիլեա գնալու և այլ արարքների մասին։

Բ. ԺԱՄԱԳԻՐՔ

Թերթերը՝ 4։— **Մեծությունը՝** 14.5×9.8×0.1 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար։— **Գրությունը՝** միապսյուն։—**Տողերը՝** 21—23։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** բոլորգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 19-րդ դար։— **Վայրը՝** անհայտ։— **Մանրություն՝** ձեռագիր այս չորս թղթերը դուրս են եկած 19-րդ դարի տպագիր մի Ժամագրքից (№ 104), որ ստացվել է 1980 թ. հունիսի 23-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին երկու թերթերը պարունակում են հիշատակագրություններ, իսկ 3—4-րդ թերթերը Ժամագրքից են վերցված։ Այստեղ կան «հրաժարիմք ի սատանայէ» և «խոստովանիմք և հաւատամք» աղոթքները։

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ, 1981 Г.).

1. Иеромонах Затик Аветикян—День праздника свв. Вартанидов и Тезоименитство Его Святейшества Вазгена Первого (26 февраля 1981 г.). Описание торжеств и актов имеющихся место в Кафедральном соборе и Актовом зале Патриархии (стр. 3—10).
2. 8-го февляря, в церкви им. св. Саркиса в г. Ереване, под председательством Его Святейшества проходили торжества посвященные назначению преосвященного епископа Арсена Берберяна викарием Араратской Патриаршей епархии: архиерейское служение, провозглашение патриаршей энциклики и обед в гостинице «Ани» в честь Его Святейшества и новоназначенного викария (стр. 11—15).
3. О проведений св. Литургий, чтений проповедей и проведений других торжеств в Первопрестоле за февраль м-ц (стр. 16—17).
4. Праздник свв. Вартанидов и Тезоименитство Его Святейшества Вазгена Первого в Ленинаканской армянской церкви им. Пресвятой Богородицы (стр. 18—19).
5. Архимандрит Анания Арабаджян—Важность молитвы: проповедь произнесена в Кафедральном соборе 1-го февраля (стр. 20—21).
6. Священник Езник Петросян—Сретение Господне: исследование посвящено истории Сретения 40-дневного Иисуса Христа в Иерусалимском храме (стр. 22—25).
7. Артун Атитян — Оригэн Александрийский (185—254). Исследование посвящено житию, разбору трудов Оригэна, их переводам на армянский язык и их изданиям (стр. 26—34).
8. Маня Казарян—Армянские древнейшие церковные двери Средних веков, статья посвящена описанию дверей в церквах им. свв. апостолов в г. Муше (Западная Армения), свв. апостолов на острове Севан, им. свв. Первопереводчиков в г. Феодосия (Крым), в монастырях Татев, Агулис, им. св. Фомы в Новой-Джуге (Иран), в Константинополе, в Эчмиадзине (Кафедральный собор), в Иерусалимском армянском монастыре (стр. 35—43).
9. Некролог: кончина Ключаря Иерусалимского армянского монастыря архиепископа Айрика Асланяна (стр. 44—45).
10. Роберт Атаян—К 125-летию со дня рождения армянского композитора Макара Екмаляна. Исследование посвящено биографию и деятельности великого музыканта, а также, новооткрывщимся его трудам (стр. 46—51).
11. Арамаис Гаспарян—статья «Пчелы и их мед в армянских народных верованиях» (стр. 52—56).
12. Нубар Микаелян—О новых рукописях, поступающих в св. Эчмиадзин, №№ 514—517 (стр. 57—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY 1981)

1. **Reverend Zatik Avetikian**—The commemoration of Saint Vartan's Day on the 26-th of February and the Name's Day of His Holiness the Catholicos Vasken I in the Holy See. The description of the ceremonies and festivities which have taken place on this occasion in the Holy Cathedral and the festivity hall of the Patriarchal Residency (pages 3—10).

2. Festivities which have taken place on the 8-th of February in the church of St. Sarkis at Yerevan, on the occasion of the appointment of Bishop Arsen Berberian as new-elected vicar of prelate of the Patriarchal diocese of Ararat: episcopal mass, reading of the Patriarchal encyclical, Patriarchal sermon and banquet in the hotel „Ani", in honour of His Holiness and the new-elected vicar of prelate (pages 11—15).

3. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and other festivities which have taken place in the Patriarchal Residency during the month of February (pages 16—17).

4. The festivities of Saint Vartan's Day on the 26-th of February and the anniversary of Name's Day of His Holiness in the Holy Church of Mother of God at Leninakan (pages 18—19).

5. **Reverend Anania Arabadjian**—The importance of prayer: sermon delivered in the Holy Cathedral on Sunday, the 1-st of February (pages 20—21).

6. **Priest Eznik Petrosian**—Candlemass-day or the forty days Advent of Christ to the Cathedral: religious study devoted to the forty days Advent of Christ to the Cathedral of Jerusalem (pages 22—25).

7. **Arthoon Hadidian**—Origen of Alexandria (185—254): study devoted to the life and conduct of Origen, to his bibliographical works and ot their armenian translation and printing (pages 26—34).

8. **Manya Ghazarian**—The Middle Age's armenian wooden church doors: study devoted to the traditional wooden doors of the Translators' monastery of Apostles (Mush city in Western Armenia), similarly of the Translators' monastery of Apostles (island of Sevan), of the city of Theodosia (Crimea), of the monastery of Datev, of St. Thomas of Agoolis, of New Julfa (Iran), of Constantinople, of the Holy Cathedral of St. Etchmiadzin and the Cathedral of St. Jack at Jerusalem (pages 35—43).

9. **Obituary,** devoted to the death of Archbishop Hayrig Aslanian, on the 23-rd of February Grand Sacristan of the Cathedral of St. Jack (Jerusalem) pages 44—45).

10. **Robert Atayan**—Study devoted to the 125-th birthday anniversary of the famous musician Makar Egmalian, to his life, activity, creation and to his few pages unknown until new (pages 46—51).

11. **Aramayis Gasbarian**—Study devoted to the bee and its honey in the armenian public believes 52—56).

12 **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 514—517 (pages 57—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(FEVRIER 1981)

1. **Père Zatik Avétikian**—„La commémoration de la Journée de saint Vardan au Saint-Siège". Dans son article l'auteur décrit les cérémonies religieuses et les festivités qui ont eu lieu le 26 février 1981 dans la cathédrale de Saint-Etchmiadzine et dans la grande salle de la Résidence Patriarcale et qui ont été conscrées à la mémoire de saint Vardan et de ses compagnons (pages 3—10).

2. Description des cérémonies religieuses (célébration de la sainte messe, lecture de l'Encyclique de Sa Sainteté suivie d'une homélie prononcée par le Catholicos de tous les Arméniens) qui ont eu lieu à Erévan, dans l'église Saint-Sarkis, le 8 février 1981 à l'occasion de la nomination de Mgr. Arsen Berbérian comme vicaire patriarcal du diocèse d'Ararat (pages 11—15).

3. Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège" sont publiées de brèves informations concernant la célébration de saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu à Saint-Etchmiadzine au cours du mois de février 1981 (pages 16—17).

4. Solennités déroulées le 26 février 1981 à Léninakan, dans l'église de la Sainte Vierge, à l'occasion de la Journée de saint Vardan (pages 18—19).

5. **Père Anania Arabadjian**—„L'importance de la prière". Sermon prononcé dimanche, le 1er février 1981 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 20—21).

6. **Père Yeznik Pétrossian**—„La Chandeleur ou l'Avènement du Christ au Temple". Etude religieuse consacrée à la fête de la présentation de Notre-Seigneur au Temple de Jérusalem (pages 22—25).

7. **M. Artoun Hatitian**—„Origène d'Alexanprie" (185—254). Dans son étude l'auteur présente la vie, l'héritage littéraire, ainsi que les traductions et publications en arménien des oeuvres du célèbre apologiste (pages 26—34).

Mania Ghazarian—Dans son étude intitulée „Les portes de bois des églises arméniennes du Moyen Age", l'auteur fait la description des portes traditionnelles de certaines églises arméniennes du Moyen Age: la porte du monastère des Apôtres nommée „Targmantchats" dans la ville de Mouche (Arménie Occidentale), celle du monastère de Sévan portant le même nom, la porte de l'église arménienne de Théodosie (en Crimée), celle du monastère de Tatev, celle du monastère Saint-Thomas d'Agoulis, la porte de l'église arménienne de Djoulfa (en Iran), celle de l'église arménienne de Constantinople, celle de la cathédrale de Saint-Etchmiadzine et celle de l'église arménienne Saint-Jacques de Jérusalem (pages 35—43).

9. Nécrologie de l'archevêque Haïrik Asianian, sacristain de l'église arménienne Saint-Jacques de Jérusalem, décédé le 23 février 1981 (pages 44—45).

10. L'étude du professeur Robert Atayan est consacrée au 125e anniversaire de la naissance du célèbre compositeur arménien Makar Ekmalian. Dans son étude l'auteur présente la vie et l'activité musicale du grand compositeur et fait l'analyse de certaines pages de ses créations musicales jusqu'alors inédites (pages 46—51).

11. **M. Aramaïs Gasparian**—„L'abeille et le miel dans les croyances populaires arméniennes„ (pages 52—56).

12. **M. Noubar Mikaelian**—Index des manuscrits que le Saint-Siège d'Etchmiadzine a récemment reçus et placés sous les numéros 514—517 (pages 57—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Միրոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում . . 3
ՅԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Հանդիսություն Երևանի Ս. Սարգիս եկեղեցում . 11
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16
ԿԱՐԻՆԵ ՂԱՎԱՌՅԱՆ—Շիրակի թեմում 18
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Աղոթքի կարևորությունը 20
ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Տեսնընդառաջ կամ քառասնօրեայ գալուստն Քրիստոսի ի տաճարն 22
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Որիգենես Ալեքսանդրացի՝ Եկեղեցու բազմարդյուն վարդապետ 26
ՍԱՆՅԱ ՂԱՋԱՐՅԱՆ—Հայկական միջնադարյան փայտե եկեղեցական դռները . 35
Հանգիստ Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ալպանյանի 44
ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ—Մակար Եկմալյանի և նրա մի քանի նորահայտ բնագրերի մասին 46
ԱՐԱՄԱՅԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ—Մեղուն, մեղրն ու մեղրամոմը մեր ժողովրդական հավատալիքներում 52
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 57
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ՀԱՅԿ ԳՐՈՒՄ
ՀԱՆՐԱՊԵՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26.02.1981 թ.: Ստորագրված է տպագրության 30.03.1981 թ.:
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 163

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1981 թ.